

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ·

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆՈՆԱՑՐ·

ԱՊՍԱՆՏԵՏՐԱԿ 5.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Մուհէյմ-Բաշի Գ· Պախալեանցի, ... 337—360
Լուսինը և նորա ազդեցութիւնը երկրի վերայ, Ս· Նազարեանցի ..... 361—377
Աֆօրիամոպ, Թէոդորոս Լալայեանցի .. .. 377—379
Ազգային ժառանգութիւնը, Մ· Նալբանդեանցի ..... 379—404
Հինգ րոպէ շատ անագան, Ս· Նազարեանցի ..... 405—416
Շիլլերի մի քանի խօսքը, Թ· Լալայեանցի ..... — —

ՄՈՍԿՎԱ·
Imprimerie Gratscheff et Cº.
1859.

ՄԱՑԻՍ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՌԸՆԱՍՈՒՐԱՀՆԵՐ·

—

ՄՈՒՆԱՅՆՂԻՄ-ՐԱՇԻ (*)

ՂՐԻՄԱՆ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (**)

Պարոդ լսանելիոյ մինի ժամանակում, — և այս կարող լսանը էր Մէնկլի Գվրէյ լսանը — այսպէս սկսեց առակախօսը իւր զրոյցը — ապրումէր մի երևելի մոնղէլիմ, որի անունը Սալէհ-էֆէնդի էր: Նորա գերազանց դիտութիւնների համբաւը տարածվեցաւ, ոչ միայն Վլրիմում, այլև ամենայն մահմետական աշխարհներում. նորա նման մոնղէլիմ հազիւ թէ կարելի էր գտանել նոյն իսկ Ստամբօլում: Ես փառքը հասաւ մի խորին, հատարակաց պատիւ դէպ ի Սալէհ էֆէնդին և նորա արժանապատիւ հնոջ Շէրֆէդին, որ նոյնպէս շառաւիղութեամբ առաջ տոհմից, կամ, շատ կարելի է ասել, թէ Մուղայի ցեղից

(*) Մոնղէլիմ-բաշի նշանակում ազգութեան կամ պալատի ատենապետ:

(**) Ստացաւ Ընթերան բառ է և նշանակում առակ: Իսկ մաալէթի, առակախօսող:

(ապիւռ)։ Բայց ոխիտ, Հ. էրզիէն հպարտանալով իւր ազգասոհմով և իւր առուտուր ասպիճանով, շուտով անարգուհացաւ ուրիշ կանայդից, ոչ միայն մեծամեծներին, այլև հասարակ թաղթաղներին կանայքը հաղիւ թէ կարողացան ծածկել, սկզբումը իւրեանց նախանձը, իսկ վերջումը և ատելութիւնը դէպ ի գոռոզ մունէջիմ-բաշու կինը։

Մի և նոյն ժամանակի միջոցում Սալհ էֆէնդու հետ բնակուածէր Խախճապայումը մի աղքատ հայմնալ (բեռնակիր) Մէյն-Ջաձի անունով, որ առաջ ունևոր էր, բայց վերջը աղքատացաւ և հարկադրված էր կառարել բեռնակրի ծանր պաշտօն, թէպէտ դրամով և, դժուարութեամբ կարողանում էր դրամանել օրական հացը իւր և ընտանիքի համար։ Աղքատի բաղդից նորա գերդաստանը մեծ չէր. նա էր և կինը Մէնկլիճէն, որ դեռ չէր բոլորովին ծեր և տգեղ, և ոչ հասարակ թաղթալ աղջիկ, այլ մի էֆէնդու դուստր։ Մէյն Ջաձին առանց սրանքից աւելորդ աղքատութեան, ոչ մի անգամ բեռնաւորուածէր նա իւր ուսերը շատ խիստ բեռներով, օրական ապրուստը միայն վաստակելու։ Ընդէն վաղուց — դաղարից նա մտածել իւր վիճակի փոփոխութեան վերայ, և առաւել հարստութեան դիւտի, և ինչպէս ձիշդ մահմեդական, իւր հանգստի բոպէներում ջերմեռանդ կրկնուածէր. «Ալլահ վէրդի, Ալլահ ալլի — շուքուր Ալլահա» (Աստուած տուից, Աստուած առաւ, — փառք Աստուծոյ)։ Ոչ այնպէս էր մտածում Մէնկլիճէն։ Նախանձը ոչ մի վայրկեան չէր տալիս նորան հանգստութիւն։ Նա ամենևին չէր կարող մոքից ձգել իւր առաջին բարօրութիւնը և սովորել տանել աղքատութեան։ Ինչո՞վ վատ է իմ Մէյն Ջաձիս այդ հասատ Սալհ էֆէնդուց և ինչո՞վ վատ եմ ես, Մէնկլիճէս, այդ ծէքծէքվոզ պառաձառպատանքից, Հ. էրզիէից։ «Այս շատ հասարակ հոդեմտնքը ոչ մի անգամ հարկադրուածէին նորան մըտածել այն բանի վերայ, թէ ինչպէս պիտոյ էր ձար դտանել դաւթին, ինչպէս ազատվել իւր անարդ դրութենից։

Մի օր Մէնկլիճէն եկաւ դնաց բաղանիք, բայց նորա չար բաղդից այս պատահումը շատ ուշաւ, որովհետև չունէր ձոխ հագուստներ և ոչ իսկ այլ թանգագին զարդեր որով կարողանար զեղեցիկ զարդարվիլ իւր բարեկամ կանանց առաջև։ Այս անգամ Մէնկլիճէն դնաց մի փոքր վաղ սովորականից, երբ դեռ

քաղաքիքում շատ կանայք չկային, մանաւանդ Հարուստ ունևորների կանայք։ Յետինքը շուտով ժողովեցան և, ինչպէս սովորութիւն էր, սկսեցին իւրեանց անվերջանալի գատողութիւնները, որով միշտ և ամենայն տեղ պատրաստ են սիրով պարապել կանայք։ Մէնկլիզէն նոյնպէս փորձ էր փորձում խառնվիլ հասարակաց խօսակցութեան մէջ, բայց այն խեղճի վերայ համարեա թէ ոչ մինը, մանաւանդ Հարուստ տիկնոջներից, չէր դարձուցանում իւր ուշադրութիւնը։ Ամենքեան և իւրաքանչիւր կին իւր խելք ու միտքը ունէին միայն Շ էրջիէի վերայ, որ այդ տեղ էր և բարձր բարձր խօսում էր բերկրանքից, տեսանելով իւր անձը շրջապատած երևելի կոխուխալից(*) կանանցից այնպիսի համակրութեամբ և ծառայական խոնարհութեամբ։ Մէնկլիզէն սաստիկ շփոթված և վիրաւորված, վերջապէս որոշեց դուրս գնալու բաղանիքից դէպ ի մի հով սենեակ և պատրաստվելու դէպ ի տուն։ Նա արդարև ժամանակ էր տուն դնալու։ Ինչպէս զգումայաւ նա, և փորը ինչ յետոյ դարձաւ դէպ սաստիկ բարկութիւն, երբ որ տեսաւ թէ իւր բոլոր հանդերձքը չամբարից (թաթար կանանց գլխի զարդ) սկսած մինչև բիշմօնը (գենջակ) ձգած էր բաղանիքի նախասենեակի թաց քարայատակի վերայ,

«Այս ինչ յանդգնութիւն է — ազաղակեց նա սպասաւոր Ֆինոջ վերայ։ Ո՞վ համարձակվեցաւ քցրել իմ հանդերձքը։ Մի՞թէ ես չեմ հասուցանում այնքան արծաթ ոսկան ուսիշնները։ Նա՛, ես աչքը կը հանեմ, հա՛ կը թաքեմ նորա սպամարդի մօրուքի վերայ, այժմ ես....» Նա այս տեղ այնպէս յիշոցներ հանեց բերանից, որ սպասաւոր կինը ուշաթափվեցաւ, և այնպէս վախեցաւ, որ առաջին վայրկենումը բոլորովին կորցրեց ինքն իւրեան։ Վերջապէս, մի փորը խելաբեկված, վազեց նա դէպ ի պայտացած Մէնկլիզէն, և մի ձեռքով աշխատելով վահկել նորա բերանը, բայց միւսով հաւաքել քարշ ձգած հանդերձը, սկսեց հանդարտեցնել վիրաւորված կինը, և ասում էր, աչքերը լցուած արտասուքով. «Ախ, իմ սիրելի, իմ աչքի լոյս Մէնկլիզէ, մի՛ բարկանար, Աստուծոյ համար, մի՛ խօսիր այդպէս

(*) Կոփուռխալը նշանակում է սպրտնի պրան ծառայող մարդ, մի խօսքով պալատական պաշտօնեայ։

բարձր, կը լսէ, — այն ժամանակ, ո՜հ, իմ Աստուած· ես և դու մեք արժան չենք պրծնելու: Ահա տեսանում ես, իմ հոգիս, — շատունակից սպասաւոր կինը, մի փոքր կարողանալով ամօթապարտ առնել վերաւորած Մէնկլիզէն այսպիսի հառոզական աղաչանքներով, — ահա տեսանում ես, սիրելիս, այս բանս սրել է մոնէջիմ բաշու կինը, Հ էլճիէն: Ահա եկաւ ամենից վերջը, և ուրիշ տեղ չգտանելով, նա շատ կարելի է ձգած լինի ցած քո հանդերձները .... Վո կենաց համար, սիրելիս, մի բարկանար:» Սպասաւոր կինը նայում էր Մէնկլիզէի վերայ մի այնպիսի աղերսական, արտասուալից աչքով, որ Մէնկլիզէն ակամայ կակղացաւ և շտապով սկսաւ հագնուիլ: Ո՞նչ պիտոյ է առնել: Ա շատացած, համարեա թէ անպզտուած սրտով, որ լցուած էր բարկութեամբ, Մէնկլիզէն դնաց տուն, խոստանալով ինքն իւրեան, որ թաւիլու է իւր չարութեան թոյնը Մէյն Ֆաճուս դլխին, որին համարում էր միշտ պատճառ իւր աղքատութեան և նորա հետ կապակից վշտերի: Մէյն Ֆաճին այս միջոցին տուն էր դալիս, և այս անդամն շատ փոքր վաստակով, որ հազիւ բաւական էր միայն հացի ու բօզաի (1), որոնցից բաղկանում աղքատ ժողովրդի կերակուրը:

— Ահա քեզ, իմ բարի Մէնկլիզէ, ամենը ինչ որ ես կարողացայ այսօր վաստակել, — ասաց աղքատ մարդը, իւր կողակցի նեղս մտածին պէս, և դրեց մի քանի սև փող իւր առաջև պրած տախտակեղէն բարձրութեան (քուրսու) վերայ:

— Հ էլճանին լինի քո ընչին վաստակը — համարեա թէ գոչեց բարկացած կինը· — Միշտ բերում ես մի այնպիսի ընչին բան, որ քո կինը, դուստրը արժանապատ համար Պատրգի — թող վայելէ նա միանձնանաւոր երանութիւն ֆերդաւսի (արքայութեան) մէջ — չէ կարողանում գնել և միջակ թէրլիքներ (2): Դու ոչինչ ես համարում քո կնոջ պատիւը, որին ամենևքեան անպատուում են: Դու ջնջոց ես, և ոչ այլ մարդ, դու··· և սկսեց նկարագրել և ասել այնպիսի յանդիմանութիւններ, որ այն խեղճ, որ մինչև այն ժամանակ միշտ սիրելի կերպով ընդունուու-

---

(1) Բօզա մի խմելիք է, և սորան շատ են գործածում Ղրիմի թաթարները:

(2) Թէրլիք մի տեսակ ոտքի հագնելիք է թաթար կանանց, սահդիանից պատրաստած:

մէր իւր կնոջէն, մնաց կարծես թէ կայծակից զարկուած և նորա առաջին մոռածութիւնը, — բայց ոչ շուտով կարողացաւ նա միտքը դէպ ի գլուխ հաւաքել — եղաւ այն, թէ Մէնկլիզէն խելքը թռուցել է։ Ա՛յս էր միայն պակաս, մոռածումէն նա, իմ աղքատութիւնս։ Ալլահ աքբար, Ալլահ աքբար (մեծ է Աստուած, մեծ է Աստուած) ի՞նչ ասեմ ես այժմ... Վերջապէս համարձակութեամբ սկսաւ նա խօսել։

— Ի՞նչ է պատահել քեզ, Մէնկլիզէ։ Ձի՞նի թէ խելքդ թռուցած լինիս. իմացած եղել կինս, որ ես ջնջոց չեմ, այլ քո ամուսին այրը, քո տէրը և հրամայողը։ Խելքդ գլուխդ ժողովվի, եթէ ոչ... և նա ցոյց տուեց անկիւնումը պրած գաւազանի վերայ։

— Ի՞նչ է պատահել ինձ, հարցնումես դու, անգութ. ամենեքեան ինձ անպատուեցին, այլ դու ամենևին անփոյթ ես... Մէնկլիզէն, ոչինչ չյահվելով իւր յիշողներից սկսաւ, սաստիկ լալ և պատմել ինչ որ նորան պատահել էր բաղանիքումը, թէ ինչպէս անպատիւ արեց նորան մունէջիմ-բաշու կինը։

— Այդ է միայն. սորա համար դու այդպիսի փոքրոլիկ հանեցիր։ Ա՛ա, հա՛։ Ը՛հ, կինն, կինն, — ասաց նա, արձակ շունչ քաշելով վերջապէս, կարծես թէ նորա ուսերից մի ծանր բեռն ցած եկաւ։ Թո՛ղ որ քեզ անպատուէր պրպի Օ՛ջինեքը, կինը այնպիսի հարուստի — համաձայն ինչպէս որ ես, քո թանգագին Մէյն-Ա՛աձին եմ, այդ ուրիշ բան է, խոստովանիր ինքդ. մեք կարող էինք մի բան առնել, բայց կինը բարձրաստիճան մունէջիմ-բաշու, որին, ինչպէս պատմումէն, ինքը մեծ խանը, — թող երկարին նորա օրերը, սաստիկ սիրումէ։ Ա՛նգլատա՛ր, կինն, լա՛ւ է, հոգացիր մի ուտելիք. ես այսօր շատ քաղցած եմ։

— Ա՛ի՛թէ դու չե՞ս այնպիսի այր մարդ, ինչպէս և ձեր բարձրաստիճան մունէջիմ-բաշին, — հարցրեց զարմացած Մէնկլիզէն։

— Լա՛ւ հա՛, հա՛, հա՛։ Ա՛յնպէ՛ս եմ, այլ ոչ այնպէ՛ս։ Նա ուսումնական մարդ է, իսկ ես, իմ ամենիւ գոհարս, չգիտեմ միչև անգամ գրել կարդալ բանել։

Մէյն-Ա՛աձին սկսեց այժմ աւելի ծիծաղել քան թէ լալ։ Սակայն այն ծիծաղը ոչ միայն ցաւացրեց, այլ ևս առաւել բորբոքեց Մէնկլիզէի բարկութիւնը, որ չէր հասկանում

թէ ոչ տաճն մի այլ, ամենայն ժամանակ կամեցածին պէս, կարող է իւր ցանկութիւնը կատարել: Վերջապէս, մի վայրկեան մտածելուց յետոյ, Արծնկիղին ասաց վճռաբար.

— Կանչ դիր, Արծն-Ջաձի, կամ դու պիտոյ է լինիս մունէջիմ-բաշի, կամ բաժանվիր ինձանից: Իմ համբերութիւնս սպրէն հատաւ:

Ոլքան փորձ և փորձից խելքը ապացուցանելու թէ նա ամենևին չունի ընդունակութիւն մունէջիմ լինելու, այնու ամենայնիւ կինը լսել չկամէր. մինչև այն տեղին հասցրեց բանը, որ Արծն-Ջաձին հաւանեցաւ մունէջիմ լինելու: Խեղճ մարդը սիրտմէր իւր կինը և վախենում էր, մի գուցէ իսկապէս որոշէ նա հրաժարվիլ իւրևանից. որովհետև դեռ նա մատաղահաս էր և բաւական սիրուն:

Արծն-Ջաձին, հաւաքելով իւր վերջին քանի մի մանր մունը փողերը, գնաց մուլլայից մի հին գիրք, որ սովորէր «թէֆվիս» (այսպիսի անուն տուեց այն գրքին մուլլան), դվիթ (1), ղալամ, իւր մէջը խնդալով և ընդունելով, խոր մտածող կերպարանք, նստաւ, բազմանդրդ Խախչեասպայի մեծ բանուկ ճանապարհի ծայրումը, այն յոյսով, թէ ով իցէ կը մօտենայ դէպ ի նա խորհուրդ հարցանելու: Բայց նա աղաչումէր Աստուած և նորա մարգարէն, որ ոչ ոք չմօտենայ դէպ ի նա:

Ճաղրից, կամ լաւ է ասել կոյր բաղդից, նա երկար չը նստաւ այն տեղ: Ձանցաւ մի ժամ, նա տեսաւ մի հեւալով գող, որ ուղևորվումէր դէպ ի նա. այն էր մի արաբացի (տայըդ), որին պատահել էր մի տեղում յառաջ, թէև չէր ծանօթ նորա հետ: Արաբացին, ինչպէս կարելի էր նկատել, մի բանով զբաղված էր, կարծես թէ խնդրումէր մի մարդ, և, տեսանելով Արծն-Ջաձուն, ուղիղ մօտեցաւ նորան:

— Սալամ ալէյքում. — «Ալէյքում սալամ». — Ջէյ, էֆէնդիմ, արդեօք դու չէս մունէջիմ. — «մունէջիմ»: — Ճնորհ արա, էֆէնդիմ, չէս կարող ասել ինձ, թէ ուր են իմ ուղտերս: Ջաղիս թէ կարողացայ քաղաք մտանել և դնալ բոզպայի տունը, ծարաւս հանգստացնելու, յետ եմ գալիս դէպ ի մաճառս, և ահա չքացել էին նորա:

---

(1) Դվիթ է երկայն կաղամար պղնձից շինած:

— Ո՛վ են քո ուղեկիցը։ Հըմ.... կ՚ասեմ.... բայց....

Հէյ, էֆէնդի՛մ։ Թող Ալլահը քո օրը երկայն առնէ։ Նա մի աղքատ սայլապան է՛մ։ Ա՛ռ, որ տեղ են ուզեցար, և նա երթէք մոռանալու չէ՛մ քո բարեկամութիւնը։

Այս ասելով խեղճ սայլապանը մի քանի դրամ դրեց Մէյն-Հաճու ձեռքը։

Փողը յիմարին իմաստուն է շինում, և սրա հակառակ, իմաստունին յիմար։ Մէյն-Հաճին յիմար չէր, նա բարի էր և հաւատարիմ։ Սակայն փողը նորան ևս հրապուրեց։ Ձփոխելով իւր խոր մտածող կերպարանքը, բացեց և դիրքը, ուր — թող մեր մէջ ինայ խօսքը, — մի բառ ևս չէր հասկանում, ծանրաշարժ հանեց դիմիթը գօտուց, առաւ ղալամը, պատառեց մի կոտոր յստակ թուղթ և սկսեց գծել այլ և այլ քարաքուղիր (շառաս երիվարներ), ամէն մի վայրկեան դրքի մէջ և ինքն իւր մէջ փսփսալով դաղտնաճաճանչ բառեր։ Երբեմն հայհոյում իւր անձը, երբեմն իւր կինը, մանաւանդ թէ կինը որ հարկադրել էր նորան մտնէջքիմ լինել։ Այս շարունակվեցաւ համարեա թէ կէս ժամ, և, ինչպէս երևեցաւ, սայլապանի համբերութիւնը սկսաւ հատանել։ Մէյն-Հաճին նկատեց այդ բանը, բայց այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ ոչինչ չէր նկատում։ Վերջապէս, գծելով ևս քանի չափ քարաքուղիր, և նայելով դէպ ի երկինք, բարձր ասելով «Ալլահու ալբայդ» տուեց այս պատասխանը. — գնա՛ դէպ ի հէքիմը (բժիշկ), ա՛ռ նորանից դեղ (ասաց դեղի անունը), և խմիր, այնուհետև կը գտանես քո ուղեկիցը։ Սայլապանը թէպէտև տրտում էր պատահած անբաղդութեան վերայ, այնու ամենայնիւ չէր կարող չժպտել, լսելով նմանապէս ծիծաղելի մտնէջքիմի խորհուրդը։ Մէյն-Հաճին նկատեց և այս ժպիտը, թէպէտև անպատասխան նայուածքի դրքի մէջ։

— Ո՞նչ յիմարութիւն դուրս է տալիս մտնէջքիմը։ — մրմնջեց սայլապանը։ Իմ ստամոքսը բոլորովին չէ ցաւում և մարսումն կերպով շատ դեղերիկ, իսկ նա խորհուրդ է տալիս ինձ դեղ խմել, ստամոքս մաքրելու համար։ Այդ խելքը վերա՞ն է։ Տեսանենք, նա մտնէջքիմ է։

Տեսանելով որ նա պատուական մարդ է, Մէյն-Հաճին աւելի ուշադրութեամբ շարունակեց իւր ընթերցանութիւնը, և հոգոց հանեց շատ ջերմեռանդ կերպով ձգելով թուղթերը

(աէր ողորմեան) և բարձր ապաստանելով Աստուածոյ իննամուն ինն անուանը, այլև յանձն առաւ կատարել այն ծիծաղելի խորհուրդը: Ուռանց ժամանակ կորուսանելու վազեց դնաց նա հէքիմի մօտ (1), որի խանութը հեռու չէր, գնեց Մէյն-Էաճուց պատուիրած դեղը և իսկոյն խմեց: Դեղը սկսաւ շատ շուտով նեղդոցել, և խեղճ սոլլասպանը հարկադրուած էր թաքչել այնպիսի նեղ փողոցներում, ուր սակաւ էր մարդերի անցու դարձը.... Ինչպէս զարմացաւ նա, երբ դեղը ընդունելուց մի ժամ յետոյ, մի նոյնպիսի նեղ փողոցում տեսաւ իւր ուղտերը կապած մի սիմնի վերայ.... Նորա առաջին գործը եղաւ արձակել ուղտերը և տանել իւր քարավանից: Այսպէս ևս արեց նա: Ուղտերը, իրր ուրախացած, տեսանելով իւրեանց տէրը, չէին քայլում, այլ համարեա թէ վազումէին իւրեանց կոպիտ վազուածքով: Սոլլասպանը վազից ուղղակի դէպ ի մունէջիմը, պատմելով պատահող ծանօթներին իւր ուղտերի գտանվիլը, և առատապէս սփռեց իւրեան խնդութիւն պատճառողին:

Մէյն-Էաճին, լսելով փողերի հետ հազար օրհնութիւններ, — բայց նորա ստացած արծաթը հաւասարվումէր իւր, մի շաբաթի մէջ արուեստով աշխատած վաստակին, — ոչ այնպէս ուրախ սրտով տուն դնաց, և ամենևին ուրախութիւն չէր ըզգում Մէնկլիղէն, որ պատմեց արդէն դրացի կանանց թէ իւր մարդը դիտաւորութեամբ միայն ցոյց էր տալիս իւրեան համնալ, բայց իսկութեամբ մունէջիմ է և վերջապէս սկսաւ սպասել այս ամենիւ պաշտօնին: Դրացի կանայքը և ամենքեան առհասարակ, որ միայն կարողանումէին լսել նոր մունէջիմի մասին, առանց կասկածանքի հաւատացին այդ զրոյցին: Պէտք է ասել այն ևս, որ ոչ մի ազդ կարող չէ այնպէս շուտով տարածել մի նոր լուր, թէև սուտ լինէր դա, ինչպէս մեր Գրիմի Յաթարնները, — միայն թէ լինէր նոր համբաւ: Նրանք նշանաւոր էին սրանով և նշանաւոր են այժմ ևս: Այս պատճառով Մէյն-Էաճին չպարտմացաւ ևս, երբ միւս օրը իմ սոլլասպանին պատահած անցքը պատմելուց յետոյ, սկսան գալ տոյտ մօտ, միմեանց քամակից, այցելունել հարցանելու նորանից, թէ ինչպէս պէտք էր գտանել մի կրծուած բան, և դեղը խնդրել այս կամ այն ցաւի:

---

(1) Հէքիմ, նշանակում է այս տեղ բժշկական դեղեր վաճառող:

Մէյն-Էաձին զգալի կերպով պահպանվումէր բաղդի երեսից, որ երկար ժամանակ նորա համար, կարծես թէ, անզօրի խորհրդական էր: Ամենեցուն և ամեն մինի սիրտը աշխատումէր նա շահել, և, որպէս պատիւ նորա նոր անուանակոչութեան, դառն նախագուշակութիւնները մինը կամ երկուքը չէին կատարվում: Մէնկլիզէն մեծ ուրախութեան մէջ էր և անչափ զարմանումէր այն բանի վերայ միայն, որ Մէյն-Էաձին նորա ուրախութեանը մասնակից չէ լինում, այլ անդադար տրտում էր, անխօս, և առաւել շատանումէր նորա տհաճութիւնը, երբ որ նորա մօտ դալիս էր մինը խորհուրդ հարցանելու:

— Ա՛ղ կամ անագան, մտածումէր նա ինքը իւր մէջ, թէ խաբէութիւնը կը յայտնվի, ամենքեան կ՚իմանան, թէ ինչպէս մունէջիմ էի ես, և այն ժամանակ.... Ո՛հ, կին, կին. դու իմ դլխիս վա՜յ բերեցիր:

Նորա հակառակ շատ ուրախացած Մէնկլիզէն մտածումէր, որ իւր տղամարդը հոդացել է նորա համար թանգագին հագուստներ, ֆարաջի թանգագին դիպակից, դուշագ (գօտի), և վերջապէս, նորա վերջին ցանկութիւնն էր արծաթեայ բիլէզիքներ (ապարանջան): Այժմ դտանելով հաճութիւն ամենայն բանում, ախոռումէր նա թէ ինչու յառաջուց նորա միտքը չեկաւ Մէյն-Էաճուն հարկադրելու մունէջիմ լինել: Այժմ նորան պակաս էր մի բան միայն, և այս բանի վերայ մեծ ուրախութեամբ մտածումէր, այսինքն. եթէ Ալլահը նորա բարօրութիւնը լիակատար առնելու համար, շնորհէր նորան մի որդի... ցանկութիւն, որ բոլորվին ներելի է մի կնամարդի, մանաւանդ մի մանուկ կնամարդի բնչպէս իսկ Մէնկլիզէն էր:

Այդ միջոցին Խաչէհասարայում պատահեցաւ մի ահաւոր անցք, որ բոլոր մոլրաքաղաքը վրդովեց: Ծերունիքը և մատաղահասները լռութեան կնիք դրեցին իւրեանց շրթունքի վերայ, և եթէ խօսումէին միմեանց հետ, լինումէր դա ոչ այլապէս, քան թէ վախալով: Խռովութիւնը շատ սաստիկ ու ահաւոր էր, նաև խօսակցութիւնքը ըստ մեծի մասին ոչ այլ ինչ էին, եթէ ոչ միանման ձայն զարմանքի, խառն ահ ու դողի և հիծծանքի հետ: Յատուկ արարողական դանձարանից դողացած էր թանկագին մատանին խանի իշխանական նշանով: Խանի աչքումը այդ դանձը դին չունէր, և ամենայն բանագէտ մոլրիկ ատումէին,

*թէ միայն քուհի նուրը «լուսի սար»», անունով յայտնի աղամանդը կարող է գերազանցել Մէհնկլի Գիլիէլի մատանին։ Վա՛յ, վա՛յ։ Գոժուարի՛ն է պատմել թէ ո՛րպիսի դրութեան մէջ էր մայրաքաղաքը, մանաւանդ խանի պալատը և ալքունիքը։ Ամենախիստ հսկց ու խնդիրքը այդ մասին մեացին ամենևին անօգուտ։ Խանը հրամայեց դիւանին ժողովիլ։ Ժողովեցան ամենայն բէյլերբը, ամենայն խմաստուններ,— երկար ժամանակ խօսուեցին, խակ աւելի մտածուեցին. բայց երբ որ ոչինչ չկարողացան առնել, այն ժամանակ դարձան դէպ ի մունէջիմ-բաշին, որ ամենից առաւել պատիւ ունէր։ Այս նատած էր այս տեղ և որպէս խմաստուններից խմաստունը, մի խօսք բերանից հանած չէր։ Ամենայն բանի մէջ հետեւուեր սորան Մուֆթի էֆէնդին, միա դնելով այն խելացի ալաբացի առածին. «Պալը ուլ ահմադա ֆի ֆիհի վա լեսան ուլ ակիլը ֆի կալբիհի». այսինքն «Հիմարի սիրտը բերանումն է, խակ խոհեմի լեզուն նորա սրտումը։» Բայց Սալհ խմաստունը լսելով դիւանի վճիռը, նախ և յառաջ ցանկանուեր սրտումը, որ բարձրաստիճան ուլեմաներբը գերծին մտանեն, և նոյնպէս կամենուեր մոքումը թաքել ոչ թէ միայն բոլոր ներկայ գտանվողներին մօրուքի, այլ և նոցա նախահարց մօրուքի վերայ. սակայն ամրացնելով սիրտը. թէև ցոյց չտալով որպէս թէ այդ վճիռը ամենևին հաւանելի չէր նորան, հանապազորդից իւր խոր լուսթեան մէջ։ Թէև Խանը ներկայ չէր դիւանում, բայց ամենայն ինչ, որ պատահուեր այն տեղ, տեսանում ու լսուեր նա իւր տարայի վերին օթեւաններից, նրստելով հառաչեաց թէ նոյն խակ դիւանի վերայ մի փոքրիկ կիսամուխ սենեակում, մի ձորտատ վանդակի մօտ, որ գնուեր միևնէն դիւանը։ Այս վանդակի միջից կարող էր Խանը տեսանել և լսել ամեն ինչ, որ լինուեր դիւանում, բայց նորան ոչ ոք չէր տեսանում։

Սակայն Սալհ էֆէնդին, որչափ և լուռ մնար, պարտ էր հաւանութիւն տալ մատանու գողացողը որոնելու իւր հնարագիտութեան զօրութեամբ, կամ եթէ կարելի էր հրաժարվիլ և առաջարկել ուրիշ առաւել յարմար ձանապարհ։ Բայց սորանից, նա շատ լաւ գիտէր, որ Խանը ակամբ էր դնում դիւանի վճռին, և, ժողովելով հոդու ամենայն զօրութիւնը, վեր կացաւ տեղից, և շրիալով իւր փառաւոր մօրուքը, ասաց վերջապէս.

«Համառոտն դիւանը — Թող պահպանէ նորան Ալլահը. — չէ սխալվում: Ատեղաբանութեան մեծ գիտութեան օգնութեամբը կարելի է երբեմն, (վերջին բառը արտասանեց շատ ցած ձայնով) իմանալ ծածուկ գաղտնիքը: Ահաւ սկիզբը, ինչպէս տեսանում էք, չէր վատ, և բարձրաստիճան դիւանի անդամքը, որպէս նշան ուրախութեան, շփեցին իւրեանց մօրուքները: «Սահայն....» — այս տեղ նորա ձայնը սկսաւ յայտնի թուլանալ, — «սահայն դեռ երեկ, բոլոր դիշերը նստած էի պալատական ջահիւս մինարէթումը (Ալէհ էֆէնդին սուտ ասեց), հալոցրեցի աստղերից. բայց նոքա, աւաղ — իմ սիրտը «քեաբաբ» (խորոված) դարձաւ, — ոչինչ հասատատ բան չասացին ինձ:» Ժողովի անդամքը քիթերը կախեցին: «Ես խնդրումեմ» — խօսքը յառաջ տարաւ Ալէհ Էֆէնդին, — «ես խնդրումեմ, բարձրաստիճան դիւան, առաջարկել մեր ամենազօր և ամենիմաստ իշխանապետին, — Թող պայծառանայ նորա աստղերը երկրի վերայ — հրամայել ժողովելու մունէջիմները իւր բոլոր թագաւորութենից: Կարող է պատահիլ, որ մինը իմանայ մի ուրիշ առանձին բան իմ դիտութեանս մէջ, որ ինձ յայտնի չէ, և այդպէս կը դտանէ Խանի դանձը գողացողին:

— Փէք էի, փէք էի (շատ բարի, շատ բարի), — դոչեց բոլոր ժողովը, բացի մեծ Ջուպուքչուց, որ, ինչպէս երևումէր, ամենևին մասնակից չէր դիւանի մէջ եղած խօսակցութիւններին, բայց այս տեղ, առանց շտապի, ծանրաշարժ վեր կենալով տեղից, իւր մարմնի թանձրութեան պատճառով, և ամբիսածութեամբ պարզվելով դէպ ի այն կողմը, ուր կարծումէր թէ Խանը բազմած է, ասաց.

— Ո՞նչ սէտք է, մունէջիմները ժողովել: Թանկ է ժամանակը, և առաւել ևս թանկագին է մեր ամենիմաստ իշխանապետի հանդիստը, — Թող երկարին նորա բարօրութեան օրերը: Այս տեղ մայրաքաղաքումը մի մունէջիմ կայ, որին ամենայն բան յայտնի է, որ և, ինչպէս կարծիք ունիմ, կը կարողանայ դտանել Թանկագին մատանու դողը:

— Ո՞վ է դա, որ. չլինի՞ Ահէն Ֆաձին, այն անարդ համմալը — հարցրեց Ալէհ Էֆէնդին, որ դժուարանումէր լսել նոր մունէջիմի անունը:

— Այնպէս կը լինի, անարդ համմալ — պատասխանեց մեծ

Ձուբուքչին։ Դուք այդպէս էք մտածում, պատուական էֆէնդի, իսկ ես,— խօսքը յառաջ տարաւ նա,— յոյս ունիմ և համոզուած եմ թէ ստուգապէս դիտեմ, որ Մէյն-Էաձի էֆէնդին մեծ մունէջիմ է։

— Դուք ցեխոտումէք մեր մօրուքները, էֆէնդիմ,— նորից վեր կաւաւ խօսքը մունէջիմ բաշին, և հազիւ թէ կարողացաւ զսպել իւր անձը, որ չթքէ խօսողի երեսին։ Ա՛յձը արդէն պիտոյ է վառվէր, բայց այն միջոցին ներս մտաւ կախուխալխից մինը, և յայտնեց, թէ ուղղափառների իշխանապետը հրամայեց կոչելու (գանչելու) Մէյն Էաձի էֆէնդի մունէջիմին։

Ընկալ է թէ իսկապէս ամենայն ինչ լսեց Խանը։

Ինչ ասած է, պիտոյ է կատարվի։ Մի րոպէի մէջ մի քանի պալատական սպասաւորք վազեցին Մէյն-Էաձի էֆէնդին գտնելու։ Ի՞նչ դործի վերայ է նա։ Կայտած էր իւր դեռ ևս աղքատին և անպատճոյճ տան մէջ, թաթաք քարշելով մի կարճ չիբուխից, և մտածումէր թէ ինչպէս լաւ էր մունէջիմ լինել, և ինչպէս վատ էր լինել այնպիսի մունէջիմ, ինչպէս որ ինքն է։ Այս րոպէին լսվեցաւ պրան զարկուածի ձայն և սոլանից յետոյ վազելով ներս մտաւ նորա մօտ կախուխալխից մի մարդ և յայտնեց, թէ նորան պահանջումէ իւր մօտ ուղղափառների իշխանապետը։

Այծակի զարկելը այնքան զարհուրելի չէր թուենու նորան, որքան զարհուրեցրեց նորան այս նոր համբաւը։ Յառաջուց չըհաւատաց Մէյն Էաձին և մտածումէր, թէ կախուխալխը չասաց այն բանը, ինչ որ նա լսեց։ բայց ուղարկած մարդը, տեսանելով մունէջիմի խռովութիւնը, նորից կրկնեց Խանի հրամանը։ Գալիս եմ,— ասաց նա,— իսկ նոյն միջոցին չորս կողմն էր նայում, արդեօք կարելի չէր մի տեղ թաքչիլ, կամ թէ դեռևի տակ անցանել։ Նորա անբարդութենից, կախուխալխը զգաստութեամբ գնաց նորա քամակից, և, խմաստասիրելով նորա դէմքի վերայ նկատուած անհամբերութենից, որ ծածուկ չմնաց Մէյն Էաձու ուշադրութենից, յանդուգն դիտաւորութիւն ունէր նա բռնութեամբ տանել սորան։

Ընդ երբ եկաւ իմ ժամը, մտածեց Մէյն Էաձին։ Խոշտ, խոշտ Մէյն Էաձի։ Ընդ, կի՞ն, անբարդութիւնը քո գլխիդ կը դայ։

— Ը՛ա, գնում ենք, — երբ որ յուղոյ կախումալիսը, նորից ասած էր, դէ՛ւ ես Մէյն Ը՛ամին մունէջիմը:

— Ը՛ա, ես.... Ուղղափառների իշխանապետի կամքը սուրբ է նորա չնչին ծառաներից մինի համար.... Գնում ե՛նք: — Մնաս բարեաւ, Մէնկլիզէ, ասաց մոքրումը Մէյն Ը՛ամին, և կարծես վերջին անգամ բարեաւ ճնաս ասելով իւր ամուսնուն և իւր կեանքին, դուրս ելաւ. բայց որովհետև խանի սպասը հեռու չէր, նոքա շուտով տեղ հասան:

Յայտնեցին Մէյն-Ը՛ամու գալը, և խանը իսկոյն հրամայեց ներս բերել նորան:

— Դէ՛ւ ես մունէջիմը, հարցրեց խանը, որ անհամբեր սրտով սպասում էր նորա գալուն:

— Կաս եմ, փառիշահ, — պատասխանեց նա, որին վերաբերվում էին այս խօսքերը, և ընկաւ ահեղաւեսիլ թագաւորի ոտքերը, բայց աւելի այն խորհրդով, որ ինչքան հնարին է ծածկէր իւր երկիւղը, որ պատճառել էր նորան ուղղափառների իշխանապետի տեսութիւնը, որովհետև նա առաջին անգամ իւր կեանքում տեսանում էր նորան:

— Ը՛րամայուեմ քեզ, — շարունակեց խանը — գտանել իմ թանկագին մատանու գողը. գիտէ՞ ոչ, — վա՛յ քեզ: — Ասելով այս բառերը, որ բոլորովին զարհուրանք բերեցին այն թշուառականի վերայ, խանը հրամայեց նորան ոտքի կանգնել: Մէյն Ը՛ամին, դլխիվայր սպարկած լինելով, կարողացաւ փոքր ինչ զօրութիւն ժողովել նորից: Մահու երկիւղը պարզուամ մարդուս նոր ոյժ: Մունէջիմը յանձն առաւ լանգրել իւր համար ինչքան և իրէ ժամանակ վայելելու կեանքի քաղցրութիւնները, որ մնացանդ այժմ թվումէին հազարապատիկ դեղեցիկ նորա համար, քան թէ յառաջ:

— Խաշ բէնիմ, դըլեճ սէնին, փադիշահմ (դլուխը իմն է, սուրը քոնը, թագաւոր իմ), — պատասխանեց խոնարհաբար Մէյն Ը՛ամին: — Գիտէ՞ քո ամենաչնչին ծառայիդ ժամանակ կը տուած, գոնէ քառասուն օր, այնուհետև կարելի է Ալլահի զօրութեամբ գտանել կորուստը: Մէյն Ը՛ամին նորից ընկաւ գետին, վախենալով տեսանել խանի ահեղ կերպարանքը:

Մէնկլի Գվրէյը բարձրացնելով յօնքերը, որ սպասավերցրեց բոլոր, այն տեղ նկատեց ոսկեծաղիկ պալատականները, ուսումի տակից

յայտնեց իւր հաւանութիւնը մունէջլիին ժամանակ տալու մասին և հրամայեց հեռանալ սորան։

Տխուր, կարծես թէ մահով դատապարտուած, դնաց տուն Մէյն Էամին։ Ալդիւօք մնաճոռմէր նա մի բանի վերայ, տուն գրնալու միջոցին, դժուարին է ասել, միայն թէ նա երևոյթէր անչափ տխուր, այնպէս որ ուշադիր չեղաւ այն ողջունատուութիւանը, որով հանդիպուէին նորան բարեկամները և անծանօթները։ «Ի՞նչ շուտ հպարտացաւ» — ասուէին մի քանի մարդիկ, — գեռ ևս մի անգամ միայն եղած է դա խանի ատեայումը։ Ի՞նչ կը լինի վերջը։» Դռան դռնապի մօտ յառաջ դնաց նորան ուրախ Մէնկլիզէն։ Ի՛նչ նոր բան ունես ասելու, իմ անգին խոճա։ Ի՞նչ բաշխեց քեզ մեծ խանը։» և սկսաւ առաջարկել հարցմունք հարցմունքի վերայ։

— Գնա շէյթանի մօտ, — կամ մի այլպիսի բան ասաց Մէյն Էամին, և, որովհետև գիշերը մնաճոռմէր, շուտով ընթրիք ուտելով, հանգստացաւ, մի բան չխօսած Մէնկլիզէի հետ որ, ըստ սովորութեան, կարող չէր չցաւեցնել սիրտը հետաքրքիր Մէնկլիզէի, որ ցանկանուէր իմանալ գոնէ խանատային լուրերից մինը։ Վշտած էր Մէյն Էամին։ Ա՛յ. բոլոր գիշերը դլորուէր նա դօշակի (մահճի) մէջ, այնու ամենայնիւ գիշերը շատ կարճ թուեցաւ նորան։

Վաղատուն օրերից մինը եկաւ։

Մէյն Էամին խորին մտածողութեան մէջ ընկղմած, նստած էր բոլոր օրը անխօս, և բերած կերակուրին ևս ամենևին ձեռք չմխեց։ Մի կամ երկու անգամ դուրս ելաւ տանից և նայուէր պարզ ու յստակ երկնքի վերայ։ Դիցուք նա խորհուրդ էր առնում աստղերի հետ, բայց այդ ցերեկով էր, և աստղերը երևուէին միայն գիշերով։

Ամենևին որ Մէյն Էամին կը մտածէր իւր վատ դրութեան վերայ, տեսանենք, ի՞նչ է լինում նորա իսկ խանատային մէջ։ Ընդհատ է խօսել այն բանի վերայ, որ Մէյն-Էամուն տուած յանձնարարութեան լուրը, թանկարդին մատանու գողը դտանելու մասին, կայծակի արագութեամբ տարածվեցաւ բոլոր խանատային օթևաններում. ևս տուաւ շուտով իմանալ ամենքեան համբաւը, որ Մէյն Էամին հատուցանելէս յայտնեց, թէ գտանելու է գողին։ Պալատից այս նոր լուրը նմանապէս շուտով տարած-

ուեցաւ բոլոր մայրաքաղաքում, և իւրաքանչիւր մարդ, ով ըզդումէր իւր վերայ փոքր ինչ մեղք, ակամայ մոռածմունքի մէջ էր ընկնում և յայտնքով պատաբերումէր մունէջիմի անունը: Ամենքեան այժմ սկան նորան էֆէնդի կոչել մինչև անգամ:

Այս ասացի որ ամենքեան. ամեն մի մարդ, որ միայն զգուռմէր իւր վերայ փոքր ինչ մեղք թէ յանիշատակել էր օտարի սեփականութիւնը, ակամայ կամքով զողզողումէր, բայց ամենից առաւել զողումէին պալատականները, որ թուով իսկ և իսկ քառասուն էին: Նոքա կափուչի-բաշու հաւանութեամբ միաբանվեցան զողանալու, և իսկապէս ալմաղեայ հինքը զողացան այն օրին, երբ Մէհի Ֆանճին պալատ կոչեցին. խորհուրդ արեցին այդ մատանին ծախելու մի Ֆայի, որ, կարծես թէ գիտութեամբ, այն ժամանակին Կաղչխաբայումը չէր: Ֆայը, ինչպէս խորամանկ վաճառական, որ պիտոյ է շուտով գնար Վէնիզ (այժմ Թէոդոսիա) և այն տեղից Ստամբօլ, որովհետև բոլոր բանը յայտնի էր նորան, ի հարկէ կը յօժարանար տալ նոցա բաւական արծաթ, իսկ մատանին կարող էր նա ծախել Ստամբօլի մէջ: Այս Ֆայի բացակայութիւնը արգելք եղաւ նոցա, այդպիսի յարմար մոռածած խորհրդի կատարվելուն: Ողջ դիշերը յանցաւորները խորհրդի մէջ էին, թէ ինչ հնարքով ազատվին, եթէ կը պատահէր, որ յանկարծ մունէջիմը կարողանար նոցա զողութիւնը յայտնել: Այս մոռածելու ժամանակին արիւնը սառեցաւ նոցա բոլորի երակներում և փոքր մնաց որ հոգիները ասանդին: Եթէ յայտնուէր նոցա մահապարտութիւնը, — մահը նոցա առաջև էր. և նոքա վճռեցին հետամուտ լինել Մէհի Ֆաճու ամեն մի գործին, և մանաւանդ դիշերը, կարծելով, թէ դիշերային պահուն նա զանազան կախարդութիւններ է առնում. և սահմանեցին կարդով ականջ դնել նորան պատուհանի տակից կամ մի ծածուկ տեղից. և այս կերպով այն երկիւղալի վտանգը, առաջքը փակել: Չդիտցին վճռակ. նոյն քառասուն յանցաւորներից մինին վճռակվեցաւ գնալ դիշերամոտքին լսելու պատուհանի տակից թէ ինչ է գործում Մէհի Ֆաճին: Եւ այսպէս, դիշերը վերայ հասաւ, գնաց նա, և անցանելով ցած պատի վերայից, որով փակած էր Ֆաճու փոքր դաւիթը, զգոյշ ու կամաց մօտեցաւ այն պատուհանին, ուր լսես էր երևում, և կարծումէր թէ մունէջիմը նստած է, և սկսաւ ականջ դնել:

Այս ժամանակին, խեղճ մռայլածին աստղագէտը, ողջ օրը, ինչպէս ասացի վերևում, պատմութենից դեռ ևս ոչինչ կերած չէր, կամեցաւ փոքր ինչ ուտել, որ սովածութենից չմեռանի։

Ո՞ւհ, կի՛ն, — ասաց նա, — դանչելով Մէնկլիզէն, որ մի բան էր պատրաստում խոհանոցի վառարանի մօտ, — ահա քառասունից մինը անց կացաւ, բոլոր ընթրիքը։ Այս խօսքերը ասաց նա իսկոյն, երբ ականջ դնող կախուխալիքը, չլսելով ոչ մի բան պատուհանի տակից, մօտեցաւ միւսին և իսկ ու իսկ այն պատուհանին, որի մօտ նստած էր Մէյն Ֆաձին։ Գողը այնպէս թուաւ պատուհանի մօտից որ, կարծես թէ մինը նորա գլխի վերայ եռացրած ջուր աճեց, կատուից սրագ թռչկոտեց նա պատի վերայից, և շտապով վազեց պատմելու իւր ընկերներին, ինչ որ նա լսեց։ Պարզ երևում է, որ Մէյն Ֆաձին այդ բանը ասաց քառասուն օրերից մինի համար, որ անցաւ. բայց գողը կարծեց թէ այդ խօսքերը վերաբերվում էին իւրեան և իւր ընկերներին, որ Թանկագին մատանու գողերն էին։

Ոմանք հաւատացին, ոմանք ևս մօտ էին հաւատ ընծայելու, և ամենքեան արդէն պատրաստ էին յանձն առնուլ մի ահաւոր գործ, միայն թէ կարողանային իւրեանց անձը ազատել խայտառակութենից։ կախուջի-բաշին միայն հաւատ չէր ընծայում և նորա պահանջելովը որոշեցին, որ մի այլ մարդ վաղուր դնայ ականջ դնելու մռնէջիի պատուհանի տակից, և այս պատճառով ընտրեցին համարձակներից և պատիանելից մինին։ կախուջի-բաշին հաստատում էր, թէ առաջին դնացողին միայն այնպիսի ձայն լսուեցաւ։

Միւս օրը անցաւ Մէյն-Ֆաձու համար նոյնպէս տխուր ցաւով, բայց աւելի շատ քան թէ առաջինը։ Այժմ աւելի սաստիկ վշտացած լինելով քան թէ յառաջուց, ոչ ոքի այցելութիւն ընդունում չէր, այլև մինչև անգամ կերակրից ևս ամենևին հրաժարվեցաւ։ Ամբոխ դրացիները խօսում էին, թէ մռնէջիի պարտապում ցնդաղան կախարդական բաներից։ Նկատ երևկոն, և ապա գիշերը։ Մէյն Ֆաձին դադց իւր քաղցածութիւնը, և իւր մօտ գանչելով Մէնկլիզէն, հրամայեց նորան բերել ընթրիք, և իմաց տուեց թէ «ահա քառասունից երկրորդը անցաւ։» Դարձեալ պատահեցաւ այնպէս, որ այս բառերի ասելու

միջոցին ականջ դնողը անց էր կենում այն պատուհանի տակից, որի մոտ նստած էր Մէյն Ջաձին, և պատց բարձր ձայնով։

«Ո՞վ էյթաներ ինքը նստած է այս մունէջխմի մէջ» մտածից ականջ կախողը, և, առաւել վախեցած քան թէ իւր ընկերը, վազեց պատմելու ընկերներին իւր բոլոր լսածը։

— Ո՞նչ շէյթան է, — ասաց կախուջի բաշին։ — Ձլինի՞ թէ մեզանից մինը մատնեց մեզ։ Սակայն ամենևքեան երդում կերան, թէ ոչ ոք նոցանից չէ մատնել իւր ընկերները։ Ի՞նչ պիտոյ է առնել։ որոշեցին ուղարկել մի երրորդ մարդ որին պատահեցաւ մի և նոյնը, ինչ որ միւս երկրորդին պատահել էր։ Այնժամ Մէյն Ջաձին համարումէր իւր կեանքի վերջին օրերը, իսկ գողերը կարծեցին, թէ նա մին մին գիտէ աւելն մինին առանձին։ Բոլոր գող պալատականները այս բանիս կատարեալ հաւատ էին ընծայում, միայն կախուջի բաշին կասկածումէր դէռ և, և յանձն առաւ չորրորդ օրի գիշերին ինքը գնալ Մէյն Ջաձու տան մօտ, տանելով իւր հետ և այն երեք կախուխալները, որ արդէն ականջ էին դրած կախարդի պատուհանի տակ, որ և բերել էին մի համբաւ, ամենեցուն համար ղարհուրելի։

Այրը որ մշնացաւ, չորսը միասին գնացին Մէյն Ջաձու տան մօտ, զգուշութեամբ անցան պատի վերայով, այնպէս որ նորանց ոչ ոք չտեսաւ, և մօտեցան միւս երեքի համար սպրդէն ծանօթ պատուհանին և ի՞նչ լսեցին, «Ոչ, կի՞ն, — լսուեցաւ մի տըրտունջ ձայն տան մէջ, — ահա չորրորդը անցաւ, — հա, բե՛ր ընթրիքը։ Այս խօսքերը ասաց Մէյն Ջաձին — այնպէս էր հաճոյ ձևակատարին, — բայց երբ որ կախուջի բաշին անցաւ այն պատուհանի մօտից, որի մօտ կխաբաց հանդստացած էր Մէյն Ջաձին, թէպետև այդ խօսքերը ղարհուրելի էին կախուջի բաշու համար, սակայն սա շփոթմտեցաւ և սկսաւ ականջ դնել, այդհօգ մի ուրիշ բան է ասելու մունէջխմը, և դանչից իւր մօտ մնայեալները, որ միւս պատուհանի տակ կանգնած էին։ Այս միջոցին լսուեցաւ, որ մի մարդ խոհանոցից մտաւ մունէջխմի սենեակը։ Սա էր Մէյնկլիզէն, որ, երևի թէ, կերակուր բերեց։ Դո՞ւ ինչ կ'ասես, իմ կին, — լսուեցաւ Մէյն Ջաձու ձայնը «ահա չորրորդը քառասունից անցաւ. լաւ է միանգամից վերջացնել»։ կինը մի բան պատասխանեց, բայց այնպէս մեղմ ձայնով, որ չէր կարելի մի բան լսել, բայց այնուհետև ոչ ոք ականջ չէր դնում։

Պափուջի բաշին ամենից յառաջ սկսաւ դողդոջալ երկիւղից, իսկ ճռռացածների վերայ չարժէ խօսել։

«Ո՞նչ առնենք, հարցրեց կափուջի բաշին, եթէ նա ամենագետ է։» Ո՞նչ առնենք, նմանապէս ձայն տուեցին նորա ընկերները։ Մէկը կորած ենք։ «Ընդհ ինչ, — խօսքը վեր կալաւ կափուջի-բաշին — մունէջիմը, երևումէ, բարի մարդ է և դեռ այնքան հասուստ չէ։ Եկէք, դնանք այժմ նորա մօտ, խոստովանենք մեր բոլոր սրածը, մի նշանաւոր ընծայ էլ տանք նորան և նէրողութիւն խնդրենք։» Այս խօսքերից յետոյ ամենեքեան որոնց առաջնորդումէր կափուջի բաշին, մտան մունէջիմի մօտ, և ինչպէս խօսք էին տուած միմեանց, մտացածին իմաստունի ոտքը ընկան այս խօսքերով. «Ներսի՛ր, ողորմի՛ր մեզ, ով մեծ մունէջիմ։ Ձշմարիտ է, մեք մեղաւոր ենք Աստծի կնիքը յափշտակելով, բայց մեք միայն չենք, մեք ունենք և ընկերներ։

— Ըհ՛, ես դիտէի որ դուք կը գաք և կը խոստովանէք ինձ ձեր չարագործութիւնը. Որ տեղ են միւսները, Որ տեղ է մնացանին, հարցրեց Մէյն հաճին, հազիւ թէ կարողանալով շունչ առնուլ ուրախութենից, որ ահա ալիսով է վերջ ստանալ այն ամենայն խնդիրը որի վերայ մտածումէր նա այն օրից, երբ յանձն առաւ դէպ ի լոյս հանել Խանի կնիքի գողը։ Ըհա՛յ, պատմեցէք բոլորը ինչ որ եղած է։

Պափուջի բաշին սաստիկ դողալով պատմեց, թէ ինչպէս նորա յափշտակեցին 39 կափուխալների հաւանութեամբ այն թանկագին մնացանին, որ դեռ ևս չէին կարողացել ծախել. բայց վերջացնելով իւր խօսքը, տուեց Մէյն Ըաճուն հարիւր ոսկի, խոստանալով չորեքպատիկ մեծացնել այդ արծաթը, միայն թէ մունէջիմ էֆէնդին չմտանէ նորանց խիստ Խանի ձեռքը։

— Շ՜ատ բարի, շատ բարի, իմ բարեկամներ, — պատասխանեց մտացածին մունէջիմը, որ ուրախութենից կարող չէր հանդըստանալ մի տեղ։ — Ես չար մարդ չեմ, և ոչ ևս չարեացակամ ձեզ, բայց ուր է մնացանին։

— Իմ մօտս է, վերհանձն մունէջիմ էֆէնդի, պատասխանեց տուեց կափուջի բաշին։ Նա ծածուկ տեղ է պահած։

— Յիրաւի, որ ես չար մարդ չեմ, — խօսքը յառաջ տարաւ մունէջիմը, մի փոքր ժամանակ ականջ դնելով, — և ես չարաչար գործ դնելու չեմ Ալահից և նորա մարգարէից ստացած

չնորհքը, թող լինի նորա անունը օրհնեալ, միայն թէ կատարեցէք հրամանս։

Ամեն բան, ամեն բան, ինչ որ դու կամիս, էֆէնդիմի՛ զ, պատասխան տուեցին գողերը միտրան։

— Արեա՛ն լսեցէք։ Առէք Յանի թանկագին կնիքը, և երեսուն ու հինգ օրը անցած իսկապէս, երեսուն և վեցերրորդումը թողէք որ կուլ տայ նորան խանութպանի սագերից մինը, և այդ սագի մի ոտը կոտրեցէք։ Լսումի՞ք։

— Լսումենք, էֆէնդիմիզ։

— Այժմ գնացէք խաղաղութեամբ, և ոչ ոքի խօսք մի՛ ասէք։

Կափուչի բաշին թէև կամէր դեռ ևս խօսել, բայց իմանալով Մէյն Էաձուց, որ միտք չունի զրոյցը շարունակելու աւելի, հեռացաւ իւր ընկերների հետ։ Մէնկլիզէն պահպանելով մուսուլմանների սովորութիւնը, նկարայ չէր դատնաճած այս խօսակցութիւնների միջոցին, և մինչև անգամ չգիտէր, թէ ո՞վ էր եղած նորա պատուելի ամուսնու մօտ։ Այս ի հարկէ Մէյն Էաձու համար օգուտ էր, և ոչ վնաս։ Կին մարդը սովոր չէ լուռ կենալ։

Նոր զբօսութիւն տուաւ Մէյն Էաձին, և երեսուն հինգ օրը անցաւ նորա համար, ինչպէս երեսուն և հինգ ժամ։ Այս ժամանակի միջոցում, նա դիտութեամբ ոչ մի տեղ չէր գնում, ոչ մինին չէր ընդունում իւր մօտ, մինչև անգամ շատ փոքր պրոյց էր տալիս և Մէնկլիզէի հետ, և պրոյցները իսկոյն լուր տարածելին բոլոր քաղաքում, թէ Մէյն Էաձին ամենայն գնշեր խօսակցութիւն ունի ստուանայի հետ։

Վերջ հասաւ քառասնեւրորդ օրը, երբ պիտոյ է վճռահատվէր Մէյն Էաձու պատիւը, ինչպէս մունէջիմի։ Նա ամենևին չվհատուեցաւ, և, իւր աստիճանին վայել ազնուութեամբ, դնաց դէպ ի Յանապատ։ Այս օրիս ամենևքեան անհամբեր սրտով սպասում էին, մանաւանդ Յանը, բայց կափուկալէի և կափուչի բաշու մասին, որ իսկապէս կատարել մունէջիմի ասածը, պիտոյ է այսքան իմանալ, որ նորա մեծ երիւղի մէջ էին. շատ մեծ դժուարութեան մէջ էր ձգում նորանց մունէջիմի ասած բանը, այսինքն սալ Յանի կնիքը սագին, որ կուլ տայ։

Յովնը, ինչպէս որ ասացի, անհամբեր սրտով սպասում էր ժամադրած օրին, և երբ իմաց տուին նորան մունէջիմի գալը, իսկոյն հրամայեց, որ ներկայացնեն նորան իւր պայծառ աչերին։

— Ի՞նչ է, մունէջիմ, ուր է իմ Թանկագին մատանին։ Ո՞վ է նորա գողացողը, ասա։

— Ալահու ապքար (Աստուած մեծ է), — պատասխանեց Մէյն Ջաձին խոնարհաբար համբուրելով Յովնի հանդերձի ծայրը, — Յադաւորների դանձերը ոչ ջրումը խորասոյզ կը լինին, և ոչ կրակումը կ'այրվին, և քո դանձը, ով ուղղափառների հրամանակալ, Ինշա-Ալլահ (եթէ հաճոյ է Աստուծուն) կը գտանվի։ Իրամայիր միայն, ով Տէր, ինչ որ կայ շնչաւոր քո մեծ սարայումը — թող շատանայ նորա ճոխութիւնը — մարդերից լսկատ մինչև անհնչան տնային թռչունը, թող բերուն իմ առաջև և այն ժամանակ....

Մէյն Ջաձին դեռ ևս իւր խօսքը չվերջացրած, նորից ընկաւ Յովնի ոտքերը։

Ընդհատեսիլ Յովնը հասկ ևս թէ կարողացաւ հայեցուածքը այն տեղ եղած պալատականների վերայ դարձուցանել, և ահա նոքա զարմանալի արագութեամբ սկսան դուրս հանել և վարել ինչ որ շնչաւոր բան կար խանասարայում, դէպ ի արքունական գաւիթը, ուր շուտով ինքը ուղղափառների հրամանակալը առաջ փառաջ եկաւ, ուղեկից լինելով նորան մունէջիմը և բազմաթիւ մեծամեծները, բէյերը և միրզաները։

Նախ և յառաջ, Մէյն Ջաձու մօտից անցան բոլոր պալատականները և բոլոր արքունական սպասաւորները. յետոյ բերեցին Յովնի ձիանքը, ապա բազէները և հուսկ յետոյ դուրս վարեցին բազէները և ամենից յետոյ սագերը։

Այդ, կանչ, գոչեց մունէջիմը, տեսանելով սագին, որ մի ոտի վերայ կաղումէր։ Դադարեցուցէք այդ սագը։ Մի բան ծանրոթիւն է պատճառում այդ խեղճին, մինչև անգամ կաղումէր։

Ընդունեցին սագը և տուին մունէջիմին։ Յովնը և ամենքեան նայումէին նորա վերայ, չհասկանալով թէ ինչ է կամենում առնել նա։ Այս բանը հասկանումէին միայն քառասուն հոգի. այլև նոքա այնպէս էին ձևացնում իբրեւ անձը, իբր թէ ամենևին ոչինչ չգիտեն, և դեռ ամենևքեան զոդզոդումէին։

— Տուէք ինձ դանակ, ասաց մունէջիմը։

— Տուեցին դանակը։ Ան էլ ձամի էֆէնդին, բռնելով սագը, իսկոյն պատառեց նորա փորը և հանեց նորա միջից խանի թանկագին մատանին, որ մեծ զարմանք պատճառեց բոլոր այն տեղ ներկայ գտանվողներին։

— Ալլահու աքբար, աղաղակեց Խանը։

— Ալլահու աքբար, կրկնեցին միաբերան բազմաթիւ պալատականները։

Ահա իսկ ճշմարիտ մեծ մունէջիմը։ Սորան զուգակից չէ Սալէհ էֆէնդին — ձայն թնդած ամբոխի մէջ։

— Բայց ի՞նչ կերպով սագը յայտնաբերել է մատանին, — հարցրեց Խանը։ — Չլինի՞ թէ իւրը շէյթանը բնակած է նորա մէջ։ Ա՛յս ասելով, Խանը թաքեց դէպ ի այն կողմը, որ տեղը դրած էր սպանած սագը։

— Ա՛յո, ուղղափառների հրամանակալ, բայց Ալլահը, օրհնեալ լինի նորա անունը, թոյլ չտուեց շէյթանին տիրել այդ թանկագին գանձին։ Ալլահու աքբար։ Ալ համդու լիլլահ (Աստուած մեծ է. փառաբանութիւն Աստուծոյ)։

Խանը սաստիկ ուրախացած էր։

— Ա՛ղջիկ, սորան արժանաւոր մուշտակ, — ասաց նա։ — Ա՛յս օրից դու իմ մունէջիմն ես։

— Խայիր օլսո՛ն, խայիր օլսո՛ն (շնորհաւոր լինի, շնորհաւոր լինի), ձայն արձակեցին ամենայն կողմից։ և այն օրից խանապայումը հոյակապ զիաֆէթ (հայկերութիւն) տուեց Խանը։ Բոլոր քաղաքը ուրախութիւն արեց։

Ահա այսպիսի բաղդաւորութիւն երազում էլ չէր տեսել մունէջիմը, որ, շատ ժամանակ չէ, բեռնակիր էր և այժմ մեծամեծ-ներին դասակից եղաւ։ Ա՛յրաշալի կերպով գտանվելը թանկագին կնիքի և Ահէն Ա՛ձոռ մունէջիմ-բաշի կարգվելը շուտով հրապարակվեցաւ բոլոր մայրաքաղաքումը, իսկ Ահնվլհէն աւելի վաղ իմացաւ այս բանս, քան թէ ես ուրիշ մարդ։ Ահա օրը նա բաղանիքումն էր, ուր, ինչպէս սովորութիւն է, պատմուճան-ներնայն կերպ նոր լուրեր։ Ա՛յս անգամ պատահեցաւ այս տեղ և դուռը Շ էրֆէն, մունէջիմ-բաշի Սալէհ էֆէնդու կինը։ Շ էրֆէն ամենևին չէր հաւատում այս նորա համար հրաշալի նոր համբաւին, և մինչև անգամ համոզակվեցաւ նորընծայ մու-

նէջիմ բաշու վերայ անարդ խօսքեր ասել, որ այնպէս զայրացու-ցին Մէնկլիզէի սիրտը, որ գրեթէ ապտնութեամբ սիրտ վըճռ-ռանդիլ լինէր իւր հակառակորդին, նեռելով դէպ ի նա պղնձի բաժակը:

Մէնկլիզէն վերադարձած դէպ ի տուն, դասէ արդէն այն տեղ նորընտիր մունէջիմ բաշին, որ այժմ հանուելէ վերայից հոյակապ մուշտակը. բայց նա, ինչպէս յառաջ, մտածմունքի մէջ էր և տխուր: Մէնկլիզէն, սովորական շնորհաւորութենից և իւր ուրախութիւնը յայտնելուց յետոյ, անհամբեր սրտով սկսաւ պատմել իւր մտքումն թէ վերջապէս բաղդը յաջողեց իւրեան հատուցանել առաջին անարդանքի փոխարէնը Հ էրզէ-ինի. բայց մունէջիմ բաշին, կարծես թէ, այդ գործը բանի տեղ չէր դնում:

Այս օրից սկսած մունէջիմի վերայ լցուեցան աշխարհիս բո-լոր բարիքը: Խանից ստանում էր նա պարգևներ պարգևների քա-նակից, և համարեա թէ առանց հետանալու, որպէս մունէջիմ-բաշի, գտանվում էր խանի մօտ: Չէր անցանում մի օր, որ նա մի բան չդուշակէր, կամ չարժանանար մի հատարակաց գովա-սանութեան: Ընդհանուր մունէջիմ-բաշու մասին յիշողութիւն անդամ չէր լինում, թեպետև այդ բանը փոքր ինչ դժուարա-ցուցիչ էր Մէյն Էաձի էֆէնդուն, որ միշտ երկիւղի մէջ էր, ամենայն մի լուսէ մտածումէր, դուցէ խարերայութիւնը յայտ-նվի, և նա այնուհետև լինելու էր խաղալիք և խայտառակ ամե-նեցուն աչքումը, կամ, որ առաւել վատն է, մեռանելու էր նա-խնատական մահով: Այժմ, երկար մտածողութենից յետոյ, հա-ւատարիմ Մէյն Էաձի էֆէնդին, երբ որ արդէն ապահոված էր իւր բոլոր կեանքը, սկսաւ մտածել, կամ թէ, ուղիղը ասել, հնարք մտածել, թէ ինչպէս կարելի էր վտանգից ազատել իւր անձը և հետանալ պալատից, ցած դնելով միանգամայն իւր վե-րայից մունէջիմ-բաշու կոչումը:

Նա տասն որ մունէջիմ-բաշին, համարեա թէ ամենայն օր առանց հետանալու գտանվում էր խանի մօտ: Մի անգամ խա-նը ձեռները պարսպի մէջ, բռնեց մի նոր մրգեր, և այս մի-ջոցը պահելով ձեռքումը, դարձաւ մունէջիմ-բաշուն և պա-հանջեց որ նա ասէ, թէ ի՞նչ է ազ ձեռքի մէջ բռնածը:

Վ՝ախեցաւ խնդմ մունէջիմը և յայտնի խոստովանեցաւ, թէ նա մունէջիմ չէ, կամ մունէջիմ է ախամայ կամքով։

— Ո՜վ ուղղախառնների հրամանակալ, մի անգամ թռաւ, միւս անգամ թռաւ, իսկ երկրորդ անգամը ազատվելու փորձ փորձից, բայց բռնուեցաւ.... ասաց նա, վերաբերելով այս խօսքերը դէպ ի իւր անձը. բայց խանը զարմացած և ուրախացած նորա խօսքերից, բացեց ձեռքը և թողնց մորեխը, որ միայն երկու անգամ թռչկոտեց, իսկ երրորդումը Խանի ձեռքն ընկաւ. և Խանը այս անգամ էլ առաւել ևս պարգև տուեց նորան։ Վ՝երջապես Մէյն Չաձի էֆէնդին վճռեց որպէս և իցէ ազատվել այն կոչումից, որի հետ կցորդ էր մի վտանգ, որ պիտոյ է ղրկէր նորան և զոյքից և՛ կեանքից։ Ահա շատ լաւ մտաբերութեամբ խնամատարների հին առածը. «Չեռու խանից, հեռու և՛ կրակից, և որոշեց իւր մէջ, խելացնորած ցոյց տալ իւր անձը նոյն իսկ առաջին պատահի դիպուածումը։ Այս դիպուածը շուտով պատահեցաւ։

Մի օր Խանը գնաց բաղանիք։ Այդ միջոցին մունէջիմ բաշին խանատարութեան էր։ Բաղանիքի մօտ կային մի քանի շէնքեր, որ միաւորվում էին, ինչպէս և բաղանիքները, ուրիշ պալատական շէնքերի հետ։ Մէյն Չաձին առանց մերկանալու, թաք կացաւ մի խուցի մէջ, Խանի ծառայքը նորան չկարողացան տեսանել։ Չաշուեղով ժամանակը, որքան պիտոյ էր Խանի մերկանալու համար, և կարծելով թէ ուղղախառնների հրամանակալը արդէն բաղանիքումն է, ինչպէս և էր իսկապէս, շտապով դիմում նա այն տեղ, բռնում Խանի մէջքից և նոյնպէս շտապով դուրս է հանում նորան բաղանիքից առհասարակ մերկ.... Ամենաքեան զարմացած մնացին այդպիսի յանդուգն ու չլսված ընթացքի վերայ, որ կարող էր ցուցանել միայն խելացնորը.... Իսկ ինքը Խանը շփոթված էր բարկութենից։ Բայց ի՞նչ. հարկ թէ կարողացաւ Մէյն Չաձին դուրս հանել Խանին, հարկ թէ կարողացան ծառանները խելքը գլուխները ժողովել, և ահա յանկարծ բաղանիքի առաստաղը փուլ եկաւ սոսկալի ձայնիւնով և տասը հատիկ (բաղանեպանք) մնացին թաղված առաստաղի փլատակի տակ.... Յայտնի բան է, որ նոյն ձախորդութիւնը հասանելու էր Խանին, եթէ չէր ազատել նորան մունէջիմ-բաշին։ Սարսափելի՞ է մինչև միաք բերել։

Լսելը որ այս սոսկալի անցքը անցած էր արդէն, Խանը դարձաւ դէպ ի մունէջիմ-բաշին, խօսելով այսպէս.

— Դուռ իմ կեանքս ազատեցիր, մունէջիմ-բաշի: Վասն ինձ արած ծառայութիւնը վեր է ամենայն ծառայութենից: Խընդրիր, ինչ որ կամիս, և ես ամենայն բան պարտական եմ շնորհել քեզ:

— Ամենազօր հրամանակալ, ահ ու դողով պատասխան տուեց Մէյն Հաճի էֆէնդին, կալոզանալով փոքր ինչ վարատել իւր երկիւղը, որով ըմբռնուած էր աւելի սաստիկ քան թէ բոլոր ներկայ դատաւորները, — եթէ չեմ ես այնքան տարիներով ծանրացած, գոնէ շատ ծեր եմ և տկար: Իմ պարապմունքս դիտութեան ամենադժուարին բաներից մինովը շատ զբաղեցին առողջութեանս, այնպէս որ սկսում միտքս մի ղարմանալի մոռացկոտութեան մէջ ընկնել, զգուշեմ որ խելքս տկարանում: Ողորմութիւնը որ ես, քո ստրուկներից ամենաչնչինը, ով հրամանակալ, համարձակվուեմ խնդրել, այն է, որ ինձ արձակիչը իմ պաշտօնից և տայիր ինձ ապահովութիւն միանգամայն, հանդիստ անցուցանելու իմ կեանքի վերջին օրերը:

— Ո՜հ, մունէջիմ-բաշի, ինձ քեզանից բաժանվիլ ցաւալի է, բայց թոյլ լինի քո կամքը: Խանի խօսքը չէ կարող փոփոխվիլ:

Խանը, առաւօրէն պարգևատրելով Մէյն Հաճուն, ինչպէս թագաւորի վայել էր, արձակեց նորան, յանձնելով նորան մի տոմսակ, որով նա և նորա բոլոր ազգատոհմը միշտ ազատ պիտոյ է լինէին ամենայն տեսակ հարկերից: Այդպէս լսեցի ես աչերոյ ծերերից, այդպէս և պատմեցի ձեզ, ով ուղղափառներ:

Մէյն Հաջին ապրեց դեռ և, ինչպէս ասումէին, երկար ժամանակ առանձնացած: Մի որդի ունէր, և վախճանեցաւ շատ ու շատ օրհնութիւններ լսելով աղքատներից, որոնց առատապէս ողորմութիւն էր տուած:

Գ. Ց. Պախալեան:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

—

ԼՈՒՍԻՆԸ ԵՒ ՆՈՐԱ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ ՎԵՐԱԾ

Ամէն սակաւ քան թէ արեգակը, երեւոյթ լուսինը երկնային կամարի վերայ պատճառ, զանազան միջոցներով մի մասամբ կամ թէ բոլորովին նահանջած է նա: Արեգակի ներգործութիւնքը բոլորովին պարզ և անհակառակելի են, այնպէս որ կարող չէին շատ տարակոյսք յառաջացնել. դորա հակառակ լուսինը տխէթ տուել անչափ շատ կշռատուութիւնների: Այսուհանդ ջերմացնում նա թէ պաղեցնում, նորա երեւիլը յուցանում պայծառ թէ պղտոր եղանակ: Հաստատի է, որ նա աւելի քան թէ միւս որ և իցէ աստղ պայծառացնում և փառաւորում գիշերային երկնակամարի տեսութիւնը. նա արեւադարձեան աշխարհների մէջ փայլում մի հրաշալի պայծառութեամբ և անտառական շնչաւորների գիշերային կեանքը զուարթացնում. թէ նա մեր արեգակի հետ միասին ներգործելով, շարժում մեր ծովերը, բարձրացնում նոցա ջրերը, հեղեղներ պատճառելով, և երկին ցած է թողում, տեղատուութիւնք յառաջացնելով: Ինչպէս իւր լուսովը և առաձգութեամբը (մօտաքաշութեամբը) ներգործում ովկիանոսի վերայ, նոյնպէս և գուցէ թէ իւր ջերմութեամբ ու ցրտութեամբ, այլև առաձգութեամբ ներգործում օդերէն ծովի մէջ: Հաստատակ կեցութեան մէջ, լուսնի ազդեցութիւնը ցրտի ու եղանակի, այլև բուսականների, շնչաւորների և մարդերի վերայ համարվում որպէս մի բնքն ըստ բնքեան հաստատուն բան: Ծովազնացները, դիւղական տնտեսքը, այգեգործքը և որսորդները հաստատում են թէ այս մասին սրած էին հազարատար փորձեր: Այս պատճառով թող այս տեղ նախ և յառաջ ըստ Լաֆոնէնի մասին մի քանի դլխաւոր առաջարկութիւնք մէջ բերենք և յետոյ ախտանիշք աւելի ճիշդ փորձել ընդհանրապէս տարածված հայեցողութիւնքը դորա մասին: Ամէն

պէտ և շատ հարցուածնելի պիտոյ էր պատասխան տալ, Ա՛ — մի պատասխան որ ոմանց երևելու է ցամաք և անօգուտ, որով հետև դորանից ոչինչ բան կարելի չէ եզրակացուցանել — այնու ամենայնիւ պիտոյ չէ ոտքի վերայ թողուլ մի յատաջուց ապատնատած սխալ դատողութիւն, եթէ կարելի էր ապացուցանել դորան։

Լուսինը համեմատաբար մեր տիեզերական մարմինների հետ, աւելի մօտ է մեր երկրին. նորա միջակային հեռաւորութիւնը բաղկացնում է 51,800 մղոն։ Այլև նորա մեծութիւնը աննշան չէ. նորա տրամագիծը է գրեթէ $^1/_4$ը երկրի տրամագծի։ Նորա նիւթական բովանդակութիւնը բաղկացնում է $^1/_{54}$ մասը երկրի նիւթական բովանդակութեան, բայց նորա ատաստութիւնը $^1/_{87}$ միայն, ըստ որում նորա ծանրութիւնը բաղկացնում է միայն մօտ $^3/_5$ երկրի ծանրութեան։ Այն միջոցին, երբ որ նա շարժվում է երկրի չորս կողմով, կատարում է նոյնպէս շրջանատութիւն իւր առանցքի վերայ։ Այս բոլոր հրաշքութիւնքը տալիս են մեզ իմանալու բնչ բնչ ապրելութիւնք լուսնի կողմից մեր երկրային մոլորակի վերայ։

Ասյց և օդի պակասութեան միջոցին, լուսնից բացատնակված լոյսը շատ թոյլ է. բոլոր երկրագործների մէջ չէ նա աւելի պայծառ քան թէ այն լոյսը, որ մի սպիտակ ամպուշեղջ բացատնակում է գիշերի մէջ։ Գիշերով, երկնատիմարի վերայ կանգնած հիսալուսինը նմանում է մի փոքրիկ գառնամերման ամպի։ Հումբոլդը ասում է. «Երբ որ, աշխարհագրական երկայնութիւնքը տահմանելու համար, պիտոյ էր շատ անգամ չափել լուսնի հեռաւորութիւնքը արեգակից, պատահում էր յաճախ դժուարութիւն ճանաչելու լուսնի բոլորակը սատկի լուսատիպ ամպերի բազմութեան մէջ։» Ասյց դորա հակառակ պատմում նա, թէ լեռնային, տատերկու մինչև տատնեվեց հազար ոտնաչափ բարձրութիւնների վերայ, ուր պայծառ լեռնային օդի մէջ տեսանելի են միայն վիտրանման փոքրիկ ամպեր, շատ աւելի հեշտ է հասած նորան որոնելով դատանել լուսնի բոլորակը, որովհետև վիտրանման ամպերը իւրեանց փուխր որպիսութեան պատճառով բացատնակվում են միայն փոքր տրեալոյս, և լուսնի լոյսը անցանելով յանդատ օդակոյտերի միջից աւելի փոքր նուազում է։ Եթէ բոլոր երկինքը զարդարված լինէր անհամար լուսիններով, տալս սի-

տոյ է եւս եւ նա ի, սպիտակային ամպերով լուսաւորված կամարակապ, բայց կարող չէր ամենևին հասանել արեգակի պայծառափայլութեանը: Որովհետև արեգակի ու լուսնի բոլորակները համարեա թէ հաւասարապէս մեծ են երևում, պիտոյ էր ապա մտածել թէ նոցա լուսի աստկութիւնքը բաղդատել միմեանց հետ դժուար չէր. բայց սահմանողութիւնքը այդ մասին ցուցանումն մեծ զանազանութիւն. հետևելով առաւել ընդհանուր սահմանողութեանը, ստուգիս են լուսնի լուսեհանը $^{1}/_{300000}$ մասը արեգակի բոլորակի լուսափայլութեան: Ուշ փոքրիկ և արդարև գետ ևս անչափ բարձր թիւը զարմանալի է, եթէ քննումենք թէ ինչպես, արևը մայր մտանելուց յետոյ, լուսնի լուսեհան բոլորակը հետ գհետէ աւելի մեծնացած երկնակամարի վերայ, փայլուն միշտ աւելի պայծառ ու պայծառ լուսով. բայց չէ պիտոյ այս տեղ մոռանալ, որ այս բանը նեղհակութեան նեղգործութիւնն է միայն: Լուսնի պեղնագոյն լոյսը երևում դեղնկով սպիտակ, որովհետև այն միջոցին կապուտագոյն օդակոյտերը, որի միջով տեսանումենք նորան, տալիս են լուացուցիչ գոյնը դեղնի համար:

Երբ որ լուսնի բոլորակը լուսնի լուսեհնից մի քանի օր յառաջ կամ յետո ցուցանումէ միայն մի նեղ, արեգակից լուսաւորած մանգաղ, որ իւր բաւական աստիկ լուսափայլութենից, երևումէ թէ իւր ծայրերով կարծ ներս է մնանում խաւար բաժնի մէջ, այն և անդ է կինում այդ սահմանից, մեք նկատումենք խաւար մակերևութի վերայ մի մեղմագոյն լոյս, սա է երկրալոյսը լուսնի մէջ, մի գոլացութիւն մի այլ գոլացութեան: Ովսինն երկիրն ու լուսինը գտանվումեն մի փոխաբերական յարակցութեան մէջ. ամենայն գունդ իւր, արեգակից աստացած լոյսը մի մանով արձակումէ դէպ ի միւսը. և իսկապէս այն միջոցին, երբ որ լուսինը ուղղակումէ միայն փոքր ինչ լոյս դէպ ի երկիրը, որովհետև նորա դեղնկի կողմի առաւել մեծ մասը գտնուցած է մեզանից, նորա գիշերը լուսաւորվումէ բոլորտանեաց երիւքը: Այդ երկիրը երևումէ լուսնի վերայ որպէս մի համարեա թէ 14 անգամ աւելի մեծ բոլորակ, քան թէ լուսինը մեր համար, և կարելի էր ասել այլև անհի մեծութեամբ, և այդ պատճառով լուսաւորումէ լուսինը 14 անգամ այնքան աստիկ, ինչքան երկիրը լուսնա, և նորա փայլողութիւնը բաւական պայծառ է, որ տեսա-

նելի լինէր, երբ որ նա երկրից հասած էր լուսնին և դարանից միւսանգամ չէտ էր գնացել։ Ոչ թէ միայն պայծառ լուսատուղաների մէջ տեսանելի են այն չորանի բիծերը, այլև մոխրագոյն լուսի մէջ որոշումէ գոնեայ հեռացողը աւելի մեծ բիծերը և առանձին պայծառ կէտեր — սարակատարք լուսնի դաշտերի մէջ. և այն միջոցին ևս նկատելի է մի մոխրագոյն փայլողութիւն, երբ որ բոլորակը լուսատուված էր արեգակից աւելի։ Բայց ջերմ երկրագօտուամբ և Վենետոյի ու Մեքսիկոյի լեռնագաշտահարների վերայ աւելի պայծառ տեսանելումն այս երեւոյթքը քան թէ Եւրոպայումը։ Գուցէ թէ լուսնի մոխրագոյն լուսի զանազան չափով աստիճութիւնը կառաջանուամէ այն զանազան չափով պայծառութենից, որ երկրագունդը իւր բացատակված լոյսը դարս է ուղարկում. միտ դնելով այն բանին, թէ արեգակի լոյսը բացատակվումէր մեծամեծ ցամաք աշխարհներից որ առատ էին ամպրուտ դաշտերով, ապառաժեայ յատակով, խոտաւէտ անապատներով կամ թէ ահագին անտառներով, կամ թէ լայնատարած ծովային մակերևոյթներից, պիտոյ է լուսնի վերայ երևէր պայծառ կամ մուժ։ Լուսնի բնակիչքը (որ մի լոկ հնարաւորութիւն է, և դոցանից նորա միայն կարող էին տեսանել երկիրը, որ բնակուածին դէպ ի մեր կողմը դարձուցած լուսնակէսի մէջ) պիտոյ է ունենային իւրեանց աչքի առաջև մի մեծ, լուսատուված աշխարհայոյցի տեսութիւն, և 24 ժամի մէջ պիտոյ է հանդիպէին նորա աչքին բոլոր երկրաբաժինքը և ծովերը։ Արած են մի արժանի ուշադրութեան նկատողութիւն, թէ երկրի անդադար շրջանառութեան միջոցին, լուսնի մոխրագոյն լոյսը փոխաբերվումէ դէպ ի ձիթասպողագոյն կանաչ մի փոքր դէպ ի դեղին զարիող գոյն։ Լուսինը, որ ուղեղ վայրահայեաց կանգնած էր առանեան ծովի վերայ, իւր դիշերային կողմանը սառնութենէն այն կանաչ երկրալոյսը որ, երկինքը ազատ լինելով ամպերից, ուղղակութենէն դէպ ի նա հարաւային Ամերիկայի անտառային սահմանքը.

Այն միջոցներին, երբ որ լուսինը բոլորովին խաւարումէ, շատ սակաւ է պատահում, որ լուսինը ամենևին անլոյսատեսիլ։ Սովորաբար, լուսնի բոլորովին խաւարման միջոցին, տեսանուելիք նորա բոլորակը կարմիր, այլև շատ գանազան աստիճանով կարմրանալիված, այնպէս որ, եթէ լուսինը հեռի է երկրից, հա-

սանուամէ կալմիւմէիւնը կրակի բոլբոքված լուսին։ Հումբօլդ բնագնիները նկատել է, որ խաւարված կարմիր լուսնաբոլորակը սելենտպաձեան երկնակամարի տակ երեւում նոյնպէս աւելի փայլուն քան թէ Նէապոլսում։ Այս բոլոր երեւոյթը յառաջանում այն բանից, որ երկրի վերայ ազդակված, օդոլորտի միջով անց կացած շառաւիղքը խոտորվումեն իւրեանց ճանապարհից, դէպ ի ներս են շեղվում և այդպէս ընկնումեն աստեղակոնուսի մէջ։

Թէ լուսինը կրում իւր վերայ ապրել, որ ճանաչելի են նոցա պայծառ կատարներից, և նոցա ստուերներից, հաւատի է. դորա հակառակ, սխալ է երեւում նորա մէջ, մանաւանդ թէ մեկնաղդին մակերևոյթներին ասել ծովեր։ Դէպ ի մեզ դարձուցած լուսնակողմը — միւսի մասին ոչինչ չգիտենք մեք անմիջապէս — կարող էր շատ շատ ունենալ խիտ ցանցառ և անխոր ծովեր. պատճառ, շատ զանազան լուսաւորութեան տակ քննելով լուսինը, երբէք նկատած չեն նորա վերայ մի հարթակշիռ տափարակ, այլ մի անհաւասար յատակ։ Նմանապէս եթէ կարելի էր մի մեծ բարձրութենից ցած նայել երկրի ծովի վերայ, պիտոյ էր այն տեղերում, ուր մեծ չէ խորութիւնը, որոշել քարաժայռեայ յատակը, որովհետև դա լինելու էր աւելի լուսապայծառ քանի թէ ծովի սովորական մակերևոյթը։ Այդ կան և այլ պատճառք որ ծովի լինելութիւնը լուսնի վերայ տարակուսելի են կացուցանում։

Դէրը որ մի ատաղ յառաջընթաց լուսնից ծածկվում, այդ ծածկելութիւնը կատարվում մի րոպէի մէջ. մի ծանրաշարժ անհետանալ նկատված է շատ սակաւ։ Լուսնի եղերական դաշտերը երեւումեն նոյնքան և բացայայտ, ինչքան դատնվածքը մէջ տեղում։ Այս բոլորից հետևում, որ լուսնի վերայ չէ կարող լինել այնպիսի օդերէն կամ ջրաշոգերէն ծածկոյ, ինչպէս երկրի վերայ. պատճառ, ամենայն տեսակ օդ երկրի վերայ նկատելի է լինում նորանով, որ միջամուխ անցանող լուսի ճառագայթը կոտրում և թուլացնում։ Հետալ բնագնիները հաշուել է թէ լուսնի օդը, եթէ այնու ամենայնիւ մի այդպիսի բան կայ, կարող է միայն ունենալ 1000 անգամ աւելի նոսրագ թանձրութիւն, քան թէ երկրային օդը։ Որովհետև օդը պակաս էր լուսնի մէջ, այդ պատճառով չէ լինում այն տեղ ոչինչ ցրվո-

պաթիան լուսի, երկնակամարի վերայ: Այս տեղ չկայ ոչինչ արշալոյս. աստղերը բազմանումեն համարեա թէ մեւսպատ ցերեկուան երկնակամարի վերայ, և ամենապայծառ օրի քառորդից պիտոյ է հետևէր կայծակի արագութեամբ մի աղջամուղջ գիշեր, եթէ նորա ծանրաշարժ շրջանառութեան միջոցին (որ լինում 27 1/3 օրի մէջ) արևի ծագման ու մուտքի ծանրաշարժութիւնը մի փոքր չը չափաւորէր այդ փոխաբերութիւնը: Աչինչ խոնաւութիւն շրջում չէ յատակի վերայ. ամպեր ու մառախուղ անծանօթ են այն տեղ: Ա՛ մի օդեղէն հոսանք կարող չէ յառաջ տանել շառաչիւնը, երդը, խօսքը: «Լուսինը մեր երևակայութեան համար, որ սիրում այնքան անհամեմատաբար ճանապարհից դուրս դալ և ոտք կոխել մի անքննելի տհմանի վերայ, մի անբարբառ անապատ է:»

Այն ընդհանուր պատկերը որ տուեցինք այս տեղ լուսնի մասին, թող հերիք լինի մեր նպատակի համար: Այժմ եթէ հարցանենք թէ ինչե՞ն այն ներքոթիւնը որ նա յառաջացնում երկրի վերայ, ապա լուսինը բայց ի այն վարկեան և ուղիղ աստղարկութենից թէ նա պատճառում ծովի մակընթացութիւնը—նախ և յառաջ թէ նա ինքն ըստ ինքեան ունի մի ցուրտ բնութիւն, ուրեմն, այս մասին, արեգակի ներհակն է: Հռոմէական բանաստեղծների մէջ ասվում նա «ցրտաբեր կամ թէ ցօղաբեր» լուսին. մեք ասումենք թէ լուսինը փայլում, այս դիշերը լինելու է պարզկայ, և արդարև նիստողութիւնը ունի այդ մասին ստուգութիւն: Այդեղործքը հաստատումեն, թէ լուսնի լոյսը ապրիլ և մայիս ամիսների մէջ ունի ջնաստակար ազդեցութիւն բուսականների նորածիլ բողբոջների վերայ. նոքա հաստատումեն, թէ տերևները և ընձիւղները, որ պարզկայ երկնակամարի տակ ենթարկված էին լուսնի լուսին, խանձվումեն, այլ խօսքով, դյուտահարվումեն, և այս պատահումէ այն միջոցին ևս, երբ որ ջերմաչափը (թերմոմետրը) արձակ օդի մէջ մի քանի աստիճան բարձր էր նուլ կէտի (սառցակէտի) վերայ:

Այդ բոլորը արդարև ճշմարիտ է: Բայց լուսինը այդ բանի մէջ ամենևին չէ ներգործող պատճառ: Երբ որ մեք ամենազօրաւոր ապակիք, ամենամեծ այլոզական հայելիք ուղղեցնումենք դէպ ի լուսինը և նորա այլոզական կէտի մէջ դնումենք մի շատ

պղալի ջերմաչափ, այնու ամենայնիւ նկատում չենք և ոչ ամենափոքր աստուգիչ ներգործութիւն: Ը.ր, 1846 թուականին, Մելլոնի ուսումնականը ապացուցել է թէ լոյսի լուսը յատակացնում մի փոքր ջերմութիւն եղանակի մէջ, բայց այս ջերմութիւնը այնքան չնչին է որ, փորձ կատարելով մի այրողական ապակիով, որի ատամդիծը էր երեք ոտնաչափ, և չափելով ջերմութիւնը մի շատ զգալի թերմոմետրով, բաղկացնում էր մի հապիւ թէ տեսնելի մասնիկը մի աստիճանի: Ուրեմն, ցուրտ պատճառող չեն լուսնի ճառագայթները, թէև պայծառ լուսնակ գիշերները ընդհանրապէս յայտնի էին որպէս ցուրտ գիշերներ: Ուրեմն ուստի է դոյանում այդ հակառակաբանութիւնը:

Ընդլնացի ուսումնական Ուելսը առաջինն է եղած, որ սեղի ձիշդ փորձեր է արել ցօղի դոյացութեան մասին, և դոցանից հետևում, որ երկրի լուսեղէն ատաստութիւնքը այս և վերոյիշեալ երևութի պատճառն են: Ամենայն մարմին անպատճառ ցուրտ է հոսում մի ջերմութիւն. եթէ այդ կորուստը չը լրացնվի վերսին, այնուհետև այդ մարմինը պաղում. այսպէս և հանդիպում երկրին պարզ գիշերների մէջ: Նա կորուստնում ջերմութիւն, արձակելով նորան դէպ ի արձակ երկնային տարածութիւնը. բայց եթէ երկիրը շրջապատած էր ամպերով, այնուհետև նորա ջերմութեան կորուստը շատ չնչին է: Ը.ր մի-ջոցին օդը դեռևի վերայ շատ անգամ ծնում սեղի ջերմ քան թէ սոսկ մարմինքը նորա վերայ: Օդը օրինակ, եթէ փոքրիկ կոտորներ բուրդից, իսլանդեան հաւի փետուկ փետրածածկոցից, կամ թէ մի այդպիսի նիւթ բայց թողունք արձակ օդի մէջ, գոքա պայծառ երկնատարածի տակ, շատ անգամ 4 մինչև 7 աստիճանաչափ սեղի պաղութիւն են ստանում քան թէ ունէր այն օդը որ շրջապատում նորանց: Բայց նոյն բանը հանդիպում և բուսականներին. սոքա կարող են ցրտահարվիլ, թէև օդի եղանակը տեղապատէս դասնվում նուազ կէտի վերայ: Բայց ևրբ որ երկինքը պատած էր ամպերով, սակնևին չքանում այդ տարբերութիւնը, կամ թէ լինում դոնեայ անպզալի: Եւրոպայի մէջ շատ տեղ ապրիլ և մայիս ամիսների գիշերներում, ատմոսֆերայի ջերմութիւնը բաղկացնում ոչ սեղի 3 մինչև 5 աստիճան Ռէօմիւրի: Եթէ լուսնակ գիշեր է, այսինքն եթէ

պայծառ է երկինքը, ապա գետնի և բուսականների եղանակը գուշէ թէ ցածանումէ նուլ աստիճանի (սառցակէտի) տակ, և այնուհետև կարող են բուսականքը ցրտահալվիլ: Ուռնց լուսնակ գիշերի, այսինքն երէ երկինքը ծածկած էր ամպերով, չէր լինելու այդ ցրտահալութիւնը: Ուրեմն այգեդործ մարդիկը իրաւացի են ասում, թէ լուսնակ գիշերով կարող էր մի բուսական ցրտահարվիլ, թէպետև այդ միջոցին չէր աւելի ցուրտ քան թէ միւս գիշերների մէջ: Միայն թէ սխալաբար ընծայումեն դորա պատճառը լուսնին, որ այդ դիպուածի մէջ կատարումէր միայն վկայի պաշտօն:

Ինչպէս լուսնի նոյնպէս և աստղների երևելը նշան է պայծառ ատմոսֆերայի, բայց ամենևին գործակից չէ ամուր գետնի մակերևոյթի վերայ գոյացած ցրտութեանը. Թող նա երկնակամարի վերայ փայլէ կամ թէ անյայտանայ, իրողութիւնը կը միայ մի և նոյն: Ամպերից ազատ երկնակամարի միջոցին յառաջանումէ ցրտութիւն և գորանով ցօղ: Ներկուքը ևս կարելի էր ընծայել նոյնպէս աստղներին, և հնոյթեան գաղերումը արդարև շատ մեծարումէին ցօղը, որովհետև դա աստղապայծառ գիշերներումը աւելի յառնիս պատահումէ, և այս պատճառով կարծումէին թէ երկնքից եկած ջրից կարելի է պատրաստել իմաստունների քարը, կամ ոսկի: Ուրեմն այն զրոյցը որ եղած է ցրտաբեր կամ թէ ցօղաբեր լուսնի մասին, պատկանումէ այն խաբեբայական եղբոսկացութիւններին, որ Հերել գերմանացին յատկացնումէ այսպէս. «Ներ որ գալման միջոցին երկար ժամանակ չէն կամենում գորտերը կարկաչել, ապա և ծառերի տերևները չկամին երևել. ուրեմն գորտերը կարկաչելով դուրս են երևեցնում ծառատերևները:

Ընդհակը ներգործումէ ներս ձառագայթելով իւր ջերմութիւնը. և լուսինը թէպէտ չէ պատճառ, այլ միայն վկայ դուրս ձառագայթելուն, այնու ամենայնիւ կարելի է ասել թէ հատարակ ժողովուրդը վայր ի վերոյ նկատելով, առաջնորդվել է մի տեսակ բնական ազդեցութեամբ, ընծայելով լուսնին նկրհակ պաշտօնը — գիշերների սառուցանելը: Գիշերային դուրս ձառագայթելը ջերմութիւն, ինչպէս տեսանք, արդարև շատ նշանաւոր է, և ամպերը բնդհատումեն սահմանեալ հանդամանքների մէջ մի պաշտպանողական զգեստ երկրի համար, որ և նորան ցերեկով ժողոված ջերմութեանը թոյլ չէ տալիս փախչել: Երէ

մի գոգաւոր հայելի մի նուրբ ջերմաչափով միասին ուղղեցինք դէպ ի մի ամպ, ջերմաչափի աստիճանքը խոկոյն բարձրանումեն. դոքա ցածանումեն կրկին, երբ որ գոգաւոր հայելեն դարձուցանումէ դէպ ի պայծառ երկնակամարը: Ա.յդեպանքը կամենալով իւրեանց մանուկ տունկերը պահպանել դիշերային ցուրտերից, ծածկումեն նորանց թեթեւ փսխաթներով, որ խափանումէին նոցա դուրս ձառագայթելը ջերմութիւն:

Նովատնայները հաստատումեն, թէ լուսնի փայլողութիւնը մի քնած մարդ կարող էր դէպ ի մահ հիւանդացնել. ամենահակայ նաւաստին կորուսանումէ իւր առողջութիւնը սաստիմեալով, եթէ արևադարձների տակ նաւի տախտակամածի վերակ քնումէր առանց ծածկոցի: Այս տեղ նկարագրծումէ դալնձակալ պայծառ օդի միջոցին մի սաստիկ ձառագայթումն դէպ ի դուրս: Աչքի վերայ պրած մի արմատաթերև պահպանումէ անապատի մէջ քնած ճանապարհորդը կուրութեան երեսից, և Նուսինգոլ ֆրանսիացին պատմումէ մի աչքաբորբոքութեան մասին որ նա և նորա սեամորթի ծառան ստացան, որովհետև նոքա հարաւային Ամերիկայի սարերի անօսր, պայծառ օդի մէջ շրջած էին առանց քօղաւորվելու:

Այժմ յառաջ բերինք մի քանի, լուսնին վերաբերված, մի մանուկ շատ վաղաժամանակեայ կանոններ, որ Արաբօ, Ֆրանսիացի բնագէտը ժողովել է միասին և բացատրել է:

Պլինիոսը և Պլուտարքոսը ասումեն. Նումինը առաջ խոնաւութիւնք է թափում ամենայն մոլմինների վերայ որ նորա լուսին հնձարկված են: Այս լոյսը շուտացնումէ շնչական նիւթերի հեղուկութիւնը. — Ու այս տեղ կայ ձշմարտութիւն, բայց պիտոյ է խօսքը այսպէս դարձուցանել. լուսնի փայլողութեան հնձարկված մոլմինքը ծածկվումեն խոնաւութեամբ և այդ պատճառով շոյտ փոխարերվումեն դէպ ի հեղուկութիւն: Մի հովանաւոր ծածկոց այս մոլմինների վերայ բաւական շատ պահպանումէ հեղուկութեան երեսից — ոչ թէ հետ պահելով լուսնի լոյսը, այլ խափանելով մոլմինների դէպ ի դուրս ձառագայթողութիւնը և այդպէս խափանելով ցօղի դոյանալը:

Սպանիական Ամերիկայի բնակիչքը կարծիք ունին, թէ ձրկնեի, որ հնձարկված էին լուսնի փայլողութեանը, կորուսանում

իւրեանց համը և ստանուածեն փափկային միս, և եթէ մի վերաւոր ջրուն բացօթեայ ենթարկվուածը այն լուսին, վատանուած վէրքը և շատ անգամ լենուած անբժշկելի։ Նրկրքին առաջարկութիւնքը ևս սխալ չեն, միայն թէ պիտոյ է հասկացվին վերևուտը ակնարկված կերպով։ Ալլև այն առաջարկութիւնը, թէ լուսնի լոյս սևացնուած երեսի գոյնը, չէ մերժելի անպայման կերպով։ Մի թերթ եղջերաթաղթ 1) որ սովորաբար, լուսի աղդեցութեան տակ շատ շուտով և սաստիկ փոխոխուած իւր գոյնը, այնու ամենայնիւ, լուսնի վայլողութեամբ, ոչինչ կորուսանուած չէ իւր սկզբնական սպիտակութենից. բայց դուրս վերնամորթի մխողութիւնը պարզ երկնակամարի միջոցին ունի մի վերնասակաւ ազդեցութիւն երեսի գոյնի վերայ։ Այս բացատրութիւնը այնքան ևս ընդունելի է լինուած, որ լուսնի մասին չիշողութիւն չկայ այն առածի մէջ, որ հարաւային Ֆրանսիայումը և այլ տեղերուտ մայրերը իւրեանց աղջկներին մի գիշերային զբօսանքի միջոցուտ չիշեցնուածեն, ասելով.

Que lou sol y la sereine ,(թէ արեգակը և պայծառ գիշերը
Fan veni la gent mouraine. Այս սևացնուած մարդերի երեսը։)

Ուրեմն մինչև այժմ լուսինը ունէր միայն մի վիպայի պաշտօն։ Միւս երևոյթների մէջ, նա յայտնապէս նշան է միայն ծը ոմոցքեայ որէսոնենը։ Մի քանի այդպիսի հանդամանք չիշենք այս տեղ, և դարձեալ կը տեսանենք, որ լուսնի ազդեցութիւնը մի խաբէական եղբակացութիւն է։

Մի, աւելի քան թէ 1000 տարի հին դրքի մէջ, որի հեղինակն է Պրատոս Յոյնը, գտանուածենք այսպիսի կանոն. «Նթէ լուսնի երրորդ օրուանը լուսնի եղջիւրները պարզապէս դուրս են վարդած, երկինքը լենելու է պայծառ, սկսանվող ամսի մէջ։» Գերմանիայի շինականը ասուած. եթէ լուսնի մանգաղը այնպէս երկար ու սուր է, որ կարելի էր նորա վերայ կախ տալ մի մրտրակ, ապա գալու է պայծառ եղանակ։ Յստակ օրի միջոցին, ա-

---

1) Մի տեսակ, ջրի մէջ լուծանելի, սպիտակ, աղեհամ բաղադրութիւն արծաթից ու աղային թթուութենից, որ կրակի մէջ հալվելով գոյացուած մի եղջերանման թափանցիկ մարմին։

ձեցող լուսինը, երբ որ երեկոյին դուրս էր գալիս կամաց կամաց չքացող արեւալուսի միջից, ունի արդարեւ մի մանգաղի կերպարանք, որ արձակվում երկու շատ նուրբ սուր ծայրերով։ Եայց եթէ աստղաձեւան պղտորված է, ապա եղջիւրքը երեւումեն որպէս թէ լայնանում էին. բայց այս լայնանալը մի առ աչօք բան է. դա յառաջանում նորանից, որ աստիղ լուսաւորված շրջիկը, որ այդ լուսաւորի (լուսնի) հետ ունէին մի երեւութական կապակցութիւն, պատկերանումեն որպէս նորա լրագործական մասն։ Մանգաղի առաւել վերին ծայրերը ասես թէ խորասոյզ են լինում պղտոր լուսի մէջ եւ այդպէս անհետանումեն աչքի համար։ Եթէ զննումենք լուսինը հեռադիտով, այնուհետեւ դրեթէ ամենեւին ոչնչանում առ աչօք տեսիլը։ Ասածներիցս հետեւում, թէ լուսինը պարզ աչքով քննած, սպասաւորում որպէս յայտարար նշան, արդեօք շատ թէ փոքր լրատած էր աստղաձեւան շրջիկներով։ Այս մտքով, վերոյիշեալ կանոնի մէջ դրած կայ զգալեալ ճշմարտութիւն, միայն թէ անտեղի չափազանցութիւն է, այն միջոցը որի համար նշանը խորհուրդը ունի, սահմանել իսկոյն մի բոլոր ամսի երկարութեան վերայ։ Այլեւ աստղաձեւայի լուսաւորութիւնը այնպէս փոփոխական է, որ մի եւ նոյն երեկոյին լուսինը կարճ միջոցներով երբեմն բոլորակված, երբեմն սրածայր դուրս վաղելով կարող է տեսանվիլ։ Ահրա որ ընծայումեն լուսնի ամեն մի քառորդին մի ջոկ ազդեցութիւն, ձգումեն խրեանց անձը մի այլ զժուարութեան մէջ։ Այսինքն, եթէ լուսնի կերպարանքը երկրորդ օրում իսկոյն որոշումէ եղանակը բոլոր մնացած ամնու համար, ապա ուրեմն առաջին քառորդը, լուսնի լրումը եւ վերջին քառորդը պիտոյ է լինին առանց որ եւ իցէ ազդեցութեան։

Վերոյիշեալ եղանակաւոյց կանոնը եւս աւելի բացատրած է մանրամասնաբար. այսինքն, եթէ լուսնի ծածկուելու միջոցին, երեկոյին, նեւմացած է առաջին եղջիւրը, ապա լինում անձրեւ լուսնի լրութենից յառաջ. եթէ ամնցող լուսնի մէջ տեղը նեւմացած է, ապա անձրեւ է գալիս նոյն իսկ լուսնի լրութեան մօտ. բայց եթէ նեւմացած է վերին եղջիւրը, ապա անձրեւ կը գայ լուսնի նուազութեան միջոցին։ Այս կարելի է ասել թէ այս տեղ խորհուրդ կայ. պատճառ, երբ որ աստղաձեւայի առաջին սահմանը պղտոր է, ապա պիտոյ էր անձրեւի

սպասել քան թէ երբ որ պղտորութիւնը պատահումէ աւելի դէպ ի վեր: Բայց լուսնի բոլոր կլորպատքը այնքան փոքր է և նորա պղտորութիւնը ամեն մի փոքրիկ շոգեկոյտից այնպէս կախ, որ ամենևին կարելի չէր թոյլ տալ մի այդպիսի մեկնաբանութիւն: Ընդհ՚ն, եթէ երկու զննիչ մարդիկ մի քանի հաւասարաւոր կամ հաղարաւոր քայլափոխ հեռաւոր էին միմեանցից, կարող էր պատահել, որ մինի համար վերին եղջիւրը, միւսի համար ստորինը, այլև շոգիների մի և նոյն փոքրիկ քանակութենից կարող էր նախմայած լինել. ուրեմն լուսինը կարող էր մի և նոյն քաղաքի երկու քաւորդի համար ցուցանել մի մօտաւոր և մի հեռաւոր անձրև: Եթէ այդ բանը լինէր ապրիլի կամ թէ նոյեմբերի մէջ, այնուհետև լուսինը գուցէ թէ արդարանալով դուրս էր գնալու այս փոթի միջից, որովհետև այս ամիսների մէջ շատ անգամ ոչ թէ միայն մի ամսում կամ թէ մի շաբաթում, այլև մի օրի մէջ անձրև է գալիս շատ անգամ:

Ա՚ի այլ եղանակացոյց կանոն ասումէ. «Եթէ լուսինը ջորտրդ օրումը չէ ձգում ոչինչ ստուեր, ապա ապառումեն վատ եղանակի: Եթէ այդ նկատողութիւնը ուղիղ է, ապա լուսինը է միայն մի յայտարար նշան, թէ ինչպէս էր ատմոսֆերայի դրութիւնը: Ջորտրդ օրումը լուսնի եղջիւրը դեռ ևս նեղ է և փայլումէ միայն դրեթէ երեկոյեան աղօտալուսի միջոցին: Երկրի վերայ եղած աստղականների ստուերները կարող են այն միջոցին անտեսանելի լինել, թէև ատմոսֆերան չէր դեռ ևս շատ պղտոր. այս պատճառով երբորդ օրը ոչինչ խորհուրդ չունի այս մասին: Բայց չորրորդ օրումը պիտոյ է պղտորութիւնը շատ ատաղիկ լինի, լուսնի լոյսը որշափ և իցէ անհետ կացուցանելու համար. այնուհետև գալոց է անձրև: Հինգերորդ օրումը լուսինը այնքան աճել է, որ ստուերները կարող չեն այլևս անհետանալ. ուրեմն միայն չորրորդ օրի ստուերազանազանութիւնը որպէս անյարգող եղանակացոյց: —

Մինչև այժմ կարողացած չենք ընծայել լուսնին ոչինչ եղանակաբեր ազդեցութիւն ջերմութեան կամ եղանակի վերայ: Բայց մի անհակառակելի ներդործութիւն յառաջացնում նա օդերեքին ծովի վերայ: Նորա մօտաւորութեան միջոցին ծանրաչափը (բարոմետրը) դաճանում մի դճաչափ աւելի քան թէ նորա հե-

ռաւօրութեան միջոցին, որ մի և նոյն էր, եթէ ասէինք թէ լուսնի մօտաւորութիւնը նշանաւոր է աւելի առատ անձրևով քան թէ լուսնի հեռաւորութիւնը: Օդմոլոր քաւորութենէն ապրեցութիւնը կարող էր յառաջանալ միայն լուսի զանազան քանակութենից, բայց մի այսպիսի ազդեցութիւն օդի ճնշողութեան վերայ, թէպէտ հաստատուածն պէտն, անբացատրելի է մեզ համար: Արդեօք լուսինը, երկրի շրջանակութեան միջոցին, պիտոյ է յառաջացնէր օդերէն ծովի մէջ մի նմանատիպ տեղաւորութիւն և մակընթացութիւն, որպիսի յառաջացնում ովկիանոսի մէջ, այդ դէռ եւս անհասկանալի է մեզ:

Աւելի բացայայտ է, Շուրջերի քանակութեանցն հետազոտութիւնների հիման վերայ, լուսնի ազդեցութիւնը անձրևի վերայ: Անձրևային օրերը առաւել բազմաթիւ են առաջին քառորդի և լուսնի լրութեան մէջ, առաւել սակաւաթիւ, վերջին քառորդի և նոր լուսնի մէջ: Համեմատութիւնը բացատրերով մի բոլորակ թուով, այնպէս է որպէս 6-ը 5-ի հետ, ուրիմն այնու ամենայնիւ տարբեր: Եթէ լուսնի ընթացքը բաժանենք ութ մասն և անուանենք միջոցները նոր լուսնից մինչև առաջին քառորդը, առաջին ութամասն և այդպէս յառաջ գնանք, ապա լինելու է կանոնը այսպէս. դէպ ի երկրորդ ութամասը անձրևը առաւել յաճախ է. սորա հակառակ վերջին քառորդի ու չորրորդ ութամասնի մէջ առաւել նուազ է անձրևը: Նոր լուսինը աւելի մօտ է արեգական հղանակին, լուսնի լրութիւնը աւելի մօտ է պղտոր ժամանակին. նոցա անձրևային օրերի հաւասարութիւնը այնպէս է հնչելիս 30 ու 33-ի մէջ:

Ամենեցուն յայտնի է, որ լուսնի կերպարանափոխութիւնները ընդհայտ են երբեմն յաջող և երբեմն ձախորդ ազդեցութիւն եղանակի վերայ: Լուսնի չորս կերպարանքը ասում են թէ փոփոխում են եղանակը. բայց այս խօսքը այնքան ընդհանուր և անորոշ է, որ աներևոյթ կարելի բան հնար է եզրակացուցանել դէպքից, մանաւանդ եթէ ոչ թէ միայն նոր և լրացած լուսնի օրը, կամ թէ նոյն իսկ երկու քառորդի օրը, այլև նախընթաց ու յաջորդեալ հաւանութիւնք որպէս նախազուշակիչ: Ընդհանուր ենթադրութիւնը որպէս թէ լուսնի իւրաքանչիւր կերպարանափոխութիւնը ներգործում մի ազդեցութիւն, անհայտանի ան-

մոռթիւն է։ Նթէ ընդունէինք այդ բանը, այնուհետև երբէք լինելու չէր մի հաւասար եղանակ աւելի երկար քան թէ մի շաբաթ. այլև նոր լուսինը պանապանվելու չէր լուսնի լրումենից. նոքա կամ պիտոյ է նախընթաց քառորդի վաս եղանակը լաւացուցանէին կամ թէ լաւը վատացուցանէին։

Պետմ մեզ դեռ ևս յիշատակել մի հանգամանք, որ թէպետև զգուշացնումէ մեզ այն խաբէական եզրակացութենից որպէս թէ լուսինը ցրտաբեր էր, բայց այդ բանը հաստատումեն շինականքը, աղօրիպանքը և նաւարկուքը, այլև ուսումնական մարդիկ, ինչպէս Հումբօլդը և Ջ. Հերշելը։ Լուսինը, մանաւանդ թէ լուսնի լրումենը երևելով երկնակամարի վերայ, ասումեն, թէ կարող է ցան ու ցիր առնել մի ոչ շատ թանձր ամպային ծածկոց երկնքի տարածութեան մէջ։ Հերշելը շատ հաւանական է համարում, թէ լուսնի վերայ թագաւորումէ մի շատ ջերմ եղանակ որ աւելի սաստիկ էր քան թէ ջրի եռացութեան ջերմաստիճանը, որովհետև նորա մակերևոյթը 14 օր անդադար և անմեղմելի թողած էր արեգակի ներգործութեան կամքին։ Ուրեմն պիտոյ է լուսինը իւր բոլորանան լուսի միջոցին կամ թէ մի քանի օր յետոյ, փոքրիկ չափով, մի ջերմաբուխս տպաւիպ լինէր երկրի համար։ Բայց որովհետև այս ջերմութիւնը դուրս է բղխում մի մարմնից որ շատ ցած էր ջերմութեամբ քան թէ մի այլոզ մարմնի տաքութիւն, տպա կարող չէր հասանել երկրի մակերևութեին, քան որում մնաշվելու էր վերին օդաշերժերի մէջ ուր մի պայծառ ամպաժողով յեղափոխումէր դէպ ի մի թափանցիկ շոգի։ Նթէ մտածինք, թէ լուսնի ծագումենք, որպէս շատ բնական է, քան մեծի մասին նկատվումեն լուսնի լրումենից մի քանի օր յետոյ, ապա այն փորձը համաձայնումէ միւս փորձի հետ, թէ ժամանակը լուսնի լրումենից յետոյ առաւել պայծառանումէ։

19 տարուց յետոյ արեգակը, երկիրը և լուսինը դարձեալ գտանվումեն դրեթէ մի և նոյն գլուխեան մէջ դէպ ի միմեանց կողմը. ուրեմն ծովի տեղատուութիւնը և մակընթացութիւնը, նոր լուսինը և լուսնի լրումենը միւսանգամ նոր ի նորոյ սկսանումեն իւրեանց ընթացքը։ Սորանից եզրակացուցած են, թէ և եղանակը որ 19 տարի յառաջ էր գնացել իւր սահմանեալ կար-

գով, նոր ի նորոյ պիտոյ է սկսանիլը ընթանալ նոյն կարգով, ուրեմն և կարելի էր մի նկատողութենից, որ այս միջոցից յառաջ արած էր, սահմանել բոլոր ապագայ փոխոխութիւնքը։ Այլ փոյթը ամենևին ամկնանգիման հակառակութեամ այդ առաջարկութեանը։

Այլև, թէպէտ 19 տարուց յետոյ կրկնվում լուսնի մի և նոյն դրութիւնը դէպ ի երկիրս, բայց ոչ նորա հեռաւորութիւնը։ Լուսինը իւր էլլիպտեան (երկայնաբոլորակ) շաւղի մէջ առ փոքր փոքր շեղում ուղղութիւնը իւր ամենամեծ և ամենափոքր հեռաւորութեան երկրից. 8 տարու և 10 ամսի մէջ միայն դարձեալ ստանում ճշտապէս նոյն հեռաւորութիւնը մի և նոյն լուսակերպարանքի համար։ Այլ որովհետև լուսինը պատճառում այնքան և ասստիկ մեկնութացութիւն ծովերի մէջ, ինչքան աւելի մօտ էր, ապա կարելի է եղրափակել, թէ և ամսոջիւրայի մասին լինում 8 տարի և 10 ամիս տևող շրջանառութիւն անհաւասարութիւնների։ Այլ յայտնի ու հաւաստի է, որ թոյլ տալով այդ բանը, ընկնում նք հակառակութեան մէջ թէ դէպ ի իսկութիւնը և թէ դէպ ի այն 19 ամեայ ժամանակամիջոցը։

Ընթիւ ու անհամար են այն ապրեցութիւնքը որ լուսինը, ինչպէս ասում են, ունէր օրգանական բնութեան վերայ։ Ընդհատ օրերում Ֆրանսիայի մէջ մի անտառատնտեսութեան կարգադրութիւն կար, որ կարելի էր միայն փայտ կտրել անտառում, երբ որ անցած էր արդէն նոր լուսնի միջոցը։ Հաստատում էին, որպէս թէ այն փայտը որ կտրվում էր լուսնի ամման միջոցին, անօսր էր, շատ հեշտ վնասվում ճճիներից և ստանում ճեղքեր։ Գտնէ այս բանը յառաջանում անձրևի առատութենից լուսնի ամման միջոցին։ Մի անուանի Ֆրանսիական գիտնական տես, որ փորձ արեց փայտ կտրելու մասին անտառում, չդտաւ այդ բանի հաստատութիւնը։ Նոյնպէս եղաւ և այս կանոնի փորձը. որպէս թէ, կաղամբ կամ այնպիսի աղցանաբոյս անկելու միջոցին, որ տալիս էր սերմը, հարկաւոր էր սերմանել կամ տընկել լուսնի նուազման ժամանակին։ Այլ եթէ կամէին անկել բոյսեր ու ծառեր որ ստոր են բարձր դէպ ի վեր աճել և ուժգին շառաւիղներ արձակել, ապա պիտոյ էր սերմանել, անկել, պատուաստել, խուզել նորանց լուսնի ամման միջոցին։

Խրախճանքի մեջ անկարկու մարդիկը սովորութիւն ունին բոլոր անդադար ալմաստաւոր բոյսերը, ղոր օրինակ Խոմի ալմաստր, Պատտաք, Մանիոք անկիլ լուսնի նուազման միջոցին, բայց շաքարարբոյսը, եղիպտացորեանը, բրինձը և լուսիայք լուսնի ամման միջոցին: Բայց համեմատական փորձերով ստուգված է որ այդ անկարկուհիւններուն մասին անիստիր էր ժամանակը: Նա և թէ պիտոյ է խոհեր լինէր այդ մասին, այնու ամենայնիւ չափից դուրս նուրբ է այն կանոնը որ պատուիրում Պլինիոս բնագէտին հետևողներին այսինքն թէ լուսիան պիտոյ էր սերմանել լուսնի լրութեան, և ոսպը լուսնի նորութեան միջոցին: Ունի ազդեցութիւնը բուսականների վերայ կարելի չէ ամենևին ուրանալ. ղոր օրինակ Հնդկաստանումը կարծուելն փորձով ստուգած լինել թէ բուսականները որ գունաթափված էին արեգակի լուսից, լուսնի փայլուն ատկ գարձեալ ստանում իւրեանց կանաչ գոյնը:

Խեցգետինքը, ոստրէացքը և այլ խեցեմորթ կենդանիք, ասում են, թէ ասելի պատրաստ են լինում լուսնի լրութեան միջոցին, քան թէ լուսնի նորութեան ժամանակին: Մի այլ առաստել կամենում հաստատել մեզ, թէ շնչառների ոսկրների մեջ գտանվում ասելի ուզել, երբէք մորթէքին նորանց յատկապէս այս կամ այն լուսնակերպարանքի միջոցին: Մի քանի տերզերում շինականների մեջ տարածված է հաւատ, թէ պիտոյ էր հաւերի տակ ձուեր դնելու միջոցին նկատել, որ ձագերի գուրս սողալը պատահէր լուսնի լրութեանը մօտ: Փորձախայտումը ասում են թէ հաւերի տակ ձուեր դնելը պիտոյ է լինէր դէպ ի լուսնի լրութիւնը:

Ունի առանձին ազդեցութիւններ մարդու վերայ ընդունված համարեա թէ ընդհանրապէս: Մի քանի տեսակ վզուռոյցներ, լուսի վզուռոյց ասած, շատ անգամ ասելի ասասիկ ուռչում լուսնի լրութեան ժամանակին: Լերդախտութիւնը, ինչպէս ասում են, ասելի ծանրանում, և խելագարների կատաղութիւնքը ասելի յաճախ պատահում: Ծածկախորհուրդ և միշտ պիտութեամբ գարձեալ և գարձեալ հրաշալի պատմութիւններով զարդարած հիւանդութիւնը լուսնտութեան է մի մնացորդ այն բաղմաթիւ, լուսնի հետ կապակից եղած հիւանդութիւնների, որոնց ծանօթ էին առաջին ժամանակների բը-

ժիշկքը: Վաջուս գիտնական Օլերիոսը մերժուամ բոլոր այդպիսի լուանային ազդեցութիւններ և հաւատացնուամ, թէ իւր երկարաժամանակեայ բժշկագործութեան մէջ երբէք չէ նկատել դորա հետքը անգամ: Պրադօ Ֆրանսիսցին պատմուամ մի քանի օրինակներ, թէ ինչպէս արեգակը և լուսինը առաջին ժամանակներուն երկիւղ էին ձգել մարդերի վերայ: 1654 թուականի օդոստոսին մեծաստուն անձինք շատ, բժիշկներուն խորհրդատուութեամբ թոյլ տուեցին փակել իւրեանց լաւ պատսպարած, լաւ ջերմացուցած և ծխած սենեակներուն մէջ, որ ազատվէին այն վնասակար ազդեցութիւններից որ երբեւ թէ լինելու էին այն օրին պատահելի, արեգակի խաւարմանից: Խազմութիւնը մի այնպիսի յուսահատ դրութեան մէջ էր, որ քահանայքը ժամանակ չունէին ահ ու դողմ մէջ ձգած մարդերին խոստովանեցնել. այս բանը պատճառ տուեց մի քահանայի, Փարիզին մօտակայ գեղի մէջ քարոզութեան բեմից ծանուցումն առնել, թէ արեգակի խաւարումն տատն և չորս օրով յետ է ձգած, և այս պատճառով տեղեք չիլոր այդքան շատ շտապելու: Հաւանաւոր անգլիացի Խաքօնը ամեն անգամ, երբ որ պատահումէր լուսնի խաւարումը, կորսանոումէր ուշը, և զգաստանումէր նոյն չափով, ինչ չափով այդ լուսաւորը վերատին պայծառանումէր իւր նախկին:

Ընդարձ, թէ որ լուսնի ազդեցութիւններից շատերը կանուխ արմատացած մոլորութիւնք և ոչ ստոյգ իրողութիւնք լինին. այնու ամենայնիւ պիտոյ է մեզ խոստովանել, թէ նորա մօտաձգութիւնը, նորա լոյսը և ջերմութիւնը կարող էին ունենալ մի ազդեցութիւն որ անյայտ էր մեզ: Գործք և աւօդական ազդեցութիւնքն էին արդարև, որ կատարումեն բնութեան մէջ մի մեծակշիռ պաշտօն:

Ս. Նազարեանց.

ԸՖՕՐԻՈՄՈՒԻ.

(Համառօտ գլխաւոր ըմբռնմունք Դատաիարակութեան մասին.)

—

Դատաիարակիչը պիտոյ է նշանաւոր լինի այս յատկութիւնքը. 1) մի անշահախնդիր սիրով որ պատրաստ էր յանձն առ-

նուլ ամենայն զրկանք. 2) անվաստակելի համբերութեամբ. 3) ծանրաբարոյ բայց քաղցր վարեցողութեամբ. 4) անարատ բարոյականութեամբ. 5) փորձված յաջողակութեամբ դաստատուն լինելու և սովորեցնելու կարգի ու պատշաճի:

ՀԵՐՔԵՆԷՈՒԵ:

Այս միշտ ունեցած եմ այսպիսի կարծիք, թէ մարդկային ազգը ոչ մի այլ կերպով կարելի չէ բարւոքել, եթէ ոչ բարւոքելով մանուկների դաստիարակութիւնը. բայց այս նպատակիս հասանելու, հարկաւոր է այնպիսի մարդերի գործակցութիւն, որ ոչ թէ միայն ունէին բարի կամք և ընդարձակ տեղեկութիւնք, այլ որ կարող էին գրաւել ամենեցուն յարգութիւնը:

ԼԷՔՆԷ.

Դաստիարակութիւնը բացում քո առաջև մի ասպարէզ աշխատաւոր լինելու մարդկութեան օգտի համար: Ով որ ցամաքեցնում մօրուտ տեղեր, շինում ճանապարհներ, հաստացնում մարդերին զանազան սիւռդքներըը, հաստատում հիւանդանոցք, նա նոյնպէս աշխատաւոր է հասարակաց օգտի համար, բայց ոչ այնքան պարզուղիղ և հաստատ կերպով, ինչպէս դաստիարակիչը: Առաջինը բարւոքացնում միայն նիւթական դրութիւնը մարդերի, բայց վերջինս ամենացնում նոյն իսկ մարդիկը, և դորա հետ միասին առաւել բարւոքացնում նոցա կեցութիւնը: Այն մանուկը, որին կարողացել ես դու ամենացնել, դորանով իսկ կարողութիւն ես ստանում բարւոքել իւր հազարաւոր եղբայրակիցների դրութիւնը, որ ասպարէզի մէջ ևս կարգէր նորան Վախճանամոլութիւնը:

ՋՈՒՅՆ:

Աղէր նախ և յառաջ ինքդ այնպիսի, որպիսի կամիր շինել միւսերը:

ԷՄԻԼ.

Ուսուցանել և դաստիարակել մանուկները է ամենամեծ և ամենապատուական արդիւնաւորութիւնը, որ կարող էինք ցուցանել Թագաւորութեանը:

ԿՅԼԼԵՆ:

Ով որ զզուել է իւր պաշտօնի վիճակի պարտականութիւնքից, ումին ծանր բնոյն է թվում իւր պարտականութիւնը կենցաղավարվել մանուկների հետ, նա զուրկ է այն ամենամեծ օրհնութիւնից որ Նախախնամութիւնը պարգևում է մեզ, այսինքն, այն օրհնութիւնը որ է ուրախանալ իւր հանապազօրեայ վաստակի և իւր յատուկ անձնի կատարելագործութեան վերայ:

Հեռագիր:

Պէհաւոր պայմանը և առաւել անհրկեայ երաշխաւորը դաստիարակութեան յառաջադէմ լինելուն, ամիսուվուամէ դաստիարակողի անձնաւորութեան մէջ:

Պ. Բառոեր:

Թ. Լալայեանց:

ԸՕՉՈՒՅԻՆ ՅԱՒԱՆԱԳՈՒԹԻՒՆՔ.

Տան և ուխտերոյ դարու վերջումը, մինչ, Գրիմը ընկնելով Ռուսական թագաւորութեան դիրքը, մեր սիրելի Հայերը, ազատվելով Թաթարների բռնակալութեան լծից, գաղթուած էին դէպ ի Վոլգ գետի ափը և Նախիջևան քաղաքը շինելով սկսանումէին մի փոքր աղատ շունչ առնուլ, Նախախնամութեան ձեռքը քաղցրացնումէր աշխարհի մի հետաւոր մասնում —Հնդկաստանի մէջ — բարեպաշտ Հայերի սիրտը, օգնութիւն հասուցանելու այդ նորաշէն քաղաքին:

Հայերի կեանքը, նոցա պլուխիւնը աշխարհի երեսին, արդէն մի մեծ շարժառիթ է այսպիսի անձնազոհ օգնութիւնների, եթէ միայն ազգի անդամքը կարողութիւն ստանային հասկանալու իւրեանց անձը և իւրեանց ազգը: Թէպէտ և փոքր և շատ փոքր երևումեն մեր ազգի մէջ այդպիսի մարդիկ, այնու ամենայնիւ երևել են և երևումեն և չէ կարելի իսպառ ուրանալ: Մեծ ցաւը այն է, որ շատ անգամ դործը պատշաճաւոր ուղղութիւն չստանալով չէ հասել իւր ուխտեալ խորհրդին: Հիմ մեր ընդհանրապէս խոսակցութիւնը առիթ ունինք մի փոքր պարզելով շօշափելի կացուցանել մեր ընթերցողներին:

Նոր Նախիջևանի Հայերը ողջմիտ խնդճութեամբ բնակութիւն հաստատելով Ազովի մօտ, Դոնի ափուր, կորուսանելով իւրեանց հայրենութիւնը, շատերը նոցանից և ապրուստի հնարը, պատերազմական ծուխի և թափառական ճանապարհորդութեան փոշիների մէջ, երկար ժամանակ կարոտանալու էին ուշ դարձուցանել իւրեանց կեանքի խորհրդի վերայ, երկար ժամանակ պիտոյ է ամրացնէին իւրեանց նիւթերէն ոտքերը, որ այնուհետև կարողանային գնալ բարոյականի և իմացականի քամակից, ըստ որում հոգին առանց մարմնի չէ կարող գործ կատարել նիւթական աշխարհումս: Այս ողջմիտ դրութիւնը ազգի, նորա արտասուքը և աղաչանքը մոռացած չէին Նախայինամոութեան աթոռի առաջև. ազգի թշուառութեան լուրը կրսկծեցուցել էր շատ ավելիս սրտեր աշխարհի ամենայն մասներում գտանված Հայերի մէջ, և ահա երևումն մարդիկ, որ կամէին սրբել իւրեանց ազգակիցների աչքի արտասուքը, մխիթարել նորանց որպէս թէ ասելով. «սիրական եղբարք, դուք, եթէ անձամբ անձին հանդիսակից էք գտանվել այդ թշուառութիւններին, եթէ նեղութեան գաւազանը անխնայ չարչարել է ձեզ, մեք ևս անբաժան չենք գտանված ձեր վշտերին և ցաւերին, հոդևոյս: Մեր սիրտը շատ անգամ զարկել է ձեր համար, շատ անգամ արիւնով լցվել է ձեր համար: Սիրական եղբարք, դուք մեր անբաղդացած դիւրատատանի արիւնակից անդամք, մի՛ յուսահատվիք բոլորովին, դուք կարեկցութիւն կը գտանէք ձեր եղբայրակիցների մէջ. մեք բաժանորդ լինելով ձեր վշտերին, արդէն բաժանորդ կացուցանումենք ձեզ մեր հնարներին, որով օրհնել է Ամենակալ Տէրը մեր ձեռքի վաստակը:»

Մեր բարեպաշտ ազգասէրքը, իւրեանց հոգու լեզուով, ահա այսպիսի խօսքեր խօսելով, կտակներ տանդուսէին Նախիջևանի լինելոց դպրոցի, եկեղեցիների, աղքատանոցի և հիւանդանոցի անուններով. մշտնջենաւոր ժամանակով պարգևում էին իւրեանց գոյքը այդ աստուածահաճոյ շինութիւնների համար, անմահացնելով իւրեանց յիշատակը իւրեանց առաքինի գործերի մէջ:

Այս առաքինի Հայերից գլխաւորն է յիշատակի արժանաւոր Մասէհ Նաթանիանեան կամ Հասարակ կոչմամբ Աբրահամեան Մարտիրոսը, որ երկու կտակով, (մինը 1794 մայիսի 30-ից,

իսկ միւսը 1795 ապրիլի առաջին թուականից) աւանդում էր իւր անշարժ գոյքը Նոր Նախիջևանու դպրոցին և այլ աստուածահաճոյ շինուածների: Նորա ժամանակակից զանազան մարդիկ նոյնպէս չեն մոռանում Նախիջևանը, այլ քրիստոնէավայել բարի նախանձով հետևումեն նոցա օրինակին:

Բայց այն խնդիրը մարդկրի բարի խորհուրդը հաստատում, իւրեանց վախճանին. արդեօք Նախիջևանը հոգաբարձու լինում, այս դումարը խելացի կերպով ձեռք բերելու և խելացի ձևանապարհով գործ դնելու ազգի պիտոյքների վերայ, ահա խնդիրը:

Ազգն վաթսուն տարին լրացած դէպ ի ծօթանասունն է գնում, բայց Նախիջևանեցոց համար այդ ալծակերքը և աւանդութիւնքը հաստատուածն մի արաբական վիպասանութեան նման բան: Նախիջևանեցիք լսել են թէ կան այդպիսի ժառանգութիւնք, հասկանում են, որ ձեռք բերելով այդ կալտղութիւնը, հնար ստանալու են մի մեծ բարոյական (ի հարկ է դէպ ի լաւը) յեղափոխութիւն գործել իւրեանց հասարակութեան մէջ, բայց մի աննկերելի թուլութեամբ անհոգացած են մինչև այժմս, չը նայելով, որ ինչպէս միանգամ Պալկանցի Ազգասէր օրագիրը հրատարակել էր, այդ բանը ստանալու համար պայմանաձ ժամանակը կորուսանելով, զրկվելու էին այդ նիւթական մեծագումար հնարից: Վիճակ թէ անցածը անցել է, բայց այս լուսաւորեալ ժամանակումս, մինչ ամենայն տեղ մեր սիրելի ազգի մէջ փոքր ի շատէ երևումէ հոգևոր-բարոյական շարժողութիւն և դէպ ի լոյսը ձգտողութիւն, մինչ հանդիսի մէջ երևումեն մարդիկ, որ պարզ աչքով տեսանելով և հասկանալով ճշմարտութիւնը, քարոզումեն նորան մարդասիրական անձնասղոհութեամբ, մինչ ազգի բարեմիտ անդամքը ողջամիտ քարոզութիւնը և անաչառ հրատարակախօսութիւնը ընդունումեն ամենայն ողջմտութեամբ, զղջանքով նայելով օբսկուրանտների և հալածասէրների լարած որոգայթների վերայ — այսպիսի ժամանակում, ասում եմ, մինչ Հայոց ազգի հիւանդ կազմուածքը գտանվում այն րոպէում երբ յառաջանալու էր դարձը դէպ ի առողջութիւն, անտես առնել այդպիսի ժառանգութիւններ որով կարելի էր կանգնեցնել ազգի համար մի հոյակապ ապագան լուսաւորութեան, մինչ դեռ մի այսպիսի առողջ ծննդարանի հարկաւորութիւն մեծապէս զգալի էր բոլորին, մի՞թէ անբաւելի յանցանք և

անմերժելի դատապարտութիւն չէ այն հասարակութեանը, որ անփոյթ լինելով ազգի օգտի մասին, պատճառ էր դառնում ազիտութեան իշխանութիւնը ազգի հոդու վերայ յարատևել տալու:

Ընդարձ, եթէ հասարակութեան թուլութեամբ, անհոդութեամբ կամ չարաճճի մարդկերի ազգակործան անմիաբանութեամբ այդ ժառանգութիւնքը դուրս գան և կորչին Նախիջևանի ձեռքից, ապա այդ դիպուածում, Նախիջևանեցոց դատը սերունդքը պիտի յաւիտենական նախատինք և նզովք կարդան իւրեանց անհոդ և անփոյթ հայրերի և պապերի հոդացած ոսկրների վերայ:

Մեր համար շատ ցաւալի լինելով մի այդպիսի վատաբաղդութիւն, այս աշխատութիւնը յանձն առանք այդ կտակների հաւատարիմ օրինակները հրատարակել Հիւսիսափայլ օրագրի ձիռքով, և մեր բարի խորհուրդը այն է, որ մեր ժողովուրդը կարդալով այս շարքերը, վառվի գործունէութեամբ և յետ դրնելով ամենայն պղտորամտութիւն, անմիջապէս ինքը հոգաբարձու լինի այդ արծաթագրովքը ձեռք բերելու մասին, որ օտարի ձեռք ընկնելով, պիտոյ է յաւիտենական զրկանք լինէր անմխիթար Նախիջևանին:

Կտակների օրինակքը, համար 1, 2, 3, 4, և 5.

Ընդհանուր կտակները, որ կարդալով և տեսանելով, թէ բարեպաշտ կտակատուքը մինչև այս րոպէս չեն հասել իւրեանց նպատակին, դդումեանք մի մեծ ցաւ մեր ազգի շատ ճշմարտասէր անհոդութեան վերայ: Ջերմ սրտով աղաչումենք Ամենակալ Տէրը, որ Նա խնայելով Նախիջևանի հասարակութեանը, յառաջացնէ նոցա մէջ մի գործունէութեան հոգանդ այդ արծաթագրովքը ձեռք բերելու և նոցանով իւր բարոյական վիճակը բարւոքելու:

Ընդհանուր հոգաբարձութիւնը, որ պիտոյ է առնէր Նախիջևանը, էր պատշաճաւոր կերպով վերահասութիւն դործել, թէ ինչպէս է մինչև այսօր առանալի դոյքի վիճակը, ոքանչի հաստնուամ բոլորի դումարը, ուր և որի՛ ձեռքում գտանվում են ներկայումս: Թէպէտ և այդ բաների մասին գրաւոր կարելի է խօսք ու ըղոյց բանալ Տէրութեան Վարչապետութեան ձեռքով. բայց, ինչպէս իրաւապէտ մարդիկ, որոնցից խորհուրդ ինք հարցու-

ցած, ասացին մեզ անկեղծութեամբ, թէ կարճ ճանապարհով այդ բոլոր տեղեկութիւնքը ստանալու համար, հարկաւոր է, որ հասարակութիւնը մի բանագէտ և հարազատ մարդ ընտրէ իւր միջից և ուղարկէ նորան արևելեան Հնդկաստան օրինաւոր վերահասութիւն գործելու համար: Մի այդպիսի պարոնի ճանապարհը կը լինի Նախիջևանից Կոստանտնուպօլիս, Կոստանտնուպօլից Ադրիանոպոլիս (Ադրիանոս, Մ. Ըսբը), Ադրիանոպոլիայից Սոֆեան պարանոցով, կարմիր Ծովով Հնդիաստանի Ծովահայեաց Բօմբայ քաղաքը, կամ մի փոքր հեռի, Կալկաթա:

Այս ճանապարհորդութիւնը, դնալը, այն տեղ հասնելը և վերադառնալը կը տևէ գոնէ վեց ամիս, դնացողը ծախս կ'ունենայ մօտ 3000 ռուբլի մի փոքր պակաս կամ աւելի: Նրը բոլոր ծանօթութիւնքը ստացել էր Նախիջևանը իւր պատգամաւորի ձեռքով, ապա կարող է անմիջապէս Տագանրօգու քաղաքապետի, Նոր-Ռոսսիայի Կուսակալի և նեղքին գործերի Նախարարի ձեռքով խնդրել Տէրութեան հաճութիւնը, որ Արտաքին գործերի Նախարարը անդլիական Դեսպանի, Հնդկեայ կառավարութեան ձեռքով պահանջէ այդ արծաթագլուխը:

Նախիջևանը, ինչպէս նաև ուրիշ հայաբնակ քաղաքները, կարօտ է մի հիմնաւոր ազգային աշխարհական ուսումնարանի, որի տէրը լինելու էր ինքը անմիջապէս ազգը, առանց դիմելու դեպ ի հոգևոր մարդերի գործակցութիւնը, ըստ որում ինչպէս քանի անգամ ասած ենք, նեղ է նոցա հանդէսը այդ բանում, և այժմեան լուսաւորեալ ազգերից ոչ մինը չէ հասել իւր լուսաւորութեան նեղկայ աստիճանին, հոգևոր դաստիարակների ձեռքով: (Տես Իւսիսափայլ առաջին Տարեդնաց 1858, Յունիս, Համար 6. երես 475, և Նոյեմբ. Համար 10, երես 310) Մեզանից յառաջ ազգերի կատարած փորձը պիտոյ է մեզ խրատ և օրինակ լինի:

Նախիջևանի հասարակութեան վերոյ տուրը և անմերժելի պարտականութիւն կայ, հեռևիլ և ձեռք բերել այդ ժառանգութիւնքը, երևելի մայրաքաղաքներում օգտաբեր շինուածք դնել, հաշուատուն կազմել այդ շինուածքի կառավարութեան համար, այնպէս, որ միշտ շէն մնան նորա որպէս զի կարողանան գոնէ հարիւրին 8 տոկոս բերել, որով պիտի պահպանվէին լինելոց ուսումնարանը, տպարանը, հիւանդանոցը և այլն և այլն:

Նախիջևանը այդ արծաթագլուխքը այսպիսի օրինաւոր և պատշաճաւոր կերպով կարգաւորելուց յետոյ, պարտական է իւր ուսումնական, ազգասէր, լուսաւոր, ձշմարտասէր երէցայնների խորհրդակցութեամբ կազմել մի առաջարկութիւն հիմնելու մի այնպիսի բարեկարգ դպրոց, որ առաջինը լինէր, և տան տարու մէջ ամենայն հայ մարդ պարծանքով և զմայլանքով դալուց իւր աչքը այդ դպրոցի վերայ:

Մի այդպիսի ազգային աշխարհական բարեկարգ դպրոց, նախ և յառաջ կը լինէր մի լուսաւորութեան առաղջ ծննդարան մեր ազգին. երկրորդ, Նախիջևանին փառք ու պարծանք, իսկ բարեգործ, ազգասէր, հանգուցեալ կտակաւանդներին անմահ յիշատակի արձան:

Մենք մեր կողմից կատարեցինք մեր պարտականութիւնը վերրատին կենանք տալով այդ կտակներին. այժմ մնում է Նախիջևանի հասարակութեանը խորհուրդ կատարել և չանհոգանալ այդ արծաթագլխի մասին, որ բաւական մեծ զօրութիւն է, և որ կարող է ոչ թէ միայն Նախիջևանի, այլև ուրիշ շատ քաղաքների բարոյական վերածնելութեան պատճառ լինել: Ինչպէս մեր միտքը գալիս է, Ազգասէր օրադրի հրատարակութիւնը, այդ ժառանգութիւնքը ստանալու համար, պայմանաձ է ժամանակ, և այդ ժամանակը շատ մօտ է վերջանալու, և եթէ անց կացաւ, այնուհետև կորուսանելու է Նախիջևանը իւր իրաւունքը այդ արծաթի վերայ: Ով ականջ ունի լսելու, թող լսէ:

Մ. Նալբանդեանց:

ԿՏԱԿ·

ՀԱՄԱՐ Ա·

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԻՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՑՐ ՆԻ ՈՐԴԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ·

Կեցո զիս ներքոյ կամ ստորագրող Թաւաջանի և կամ հասարակ կոչմամբ Մարտիրոսի որդի Մասէից, որ եմ հաւատով ուղղափառ Քրիստոնեայ, ազգաւ Հայ, քաղաքաւ և ծննդեամբ Համադանցի, գործով վաճառական բնակիչ կալկաթայ քաղաքիս որ ի հնդիկս ընդ տէրութեամբ Անգղիացւոց, ամէն· Ցամի ՌՃաոն հազար ևօթն հարիւր իննսուն և չորք միայս ամնոյ յերեանորջն, ես յիշեալ Մասէից յառողջ ժամանակի իմում ամենայնիւ զգաստ միտս և զգայարանս ունելով հաստատեցի կտակս այս իմով ստորագրութեամբ, յորում նախ յայտնեմ զամենայն ստացուածս իմ որ ունիմ ներկայ, որպէս ամենայն յատկութեամբ ի ներքոյ գրեալ տեսանի, այսինքն առաջինն այս է, զի մերձ Հայոց եկեղեցւոյն ունիմ մին մեծ բալահանայ տուն, որ ընդ լայնութեամբ տանն ի հիւսիսոյ ցհարաւ ի ներքոյ շինուածոյն յարևմուտս որմի անդ ծայրէ ի ծայր դուքաններ են, զոր յանցեալ տարւոջըն շինել ետու ի հիմանէ հաստահեղոյս և լուաշէն կառուցմամբ ծախելով ի սմա քառասուն և հինգ հազար ռուփի ոքայ· և այս տանս սահմանն արևելեան կողմն է նեղ և անելք քուչայ· հարաւային կողմն է լայն արձակ և հասարակ քուչայ, արևմտեան կողմն է փողոց վաճառի, որ Ձինի բազարի սկիզբն կոչի, ուր և իմ դուքաններս են, իսկ հիւսիսայինն է, գաւիթն սուրբ եկեղեցւոյն· այսինքն յարևելից առ յարևմուտս հաւասար չափոյ տանս երկայնութեան ուղղագիծ որմն ձգի, յայնկոյս որմոյն ի հիւսիս եկեղեցւոյն գաւիթն է, յայսկոյս որմոյն ի հարաւ հանգերձ որմովն իմ տանս բաժինն է, որպէս տանս Բէլսէլն, այսինքն Շաբաշէն ևս վկայ է· Եկրորդ տունն է մերձ Հայոց և լատինացոց եկեղեցւոյն և է սահմանակից առ յարևելս և առ հիւսիս Գաբրիէլ Յովհաննիսի տան, առ յարևելս սհաթսաղ Մարգարի որդի Նիկողոսի տանն, իսկ ի հարաւ կողմանէ հասարակ քուչա որ տանս Բիլաւէթ ևս յայտնէ· Երրորդ տունն է սահմանակից առ յարևելս Սաքսանլուեան Ստեփանոս Ցարութիւնի տանն· առ հիւսիս Հնթանոս Ամիրչանտի տան, առ յարևմուտս Պաւիթ Ստեփանոսի տանն· իսկ հարաւ

կողմանէ հաստարակ քուէյայ, որ և ներկայ ի սոյն տանս քնակիմ։ Բայց յայսցանէ այլև ունիմ ինձ կայք սանաթով, չիլթով և խըսեպագրով պահանջմունս որպէս ամենահարկաւոր թուղթքն և աներիս բիլսեչն, փաթեքն և այլն, յերկաթեայ սանդղոյս գտանելոց են։ Եւ զայս ևս յայտնեմ ըզի ես ի սկզբանէ անտի ընդ ումեք զամենայն խարճ չեմ պահեալ երբէք ըստ ծիսի վաճառականաց, վասնորոյ ահա ճշմարիտն խոստովանիմ առաջի Աստուծոյ որ մինչի ներկայ թարեխս ամենևին ումեք չպարտիմ ինչ սանաթով, չիլթով կամ խսեպագրով, ուրեմն եթէ ոք պահանջևսցէ ինչ, անընդունակ արասցեն։ Ցետ այսորիկ այժմ իմ վերջին կամքս և պատուիրանս յայտնեմ վասն վերջին աւուրն իմոյ և մանաւանդ վասն իմ ամենայն ստացուածոյն և կայիցն և կամ վասն այլ ինչ հարկաւոր պատահմանց, զորս ամենայն աստ ի թղթոջս ի հինգ հատոր բանս լուանդակեմ, որ է այս։

Ա։ ՀԱՏՈՐ։ Նախ զհին պատուիրեմ կտակակատարացն իմոց զի թաղեսցեն զիմ մարմինս ի գաւիթն եկեղեցւոյն մերձ գերեզմանի մօտն իմ կատարեալ զամենայն հոգևորական պաշտօնս ըստ ծիսի քրիստոնէականաց օրինաւոր և միջակ ծախիւք։ սակս տեղւոյ գերեզմանին իմոյ մի՛ տացեն ինչ, քանզի սակս տեղւոյ գերեզմանացն իմոյ և վասն իմ տանս եղելոցն, երկու քառասն և մին կարտ գետին եմ տուեալ եկեղեցւոյն յիմ տան գնանիցեն, ուրեմն եթէ պահանջևսցեն ինչ և ձրի ոչ թաղեսցեն զդին իմ և կամ զդին ներքոյ յիշեալ Աննայրն, յայնժամ թաղեսցեն ի հանգստարանին Խնդլիզաց և զյիշեալ Աննայն թաղեսցեն ի գաւթի եկեղեցւոյն տալով զդին տեղւոյն գերեզմանին նորա նման այլոց և զլերն յիշեալ իմ տուած գետինն օրինօք դատաստանի տիրեսցեն և խառնեսցեն ընդ գետնի տանն իմոյ, և յետ թաղման մարմնոյն իմոյ երկաթեայ սանդուղս բացցեն ի ներկայութեան երկք բարեխառն անձանց և զամենայն եղեալսն ի նմա յիշեալ ներկայ պարոնաց վկայութեամբն և թափսիլովն տիրեսցեն։ Նոյն երկաթեայ սանդուղս մի՛ վաճառեսցեն, այլ զամենայն հարկաւոր գրեանքն իմ կրկին ի նոյն սանդղոյն պահեալ պահեսցեն վասն ապահովութեան։ Նոյնպէս ամենայն ստացուած և իմ անուամբ գտեալ տներ, գետին և կամ այլ շինուածք որքան և ներկայ ունիմ, որպէս վերն գրեալ կայ և կամ թէ այսուհետև ինչ ստացայց և ի ներքոյ դրեցիկ յատկացեալ նշանոք և սահմանօք, հանայն և բոլոր անշարժ կայքն իմ, այսինքն տներն և այլն. առանց վաճառել առանց գրաւել և առանց դրին դնել մեսայքն։ քանզի ամրափակեմ կտակաւս իմով և բառնամ զկարողութիւն ներքոյ յիշեալ սահմանադրին կայից իմոց և մանաւանդ նոյնպէս և իմ

կտակակատարացն, զի մինչի ցմին մատնաչափ տեղի ևս չունի և չունիցի ոք կարողութիւն վաճառել կամ գրաւ դնել զիմ անուամբ և ստացուածովք գտեալ տներն և այլն։ Եւ կամ՝ ի կողմանէ այսոցիկ հախսայ վեր առնուլ յիմ ըստատիցն, իսկ միւս այլ որ ինչ և գտանիցի ինձ շարժելի ըստատ, թէ նաղդ գրամ իցէ, թէ վաճառելի շարժուն իր, և թէ թալասներ, զամենայն շարժելի իրսն յիւրում ժամանակի վաճառանացն, թալասներս և տներիս քրէիցն ժողովեսցեն և ի ժողովեալ մապլաղիցն ֆի հարիւրին հինգ իւրանց հախսայ վեր առցեն։ Նոյնպէս և իմ թաղման, տների մարամաթի, խաղնի և ի ներքոյ յիշեալ երեսուն և մին ռուփի ամնական խարճն վեր առցեն և մնացեալ մապլաղին կումպանու սանաթ կամ սարթիւիկէթ առցեն մուդաթ մնացէ. եթէ կումպանու սանաթ կամ սարթիւիկէթ չստանիցի, գրաւականով մուդաթի գիցեն, մինչև մին արժանաւոր եկամուտ բերող տուն, կամ գաթ, կամ դուքաններ և կամ այլ ինչ արժանաւոր շինուած պատահեսցի և գնեսցեն, և յորժամ այնպիսի ինչ պատահեսցի՝ եթէ նոյն մուդաթի մապլաղն և իւր մուդաթն ոչ բաւականացցի զայն ի գնել, մուտաթի վեր առցեն որքան գրամ և հարկաւոր իցէ և ընդյն գնեսցեն և յետոյ յիմ տների քրէիցին հատուսցեն զպարտսն և ընդյն նոր ստացեալ շինուածքն ևս յորժամ գնեսցեն, ես թողում իմ ստորագրութեան ներքեւն իւր ամենայն սահմանն և նշանն յատկացուցեալ գրեսցեն և յայտնեսցեն թէ այս նոր շինուածքը և կամ ես ինչ տունն ևս վերն յիշեալ Մահէի ստատովն գնեցինք և որ յիշատակ մնալոց է առանց վաճառելոյ և առանց գրաւ դնելոյ յաւիտեանս ժամանակաց, որպէս վերն յիշեալ տներն և նորա քրէիցն ևս իմ միւս տներիս քրէիցի խոտուրն բաժանեսցեն իմ համեմատ իմ ներքոյ գրեալ Բ. հատորեալ պատուիրանին։

Բ. ՀԱՏՈՐ. Երկրորդ պատուիրեմ կտակակատարացն իմոց, զի Ստեփաննոս Ցարութիւնեան տան սահմանակից իմ երրորդ տանն և տան ամենայն սարանջամն, այսինքն աշնան քոլորն անպակաս յանձնեսցեն Թաֆխլոյվ իմ աղախին Աննային. ևս յիմ մահուան օրէն սկսեալ որքան և կենդանի մնացէ յիշեալ Աննայն, ֆի ամիսն երեսուն և մին ռուփի սքայ խարճի տացեն նմա, որ նոյն խարճովն և տան ամենայն սարանջամովն՝ ի յիշեալ տանն բնակելոյն առանց քրէիցի մինչև իւր մահն, և իմ ծնօղ աղախին Սուզային ևս յիւր կառավարութիւնումն պահեսցէ յիշեալ Աննայն նոյն խարճովն, բայց եթէ տարաձայնութիւն պատահեսցի, մինն և կամ միւսն չկամիցին միմեանց մնալ, յայնժամ իմ կտակակատարքն յիմ ստատիցն երեք հարիւր ռուփի սքայ տացեն յիշ-

եալ Սուղային և փարթամի առեալ ՚ի Սուղայէն հանցեն զնա ՚ի տա-
նէն, իսկ Աննայն մնացեալ ՚ի տանն մի և նոյն երեսուն և մին ուր-
պի աքայ ամսական խարճուվք, բայց չունիցի կարողութիւն վաճառել, գրաւ դնել
և կամ շնորհել ուժք զտուննն և կամ ՚ի տան սարանջամիցն հատորինչ,
ուստի յետ մեռանելոյ յիշեալ Աննային իմ կտակակատարքն զվերն
յիշեալ ամենայն սարանջամն և կամ այլ ըոր ինչ կայք գտանիցին յի-
շեալ Աննային վաճառեսցեն, և գուցէ յիշեալ Սուղայն մինչ ցմահ
յիշեալ Աննային մնացեալ իցէ ՚ի տանն իմ ընդ կառավարութեամբ
Աննային, յետ մեռանելոյ Աննային զվերն յիշեալ երեք հարիւր ոսկի
սքէն յիմ տների քրէհիցն տացին և հանցեն զնա ՚ի տանէն, տունն
քրէհով տացեն, տան քրէհն և տան սարանջամ և կամ միւս այլ
ինչ իրաց ծախսի մապլաղն ևս վերն յիշեալ իմ տներիս քրէհի խոտո-
րըն լաժանեսցեն համեմատ իմ ՚ի ներքոյ գրեալ պատուիրանին։ Արդ
զարձեալ ևս յիշեալ Աննային և Սուղային պատուիրեմ, զի ՚ի վերն
յիշեալ տոցա խարջին և այլն անխափան և անպատճառ տացեն, քանզի
բաղում ամք են յորմէ հետէ սպասաւորք են տանս իմ և մանաւանդ
մինչ քրիստոնէական հաւատս ընկալան ՚ի տանն իմ, վասնորոյ առա-
ւել հարկ է զնոսա խնամել։

Գ. ՀԱՑՈՐ. Երրորդ պատուէրս յայտնեմ կտակակատարացն իմոց,
զի ամենայն կայք, այսինքն վերն յիշեալ տներն և այլն ըոր ներկայ
ունիմ և կամ ըոր այսուհետև ստացայց Աստուծով, այսինքն զկնի
մահուան իմ ամենայն որ ինչ կայք գտանիցին ինձ ՚ի վերայ աշխարհիս,
զայն ամենայն միանգամայն ահա ՚ի կենդանութեանս իմում գրովս
հաստատեցի ՚ի ժառանգութիւն ներքոյ յատկացեալ տեղացն այս-
պէս։ Իմ ամենայն կայքն տասն և վեց լաժին և կամ մասն համարե-
լով, ՚ի նոյն տասն և վեց մասինքն ուրն մասն վաղճ արարի և կատա-
րելապէս ետու յԱղով գաւառող նոր Նախիջևանու քաղաքին հայոց
բարեկարգութեանցն։ այսինքն երկու մասն դպրատանցն, երկու մասն
աղքատանոցին, երկու մասն հիւանդանոցին և երկու մասն որոց տանն
առ ՚ի մնալ անդ ՚ի նոսա ինձ յիշատակ ՚ի քաւութիւն մեղացս և ՚ի
վսեմարութիւն ազգին մեր։ Եւ մնացեալ յուրն մասանց վեց մասն
Թողումեմ մնալ վասն կալկաթայ քաղաքիս կօրսա Աֆռէկուիշտի
բանտարկելոցն, այսինքն փոքր Ջըլի բանտարկելոցն։ և երկու մասն
Թողումեմ մնալ վասն կալկաթայ եկող Հայոց ազգ ղարիբականացն,
այսինքն Հայաստան աշխարհիցն մեր ազգ ղարիպական աղքատ բիռու-
զիգար մարդկանցն որք եկիսցեն աստ, որպէս վերն գրեցի Թէ իմ ամե-
նայն ստացն տասն և վեց սամ խսխպվի, ահա այս երեք տեղեաց բա-

ժինն եղև տասն և վեց սահ, որպէս վերն սահ արածիցն յայտնի է։ Արդ աստանօր վերն յիշեալ սահմանէրէրիցն և նոցա կողմանէ տեղս եղեալ վէքիլներիցն, որ իմ կտակակատարքն պէտք է լինին, 'ի նոցանէ ևս խնդրուածս և պատուիրուածս որ միշտապէս հաւատարմաբար հետևող եղիցին տների մարամաթին և քրէհով տալցին, որ մի գուցէ անմարամաթ և դատարկ մնալով տներն քանդվին և աղքատքն 'ի մխիթարութենէ զրկուին, ուրեմն պատուիրեմ զի իմ կտակատարքն այսպիսի հաւատարմաբար հոգացողութեամբ յամենայն տարւոջ դեկտեմբեր ամսոյ իմ ստատի նոյն տարէն եկամուտն ջամ անեն և ջամ եղած մապլաղիցն նախ իւրեանք ֆի Հարիւրին հինգ իւրեանց հախտայ վեր առցեն, յետ այնորիկ ևս տների մարամաթի, խաղնի և վերն յիշեալ երեսուն և մին ռուպի ամնական խարճն և կամ այլն վեր առցեն, և ապա մնացեալ մապլաղն վերն գրածի համեմատ տասնևվեց սահ արասցեն, ուրթ սամն նոյն յառաջակայ չաներ ամնումն առաքեսցեն 'ի նոյն Նախիջևան բարեկարգութեանց կառավարչաց ձեռն, և երկու սամն նոյն չաներ ամնումն բաժանեսցեն Հայաստանիցն եկեալ զարիպական բիռուզիգար մարդկանց, իսկ մնացեալ վեց սամն կսրտ աֆռէկուշտի բանտումն եղեալ քրիստոնեայ բանտարկելոցն, քանի անձին պարտքն վճարելի որ բաւական լինիցի, էնքան անձանց պարտքն հատուսցեն և 'ի բանտէն ազատեսցեն յաւուրս մեծի աւագ շաբաթու պահոյն, բայց եթէ 'ի նոյն բանտին քրիստոնեայ անձինք չգտանիցին, էն միջոցումն և կամ գուցէ սակաւ անձինք գտանիցին և յիշեալ վեց սամիցն աւելի մապլաղ մնասցէ, առ այս պատուիրեմ, զի նոյն մապլաղովն 'ի նոյն բանտումն եղեալ քուրդ և Հեթանոս ազգ բանտարկեալս ազատեսցեն, քանզի վերն յիշեալ տեղիքն և կամ անձինքն ինձ ժառանգ և սամոտեր ամենայն կայիցն իմոց զննի մահուան իմ։

Դ· ՀԱՑՈՐ· Ողորմած պատուէրս յայտնեմ կտակակատարացն իմոց թէպէտ ես հաւաստի պիտեմ որ ինձ ազգական չունեմ ուրնք, բայց գուցէ ունանք յայտնեսցին, յայնժամ և նոցա իւրաքանչիւրոցն հինգ ռուբի սքայ սալամաթի տացեն միանգամ յամենայն կայից իմոց և նոյն հինգ ռուպին եղիցի իւրեանց մասն։

Ե· ՀԱՑՈՐ· Ուսկ յետոյ այժմ հինգերորդ պատուիրանս յայտնեմ ամենեցուն զի 'ի լրութիւն և 'ի կատարումն վերն յիշատակեալ բաժնիցն իմոց ահա հաստատեցի ինձ նախկին տեղակալ առաջին կտակակատար և կատարեալ վէքիլ զնոր Նախիջևանու բարեկարգութեանց կողմանէ տեղս եղեալ բանակատարսն կամ վէքիլսն յիւրա-

քանչիւրում ժամանակի զոր և իցեն, որպէս ներկայ են պարոն Ներսէս Յովհաննէսեան և պարոն Դիոնիսիոս Հայրապետեանն, վասնորոյ հաստատեմ զի նոքա եղիցին ինձ առաջին կտակակատար և կատարեալ վէքիլ։ Ա՛յլ ևս վերն յիշեալ կտակատարացն իմոց որպէս ընկեր և օգնական և ինձ երկրորդ կտակակատար և վէքիլ հաստատեմ լինիլ կօտր աֆրիկու շտի կոմիսիօներաց զառաջին կոմիսիօներն պահինքն կօրտ աֆրիկուշտի զառաջին դատաւորն իւրաքանչիւր ժամանակի ոմ և իցէ, որ և աստ յիշեալ երեք պարոնքն ինձ վէքիլ և կտակակատար են, վասնորոյ և երեքինն ի միասին մին կամքով և մին խորհրդով աշխատեսցին ի փառս աստուծոյ կատարեալ աստ զգրեալ պատուիրանն իմ։ Արդ վերջաւորութիւն տալով բանից իմոց յայտնեմ, զի այս է իմ վերջին կամք և պատուէրն, որպէս ահա վասն հաստատութեան չորք թուղթ մին օրինակ գրեցի և ի ներկայութեան վկայիցն ստորագրեցի և կնքեցի ի փառս ամենօրհնեալ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ միոյն Աստուծոյ որում փառք և երկրպագութիւն մատուցի անպըտ յաւիտենից ամէն։ Եղև յամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն և չորս ի Մայիս ամսոյ յերեսնոջն ի կալկաթայ։

Մասէհ Բաբաջան
կամ Մարտիրոս։

Ա՛յս կայեմք որ ստորագրեաց և կնքեաց Հոչակեաց և հաւանեաց վերն յիշեալ Մասէհ Բաբաջանն կամ հասարակ կոչմամբ Մասէհ Մարտիրոսն թէ այս իմ կտակն է և իմ յետին կամքն է և իւր ինդրանօքն մեր անունը գրեցաք որպէս վկայ։ վերն գրածն չորք մին օրինակ համեմատ միմեանց գոլով, մի և նոյն ժամանակումն ձեռնադրեաց առաջի մեր Տէր Ստեփաննոս քահանայ Տէր Յարութիւնեան, Մարգար Յովհաննէսեան Խոջումեանց, Յովհաննէս Պետրոսեան։

Ա՛յն կտակի չորք օրինակից մինն Սուպրիմ կոռտումն Բէնկալու դատաստանումն պրովվ արարի այսինքն ճշմարտեցի և պրոբէթ դրած ասացեալ կոռտի կնքով։ Հայրապետեան Դիոնէսիոս մի ի կտակակատարաց։

ՀԱՄԱՐ Չ։

Յայտնի լեցի ամենեցուն, զի ես ներքոյ ստորագրող Հաւատացեալ Բաբաջանի որդի Մասէհս (որ հասարակ կոչմամբ Աբդալ մասէհ Մարտիրոս կոչիմ) յամի Տեառն 1794, Մայիսի 30։ չորք դանայ ի մին օրինակ կտակ ունիմ գրեալ, յորոց և մինն առաքեալ եմ ի Նախիջե-

ւանն նոր և այժմ վասն ներկայ իմ առաւել հարկաւորութեան և օգտին ի յիշեալ կտակացն իմ յայտնեալ երից տանց միոյն այսինքն է մեր եկեղեցւոյ սահմանակից իմ նորաշէն մեծ բալահանայ տունն իւր ամենայն սահմանօքն հանեցի իմ ստատիցն և ի նոյն կտակիցն և ամենայն յօժարութեամբ իմով կատարեալապէս վաղճ արարի և ետու յատկացեալ և առանձին նոր Նախիջևան քաղաքի սուրբ Գրիգոր Լուսաւորչի անուամբ աւագ եկեղեցւոյն, անմահն առնելով այսմ տանս զմիւս սահմանեարսն որ ի կտակին կան։ Եւ զվիճակարէն տանս այս ստացայ և հաստատեցի ինձ յիշատակ և ի ժառանգութիւն հոգևոր զյիշեալ սուրբ Լուսաւորչի եկեղեցւոյ սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ անուամբ զերկոսին գպրատունսն։ Իմ յիշեալ տան գին եդի յիսուն հազար ոուփի, և յիշեալ գպրատանցն ևս մինչ հարկաւորս ունել վասն տարեկան խարջին քառասուն հազար ռուփոյ մուգաթ, վասնորոյ և ես իմ տանս եկամուտն քառասուն հազար ռուփոյ եկամուտ խոսելով այսպէս տուր և առութիւն արարի, որ իմ յիշեալ տունն մշտնջենաւոր վաղճ մնասցէ յիշեալ Լուսաւորչի եկեղեցւոյն սակս կառավարութեան երկու գպրատանցն, նմանապէս և յիշեալ գպրատներն մշտնջենաւոր իմ յիշատակաւ մնասցեն ի նոր Նախիջևան և ի տպեալ գրեանս յիշատակեսցեն։

Ուստի և արդէն իսկ ահա խոստանամ առաջի Աստուծոյ և մարդկան ոչ ևս իշխել այսուհետև ի վերայ յիշեալ տանն և նորա եկամտին իրրև տէր, այլ միայն ցորքան կենդանի մնացից ես զյիշեալ տունն և իւր եկամուտն ի ներքոյ կառավարութեանս պահելով իրրև ի կողմանէ նոցա գործակալ հաւատարմաբար զամենայն եկամուտն ժողովեցից, հարկաւոր շինելիքն շինեցից, և մնացեալ եկամտովն եթէ յիշեալ տունն մերձ կամ Ձինու բաղարու մն կամ յայլ գեղոյն տուն, դուքան, քուգար, գաթ և մին պատահեսցի ի վաճառս, զայնոսիկ ևս գնեցից զարձեալ ի ժառանգութիւն յիշեալ գպրատանցն, և որպէս յիշեալ տան եկամուտն նոյնպէս և նոր ստացելոց զեկամուտն առաքեցից ի նոր Նախիջևան բարեկարգութեանց կառավարչաց ձեռն, նմանապէս և յետ իմ մահուանն ի յիշեալ կառավարչաց աստ կարգեալ օրդնին յաջորդելով զտեղի իմ, զյիշեալ տունն և նորա եկամուտն ամենայն ևս եթէ նոր ստացեալ տունք և այլն իցեն ընդ այնոցիկ և զնոցին ամենայն եկամուտսն զամենայն որոշելով և յատկացուցանելով յիմ ստացից անպակաս և անթերի տիրեսցէ։ Զանշարժն պահեսցէ ի ներքոյ կառավարութեան իւրոյ իրրև տէր և զշարժելիսն առաքեսցէ ի նոր Նախիջևան։ Եւ ի հաստատութիւն այն տուր և առութեանս և վաղճարարութեանս իմ, մին գրոյ օրհ ոսկի քեհանայ

յինքն առ ի յիշեալ կառավարչաց օրդնի Տէր Ստեփանոս Տէր Յարութիւնանէ ըստ ծիսի տունս վաճառողաց։ Ընդ այսմ և վասն բառնալոյ զապագայ փոփոխմունս, ուխտաւն հաղար ռուփի սքայ գունահքեարի տալոյ պարտական կապեցի զիմ անձն, կայքն օրդնին կտակակատարն ժառանգն անուանեալն յիշեալ կառավարչացն և կամ նոցա օրդնի յիշեալ Տէր Ստեփանոսի և ապագայ նորին տեղակալ յիշեալ կառավարչաց օրդնուն այսու պայմանաւ, այսինքն եթէ վերն յիշեալ վաղճարարութիւնս ստեցից կամ փոխարկեցից հանելով ի յիշեալ Լուսաւորչի եկեղեցւոյն կամ ըստ բոլորովին և կամ ըստ մասին իւրք ինչ կերպիւ և պատճառաւ, յայնժամ յիշեալ ուխտաւն հաղար սքայ ռուփի գունահքեարին հատուցից ևս և կամ իմ օրդնին, և այլն յիշեալ կառավարչաց և կամ նոցա օրդնուն։

Եւ զայս յայտնեմ զի այսու զյիշեալ կտակն իմ ոչ խափան լուծանեմ, այլ միայն զայս յիշեալ տունն և իւր եկամուտն հանելով անտի ի լաց յիշեալ ուխտաւնէն կտակակատարացն և ի ժառանգութենէ անդ յիշեալ միւս երկու սամատեարցն, զայլ մնացեալ ստատն, կտակն և կտակակատարքն և սամատեարքն այսինքն ի նմա յիշեալ պատուէրն և երեք կտակակատարքն և երեք սամատեարքն թողում դարձեալ մնալ հաստատուն առ ի կառավարել և ի ժառանգել զմիւս տղներն, և ստատն ըստ ցուցմանն և ըստ բաժանմանն, որ ի նոյն կտակին տեսանի։

Յետ այսորիկ և վասն մեծի կասկածանացն զոր ունիմ ի նենգաւոր և ի յանդգնար թշնամեաց իմոց, ահա զյիշեալ եկեղեցւոյ սահմանակից իմ տան հիւսիսային կողման զորմն և յորմոյն իմոյ անտի մինչ զյիշեալ սուրբ տաճարի որմն որ եկեղեցւոյ գաւիթն է, զնորին իսկ ձևն և զչափն աստ ի ներքոյ նշանաւորումեմ ըստ այսմ և վասն ապագայ ապահով մնալոյ իմ ստատին և ի տանցն և այլն և եմ վասն միամտեալ գնալոյ առ տէր։ Զնոր նախիջևանու բարեկարգութեանց կառավարիչսն և կամ զնոցա օրդնին ի վերայ իմ կտակակատարաց առ իմ կտակակատարութեան գործոյն ուշանջենաւորական էմին և ինձ տեղակալ հաստատեմ ահա ըստ ամենայնի. այս ինքն յիշեալ կառավարիչքն և կամ նոցա օրդնին իմ կտակակատարաց զգործսն առ իմ ստատն քննեսցեն և զամենայն իմ կտակիս ներհակ և իմ ստատիս վընաս գործ ինչ յորժամ տեսանիցեն, տիրաբար արգելցեն և աւերեսցեն և ի հարկաւոր ժամանակի կարողութիւն ունիցին առանց հարցանելոյ միւս սամատեարցն և կտակակատարացս իմ ինքնիշխանաբար ներհակել իմ ստատիս վընասողացն և ոսոխացն և ի պատաստան մտանել և մինչև յերդոպ ևս ապել առնել։ Եւ ի յայսպիսի պատահմունս

ամենայն մանրամասնաբար խոսեպելով եղեալ խաւչն, որքան մնալաղ, որ խարջած լինիցին, եթէ մինչ ի քառասուն հազար ռուբլի ևս իցէ իւր անցեալ ժամանակաց մուգաթովն, յիմ տների և յիմ ստատի եկամտիցն պարտական են հատուցանել իմ կտակակատարքն, որպէս և ահա պատուիրեմ յիշեալ իմ երեք կտակակատարացն տալ անպատճառ։ Եւ վասն բարեպէս բերելոյ զամենայն հարկաւոր գործոն և կամ ղգանգատն և պ. ՅակոբիանուԹիւնս իւրեանց յայտնելն ի դատաստանի աստ ի ձեռն իմ վեքիլ Վիլհէմհիկ և Բինջեմն Թառներին և ի ձեռն միսդր Բարօս և Շայ կօնսլերացն յառաջացուսյեն։ Նոյնպէս և իմ հաւատարիմ հեթանոս Մօհանայ բաբուն և իմ սարքար պալիչերին դէյն, առ սական վարձիւք պահեսցէ յիշեալ իմ տեղակալ օրդնին ի սպասուիւր, քանզի սոքա են տեղեակ իմ ամենայն անցիցն։

Ընս ահա առ այս ներկուս ԹուղԹս գրեալ ի մի յօրինակ ի ներկայուԹեան վկայիցն ստորագրելոյ, կնքելոյ և յանձնելոյ յիշեալ Տէր Ստեփանոս Տէր ՑարուԹիւնեանին։ Այսու ամենայնիւ ղայսոսիկ ինձ պարգևողին Աստուծոյ մատուցանեմ փառս և երկրպագուԹիւնս անլռաւ յաւիտենից ամէն։ Եղև յամի Տեառն 1795, Ապրիլի ամսոյ մինն ի կալկաթա։

Մասէհ Բաբաջան կամ Մարտիրոս։

վկայեմք որ ստորագրեաց, կնքեաց և յանձնեաց,

Էլիազ Մինասեան,
Մուրադ Էլիազեան։

ՀԱՄԱՐ 3.

ՑԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՑ ԵՒ ՀՈԳՒՈՑՆ ՍՐԲՈՑ ԱՄԷՆ.

ԿՏԱԿ ՑԵՏ ՄԱՀՈՒԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ Ի ՈՐՊԷՍ ՀՐԱՄԱՑԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՔԵԱԼՆ ՊՕՂՈՍ.

Ընդ ներքոյ ձեռնադրող կեսարիացի Մահտեսի Յակոբի որդի Եղիէս ծնեալ ՚ի քաղաքն կոչեցեալ Հալաբ, ազգաւ Հայ և ՚ի դաւանութենէ բաղմաչարչար Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի լուսաւորչին Հայաստանեաց աշխարհի մկրտեալ և հաւատացեալ ՚ի Քրիստոս, իմ կամաւն և իմ յօժարութեամբն և ամենայն զգայարանօք առողջ նաև միտքս բոլորովին կատարեալ, կտակս այս գրեցի առաջի Աստուծոյ և մարդկան, որ յետ մահուան իմոյ հաստատուն լինիցի, այսինքն:

Այսր յայտ լինի ամենեցուն որ ՚ի Թուի Քրկչին 1793 մին հատ հօլանդղևար կտակ առ գրել տվեալ Յակոբ Փիրէֆրնի անուանեալ նօթարիսին որոյ կտակակատար գնան պարոնիք Փրէդրիկ Վինքշմանս և Աբրահամ Ավետմանն. նաև ՚ի Թուին 1794-ում Հայևար գրած մին կտակ և սամ գրել տվեալ Տէր Մարտիրոս Դաւթին, որոյ կտակակատարն այ պարոն Աբրահամ Ավետմանն և զնոյնքն յոր տեղ լինիլն չգիտեմ, վասնորոյ այսուհետ թէ որ մինն երևեսցի, բոլորովին անկարող լինիցի ՚ի զօրութենէ իւրեանց. փոխանակ նոցին այժմ կտակս այս ձեռամբ իմով գրեցի և կարդելով ինձ կտակակատար և մասն ժառանգ յատկացեալ բարեկամ և հոգոյս չափ սիրելի զեղբայրակիցն իմ ՚ի Քրիստոս Հանդուցեալ Գասպարի որդի զպարոն Վարդանն զոր յուսով և անհոգս մնամ ՚ի համեմատութեան սիրոյ բարեկամութեան մերոյ ՚ի յայսմ յիշեցեալն բարւոք կերպիւ կատար հասուցանէ թարց ընկալնուլ զվարձն աշխատանաց:

Երկրորդ, աղաչելովն Յիսուսի, օրումն առաջ գրվեցայ ելանելոյ աստի ծովով աւ ՚ի յերկիրն Մագրաս և կալկաթայ, վասնորոյ դնֆտերն իմ փակեալ եղև ցոյց տալով ՚ի աշխատանաց իմոց զամենայն ստացուածք զոր ունիմ ՚ի վերայ յերեսս յերկրի թէ հետ ինձ տանելու և յառաջադոյն Մալաղայ, Մագրաս և կալկաթայ աղարկած և կամ թէ տեղս բաց թողած բոլորն բովանդվեց յիսուն հազար երեք հարիւր քառասուն և երկու կէս փարդավ քաղաքի գրամ որ փոխարկի ութսուն հազար հինգ հարիւր քառասուն և ութ (80548) քաղաքի գրամ ՚ի այլոց տալիքես որպես յիշեալ դնֆտերիս փակածի յատկութիւնն

ձեռնադրեալ եդի ներ կաթուղիկոս Նուաւ ամենայն պարզապէս յայտնի կը լինի։

Երրորդ, ի վերն յիշեցեալ 80548 ափու ստացուածէ իմմէ քսան հազար 20000 ռուպլին երծաթ դրամ Թողում վասն հոգոյն իմոյ և հատուցումն սորին այսպէս լինելի որպէս ի վայր հինգ հարիւր ռուպլին ծախս Թաղմանս հանդերձ պաշտամամբ քահանայից յոր տեղ որ ինձն իմ հանգիպեսցէ, հինգ հարիւր ռուպլին բաժին հոգոյս մնալով Մադրասայ սուրբ եկեղեցւոյ որ յամէն շաբաթուայ օր մի պատարագ հատուցանվի վասն Թողութեան մեղաց իմոց։

Երեք հարիւր ռուպլին խոստովանահօրն իմոյ տէր Մարտիրոս Պատրեան։

Հինգ հարիւր ռուպլին Նոր Նախիջևանու ժողովարար տէր Ստեփաննոս Ցարուխիւնեան։

Երկու հազար ռուպլին չորս հատ երծաթեայ սկիհ գնվի մինն Մադրասայ, մինն կալկաթու և երկուսն Հալաբայ սուրբ եկեղեցեացն Նուիրվի վասն յիշատակի իմոյ։

Հարիւր և յիսուն ռուպլի սրբոյ Էջմիածնայ Սրբազան պատարագի յիշեն։

Հարիւր ռուպլին Երուսաղէմայ պատրիարգին։

Հարիւր ռուպլի Նոր Նախիջևանու առաջնորդին։

Հարիւր ռուպլի Հալաբայ առաջնորդին։

Երկու հարիւր ռուպլի սրբոյ Էջմիածնայ եղեալ միաբանացն։

Երկու հարիւր ռուպլի Երուսաղէմայ։

Հարիւր ռուպլի Հալաբայ սրբակրօն քահանայից։

Հարիւր ռուպլի նոր Ջուղայու սրբոյ Ամենափրկչի վանայ եղեալ սրբակրօն միաբանացն։

Հարիւր և յիսուն ռուպլի Հալաբայ եղեալ աղքատաց ողորմութիւն։

Հինգ հարիւր ռուպլի սրբոյ Էջմիածնայ աթոռոյն Նուէրք։

Հինգ հարիւր ռուպլին Երուսաղէմայ։

Ութ հարիւր ռուպլի Հայրապետայ վանին։

Ութ հարիւր ռուպլի Լիմու։

Ութ հարիւր ռուպլի Կոտց։

Ութ հարիւր ռուպլի Նոր Ջուղայու կուսանաց։

Ութ հարիւր ռուպլի Հալաբայ երկու սուրբ եկեղեցեացն։ Այսինքն սուրբ Քառասուն մանկանց և սուրբ Աստուածածնայ։

Տասն հազար ռուպլի համահաւասար կիսելով հինգ հազարն սրբոյ Էջմիածնայ և հինգ հազարն Նոր Նախիջևանայ տպարանուն մնասցէ իբրև հիմն միշտ ենաւոր նոյնոյ տպարանացն այսու դաշտիւ, ինչ գիրք

որ Հարկաւոր լինիցի զնոյնն նոյն դրամով տպեսցեն առ ի յիշատակի իմոյ և ծնողացս և յետ այնու տպեցեալ գրքերոջ վաճառի բովանդակութիւնն յետս դարձցի առ տպարանն որպէս սկզբ դրամց և շահն ի վաճառմանէ տպեցեալ գրքերոջ ժողովեսցի և ամէ յամ ի վերոյ դպրատանց մանկանց ծախել և յայսցանէ մասն ինչ հանել ծախս հանդիսաւոր պաշտօնի օր մի ի միոյ տարոջ տէր ողորմեա հայցելով առ ամենագթած արարչէն թողութիւն մեղաց և փրկութիւն հոգւոց, ամէն։

Ասան հազար ռուպլի, վերոյ տասն և ինն հատորին բովանդակութիւնն, որ առանց ոչ ինչ պատճառ բարւոք կերպիւ հատուցումն եղիցի։

Չորրորդ, ամենայն զատ զատ մնացեալ վաթսուն հազար հինգ հարիւր քառասուն ուրթն 60548 ռուպլին ի վերայ տասն և երկու բաժնոյ թողում ժառանգութիւն նախ առ կտակակատարին իմոյ, եղբայրակից պարոն Վարդանին և ապա երկու հարազատ եղբարցս Յովհաննէս և Գէորգին նաև մայր Սիրուն Գուլին և քոյր Մարիամին այսու բաժանմամբ, զի կտակակատարն իմ ընկալցի չորս բաժին. վեց բաժին երկու հարազատ եղբարցս համահաւասար ՓԻ ոմն երեք բաժին և մնացեալ երկու բաժինն մայր և քոյրոյն իմոյ ՓԻ ոմն մին բաժին այսպէս բաժանելով յամենու բաժինն. վասն ապահովութեան ապագայ պատահմանց յանձնմամբ Մադրու որոյց անդուկին և մնացեալ վաշխի մինչև ի նոցանէ լինիցի հոգացողութիւն տանելոյ առ իւրեանց, բայց կտակակատարն իմ ոչ երբեք յապաղէ յայտնելով նոցա ղկերպն և ղաջողակ ճանապարհն որով նոքա կարող լինիցին ամենայն հեշտութեամբ ըստանալոյ և յետ ստանալոյն ամենայն ուրախութեամբ վայելեսցեն ըստ կամաց և ըստ հաճոյից իւրեանց։

Հինգերորդ նախ քան զմահն իմ եթէ ի վերն չորրորդ հատորում յիշեցեալ ժառանգորդացս մահ պատահիցէ, յայնժամ ժառանգութիւնս զոր տուեալ եմ նոցա, փոխարկվի այսու կերպիւ որպէս ի վայր։

Բաժին հարազատ եղբարցս թէ օրինաւոր ուստր և կամ դուստր զաւակ ունիցեն նոքա, լինին ժառանգ ինձ փոխանակի ի տէր հանդուցեալ հօրն իւրեանց. ուստր զաւակն երկու բաժին և դուստր զաւակն մին բաժին ընկալցին որքան որ զաւակ և իցէ, այլ եթէ զաւակ ամենևին չիցէ ի տէր հանդուցեալ որ մին եղբօրս, յայնժամ բաժին նորա միւս եղբայրս գտանէ, բայց նախ պարտ է տալ հինգ հազար ռուպլի միոյ տեղւոյ տպարանի որ ննջեցելոյ անուան գիրք տպվի ըստ կերպի իմոյ կողմանէ վերն երրորդ հատորի յատկութենում գրեցելոյս։

Խաժին մօրն իմոյ չորս բաժին լինիցի. մին բաժինն յանձնվի Հալաթայ սուրբ քառասուն մանկանց եկեղեցւոյն, որ նոյն դրամիցն յամեն շաբաթուր օր մի պատարագ մատուցանվի վասն Թողութեան մեղաց ննջեցելոյն. մին բաժին քոյրս ստանայցէ և մնացեալ երկու բաժինն երկու հարազատ եղբարցս օրինաւոր նախկին զաւակացն նոցա ուստեր կամ դստեր ֆի ոմն մին բաժին։

Խաժին քուերս Թէ օրինաւոր ուստր և կամ դուստր զաւակ ունիցի, նոյնքն ստանայցեն այսպէս. ուստր զաւակն երկու բաժին և դուստր մի բաժին որքան որ զաւակ և իցէ։ Բաժինն կտակատարոյս Թէ ունիցի օրինաւոր նախկին արու զաւակ երկու բաժնէն մին բաժինն ըստացէ և միւս մին բաժինն երկու հարազատ եղբարցս նախկին արու զաւակացն նոցա. Թէ ունիցի ոչ, իւրեանք ընկալցին, այլ եթէ կտակատարս ևս ունիցի ոչ, մին բաժինն սրբոյ Էջմիածնայ տպարանումն մնասցէ ի տէր հանգուցեալոյն անուան ըստ կերպի իմոյ կողմանէ վերն։ Երրորդ հատորի յատկութենում գրնցելոյս և մնացեալ երկու բաժինն երկու հարազատ եղբարցս Թէ ունիցին օրինաւոր նախկին արու զաւակ, այլ եթէ ունիցին ոչ, ուրեմն ինքեանք ընկալցին։

Վ եցերորդ, իմոյ հայրենական մնացած իմ բաժին ժառանգութենն ղոր պիտի գտանեմ, բայց զի լուեալ եմ գանցեալ տարաբախտութիւնն եղբայր Յովհաննէսին որոյ վասն լսելոցվին ընծայ Թողում միայնակ նմա և մի՛ ինչ պահանջմունք ունիցին ի նմանէ եղբայր Գէորգն և կամ քոյր Մարիամն։

Նօթներորդն կտակումն եղեալ ասացեալ դաֆտերիս փակածի յատկութիւնն ցոյց կտայ Թալապի չորրորդ հատորում միոյ քաղի բալանս տաջիկս տասն և չորս հազար ուէթ հարիւր քառասուն և մին 14841 փարդաւ քաղաթ դրաւ, և որոյ քաղի անուանակոչութիւնն այ բարեկամի կամ Թէ իմ յանձնարարութեան, ուր ունեցածի քաթէն այ, քաթէս այս վերաբերի կտակատար և եղբայրակից պարոն Վարդանիդ որպէս իսկ գիտես և քոյդ ասացածովն նոյն քաթուում եղած 1425 հատ եաիանի ոսկէ դրամի գին $10687\frac{1}{2}$ փարդավն ուղարկել կալկաթայ Տէր Ստեփաննոս Ցարութիւնեանի ձեռն որ պարոնին քաթուումն Թալապ ևս ունիմ դրած և մնացեալ քաթէն բալանս $4153\frac{1}{2}$ փարդաւ քոյդ ջուքամուր ինձ հետ տարայ որ Աստուծով անվնաս կալկաթայ հասանելէս հանդերձ յիշեալ եաիանու ոսկէ դրամի վաճառովն ղոր ինչ որ գտանեմ Տէր Ստեփաննոս Ցարութիւնիցն, միաւորած ընդ իմ ապրանաց բաժին գնեի և մի և նոյն ջուքամուր կգոյ տեղս և յետ վաճառվելէն յամենու բաժինն ըստ իւրաքանչիւր տիրէ։

Ութերորդ կտակումն յիշեցեալ ստացուածքէս դուրս ունիմ հինգ ծառայ որոց անուանքն Թասգայ և իւր քոյր Լէնչէ Հանդերձ կնքովք պիտեցոյ Օրէսթոս ևս Լամաթ. սոցա գինն Եալչէս քաղուեցին թալապ ամ գրել, վանորոյ յետ մահուանէս կատարեալ ազատութիւն ստասցեն և ստանալով ի ստացուածքէս ֆի ոմն քսան 20 ոսկւոյ երծաթ դրամ. այլևս ունեցածս Սուֆիայ անմաւոր աղախինն քինչ դատաստանաւ ամենայն տվել և թողլով վասն ապրելեացդ մին տուն հանդերձ երկու աղածին և ընդ նմին իւր ունեցած բոլոր ըզգեստ զարդ և դրամն մի ոք իշխեսցէ բառնալոյ ի նմանէ քանզի նոյնոյ գինն չէ ի մէջ ստացուածիս և հարկանայ յետ մահուանէս վերստին ունիլ ի ստացուածէս և հարիւր յիսուն 150 ոսկւոյ արծաթ դրամ և առանց ոչ ինչ պատճառի հատորս այս կատարելն կենդրեմ։

Իններորդ, որպէս յայտ այ կտակակատարիդ ունենալն իմ ղՆուսոյի մի մանուկ Սէթ կոչեցեալ ղոր ինձ յետ տանուժամ և ի յօրէ այնմանէ քինչ գնեալ եղէ նմա յօժարացայ առնելոյ Հոգևորդի ինձ և այժմն թէ կենդանի մնայի մինչևի Մադրաս կամ Կալկաթայ հասանելն նախ քան զամենայն մկրտելոց եմ նորա նոյնոյ անուանակոչութեամբ և յետ այնու ընդունելոց եմ իբրու Հոգևորդի, վանորոյ ենդրեմ հարկիւ ի ժառանգորդացս ղի իւրեանց ստացած ժառանգութենիցն ֆի հարիւրէն երկու թողուն նմա իբր ժառանգութիւն ինէն և զայս պարտ է կտակակատարն իմ առնել ի ժամ բաժանման ըստացուածքն և զոր ինչ որ բովանդակվի յանձնեսցէ Մադրասայ սրբոց անդուկին այսու դաշմամբ ղի վաշխի մնասցէ անդ մինչև ի տան և հինգ ամ ժամանակաւ սկսեալ կտակոյս թարիղեցն և ի լրման ժամանակին վաշխով յանձնվի նորա և նա պարտէ ի յայս միջոց ժամանակի կեալ հընազանդ և ի ներքոյ պահպանութեան կտակակատարոյս և կտակադրել հարկաւ ունիլ հետևողութիւն ուսման նորա ի պատճառի զոր ես սիրեցի և սիրեմ նոյն գունօք և ինքն պարտ է սիրել և ամենայն հետևողութեամբ ջանալ բարութեան, այլ եթէ գուցէ կենդանի չմնայ և մինչև ի ժամ ստանալոյ զդրամն, յայնժամ նոյն դրամն հանդերձ վաշխովն որքան որ բովանդակվի երես բաժին լինիցի մին բաժին սուրբ Էջմիածնայ, մին բաժին սուրբ երուսաղեմայ և միւս մին բաժինն նոր նախիջևանայ դպրատանց, այնպես բաժանելով յամենու բաժինն ըստ ժամանակին հասանիցէ ըստ իւրաքանչիւր տեղոյ։

Տասներորդ որպէս ի վերն հինգերորդ հատորում ասացի. որ եթէ նախ քան զնահն իմ կտակակատարոյն իմոյ մահ պատահիցի, յայնժամ փոխանակ ի Տէր հանգուցեալոյն կտակակատարք իմ լինիցին Մադրասայ որոց անդուկին կառավարիչք պարոնայքն հանդերձ ի Տէր

հանգուցելոյն կտակակատարն զը ոք և իցէ և կատարեն ըստ համեմատ վերն գրեցելոյս և ամենայն մի հարիւրէն հինգ վարձս ընկալցին և յաւելորդ նեղութիւն իւրեանց զոր կրեն՝ ի վերայ բանին իմոյ, տէր հատուցանէ նոցա ի հանդերձելումն։

Ի յաւարտմանէ գրեցեալ կտակոյս պատուէրն իմ այս լինիցի զի մի ոք ունենայցէ իշխանութիւն այլայլելոյ սորա և ոչ մի ինչ յաւել կամ պակաս կամիցէ. այլայլողն պարտական լիցի ահեղ առենին Քրիստոսի։

Կոհանամ զքէն Տէր զոր ետուր ինձ ժամանակս այս բարի և արարեր զիս որդի ծնանիլ վասն քեզ միայնոյդ պաշտել, այլ այժմ աղաչեմ զքեզ Տէր, քաւեա զմեղս յանցանաց իմոց և պահեա հոգի և մարմին իմ անարատ մինչև ի կէտ մահուանս և յետ ելանելոյ ի տեղի ցանկալի տեսութեան արարչիդ իմոյ և արա արժանի մնանել ի կեանս յաւիտենական ամէն։ Գրեցաւ ի Բարթվիզիայ յայսմ ադամ ամսոյ 20 որ է Մայիսի 9, թիւն փրկչին 1799-ուր.

Վկայեմ որ ձեռնագրեաց	որ եմ ամենախոնարհ
ձեռնագրեալ Գէորգ Մանուկեան։	և յայտնել (ձեռնա-
վերոյին պէս	դրեալ) ծառայ,
ձեռնագրեալ Ցարութիւն Զաքարայ։	Եղիա Ցակոբեան։
նոյնպէս	
ձեռնագրեալ Ամիրջան Ոսկան։	

Ի Բասրայ թիւն փրկչին 1813 և Մարտի 11-ին որ է Նիրհան 26-ուր գրեցաւ ձեռամբ Նուաստ կարապետիս Ցովհաննէսեան ըստ համեմատ ձեռնագրեալ ի սոյնոյ իսկ օրինակէ։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՑԱՊԵՏ ԱՄԵՆԻՒ ՀԱՑՈՑ ՏԻՐ ԵՓՐԵՄ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԼՈՑՆ ԵՒ ԽՈՀԵՄԱԶԱՐԻ ՔԱՀ. ՀՈՎՈՒՆՊԵՏԻՒ

Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ։

Ղևոնդ յուսամ յԱստուածէ ղի իցես ամենայնիւ ողջ մարմնով կրօնաղարդ փառօք ի պարծանս մեր ամէն։

Յերկրորդ յայտ լիցի յարգութեանդ, ղի քոյրն իմ հանգուցեալ կատարինա խոջահանըն ի կտակի իւրում գրեալ է ինձ կտակակատար և զստացուածքն բաժանել է ի վերայ տասն զանազան անձանց և տեղեաց յորմէ այնք, որք մինչև ցայժմ ոչ են ստացեալ զմասն իւրեանց է այսպէս գրեալ ի կտակին, ղի ի չորրորդ մասանց կէս մասն սուրբ Գանձասարայ աթոռոյն առաքեսցեն ընծայ։

Ա վեցերորդ մասն նոր Նախիջևանու քաղաքի բարեկարգութեանցըն առաքեսցեն։

Ա եօթներորդ մասն մեր պապենական քաֆայ քաղաքի Սուրբ Խաչ վանքի բարեկարգութեանցն։

Ա ութերորդ մասն նորաշէն Գրիգորիպոլ քաղաքի բարեկարգութեանցն։

Տասնեւրորդ մասնէ կէս մասն Տաթևու վանքին։

Նայց վասն սուրբ Գանձասարայ աթոռոյն և միւս վանացն անտեղակ եմք թէ քանի աթոռք կան ներ սուրբ Գանձասարայ աթոռոյն կամ թէ ուր իցեն և յոր քաղաքս և հաւատալով ղի զամենայն աթոռքն և վանքն և այլք այսոցիկ գիտակ իցես և ծանօթ պետից նոցա, վասնորոյ այսու համարձակիմ խնդրել Սրբազանէս զգուշ լինել հայրական առ մեզ ունենալով և վասն շահաւետութեանն այնմ մանակցելոցն և հոգոյն հանգուցեալ կտակողին շնորհ ունելով, յատուկ, յատուկ թղթով ծանուցանիցես՝ աղդ առնելով զասացելոց որպէս և քանակութիւնն դրամոյն, իւրաքանչիւրոց զոր որ և եդեալ համարն յուցանէ։

Ե՛ւ վասն ծանօթութիւնն տալոյ նոցա որոց քարտէղիւ գրելոյ ես, գրեմ և ես, ղի յետ ստանալոյն իմոյ զհանգուցելոյն զստացուածքն, այսինքն իսկոյն ապա և պահանջումն այլոց ոմանց ի վերայ եհաս յորմէ նեղութիւնք և ծախք բազում եղև։ Եւ թէպէտ ի վաղուց կամեցեալ էր իմ հասուցանել նոցա, բայց ոչ միայն ոչ գիտաք թէ

ոՒր իցեն և թէ զնարդ և ոՒմ հատուցանիցեմք, այլ և ոչ ուստեք գտանիւր ճանապարհ իմն հաստատուն և անկասկած և վասն ի բացայայելոյ միջոցաւ մեծաւ և ի նոցանէ կարգեալք ոչ ոք վէքիլ աստի գտանելոյ, մնացեալ է այնպէս· վասնորոյ խնդրեմ զի փուխմանակի աստի եղեալ պարոնոցէ կամ իսկ քեզ Սրբազանիս, կամ ուր և կամ իցէ նոցա մին ոմն ընտրեսցեն վէքիլ լինիլ ի կողմանէ իւրեանց և նոցա, կամ նոցա անուան օրինաւոր վէքլագիր հաստատեալ ձեռնագրութեամբ կնքով և վկայիւք յուղարկեսցեն ի ձեռն նոյն կարգեալ վէքիլին իւրեանց, բայց յուշ լինի մեծի Ցարգութեանդ զի վկայքն որ ստորագրելոց են հաւանութեամբ նոցա, հարկաւոր է այնպէս իշխանք պետութեանց, կամ այլք քանի երևելի անձինք և ոմանք ի միաբանից նոցա լինել, որպէս զի գիր ձեռացն կնիք վկայութեանց նոցա, յայտնի լինիցի ի ճանաչումն աստի եղեալ իշխանաց և պարոնաց և որ ոք կերպիւ և իցէ օրինաւոր հաստատութեամբ վէքիլագիր յուղարկեսցեն, յիշատակելով անուանք և զորքանութիւնն սուրբ Աթոռոյն՝ կամ վանից և կամ բարեկարգութեանցն, որ բովանդակի յայնմ տեղիս և կամ թէ միայն մին աթոռ գոլն յիշատակեսցեն, զի բաւարարութեամբ կարացից հատուցանել զդրամն և առնուլ ի նմանէ զվէքլագիրն այն և զռեսիդ կամ զարձակագիր ըստ օրինաց, վասն զի յայտ իսկ է խոհեմութեանդ օրէնք Անգլիացոց և դատաստան նոցա։

Այլև ի կատարելն նոցա զվերոգրեալն յիս ևս թղթով ծանուցեն զորպիսութիւնն բանին, նաև այս ևս պարտ է ինձ նախագուշակել, զի ի կարգելն նոցա վէքիլ այս մասին, այնպէս շրջահայեաց լինելով բարի և հաւատարիմ անձն, կամ անձինք ընտրեսցեն, զի նոյնքն ստացեալ զդրամն անթերի հասուսցեն իւրեանց, զի և հոգին հանգուցելոյն արժանի լիցի վայելման սրբանուէր պատարագաց և աղօթից ձերոց որ և զնս ամենապարտիս լիցի մասն և բաժին ի նոցանէ։ Եւ եթէ նոքա կամ ոմանք ի նոցանէ Սրբազանիս վաքիլ կարգեսցին, ուրեմն նոցա, կամ նորա առաքեալ վէքլագիրն շնորհեալ ուղարկեսցես աստ ի ձեռն քոյոյ վէքլին, որում և Սրբազանդ յատուկ վէքլագրով հաստատեով որպէս վերոգրեցաւ կարգեսցես ստանալ զդրամն և տալ զռեսիտն կամ զարձակագիրն ըստ օրինաց հրամայելով վէքլին քո, զի զկնի ստանալոյն զդրամն ապա և զվէքլագիրն յանուն Սրբազանիս և զվէքլագիրն յանուն իւր զերկոսեանն՝ յանձնեսցէ նուաստիս անպատճառ։

Ցաւ ել ցանկամ՝ Ձերդ առողջութիւնն և մնամ

աստնայարգելի Սրբազնութեանդ ամենախոնարհ
միշտ հնազանդ ծառայ
Էլիսաղ Մինասի։

Ի կալկաթայ Թիւն փրկչին 1816
Փետրվարի 16 և Թիւն աղարիայի
200 տավթան 21-ին։

Սուրբ Գանձասարայ աթոռոյն կէս մասն բովանդակի — « — »առաջիկա։
Նոր Նախիջևանի քաղաքի բարեկարգութեանցն
մին մասն բովանդակի բոգճխը։
Մեր պապենական քաղքայ քաղաքի սուրբ Խաչ վանքի
բարեկարգութեանցն բովանդակի — « — — » — — « — — } բոգճխը։
Նորաշէն Գրիգորիպոլ քաղաքի բարեկարգութեանցն
մի մասն բովանդակի — — « — — — » — « — — « — » — — » — բոգճխը։

Տաթևու վանքին կէս մասն բովանդակի — — « — — » — — առաճկա։

Ընդ մասին ջամն այ սքայ ռուփի — — — « — — « — — » — — թոդճկը։

Յայսմանէ երեք մի օրինակաւ գրեցի յորմէ մինն յանձնեցի Տէր Յարութիւն Տէր Գրիգորին որ ելեալ աստի գնայր առ Ջուղայ, զի անտի առաքեսցէ ի սուրբ Աթոռդ, և երկրորդն յանձնեցի պարոն Մարտիրոս Տէր Ստեփաննոսին որ և նաւով առաքեաց առ Խուշեռ, զի և անտի յուղարկեսցեն ի Թարվիզ և անտի ի սուրբ աթոռդ և երրորդն որ է այս, յանձնեցի Տէր Ղուկաս Տէր Գէորգին որ հասուցանելոց է առ նոյն սուրբ աթոռդ։

Յայտ լիցի Սրբութեանդ զի ի վերոյիշատակեալ մասնէ սուրբ Տաթևու վանքի կէս սամն և սուրբ Գանձասարայ աթոռոց կէս սամն որ մինչ ի Թիւս սահման, 28 երկոքեանն միասին բովանդակեցին երկու հազար վեց հարիւր քսան և հինգ ռուփի սքայ (2825 սքայ) զնոյն աստի յամի Տեառն 1818 Նիսան 2 նաղդ հատուցի ի վեհափառութենէդ առաքեալ նուիրակ մեծայարգելի վրդանէս Արքեպիսկոպոսին և ծայրագոյն թուրմաս վարդապետին ըստ համեմատ զօրութեանցն նախայիշատակեալ հանգուցելոյ կտակագրին և վկայագրացն զոր ասացեալ Արքեպիսկոպոսն և վարդապետն ներկայացուցին ինձ և երկաքանչիւրքն զստացումն իւրեանց ռեսիտ գրելով ձեռնագրութեամբ և վկայիւք յանձնեցին նաւատիս։

Ցաւել ցանկամ Ձերդ ողջութեանն և մեամ ամենայարգելի Սրբազնութեանդ ամենախոնարհ միշտ հնազանդ ծառայ

Էլիսաղ Մինասեան։

Տ. Կ.

Ի կալկաթայ Թիւն փրկչին 1818 նոյեմբերի 27. և Թիւն աղարիայի 203 դեկտեմբերի 30-ին և ջուղու վերնով շնորհիւ Տէր Մարգար Տէր կարապետեան։ Երկրորդ օրինակ Թիւն 1819 յաներ 10 կամ արեմ ԼՌ ջուղու վերնովն։

Ժամեմատ հեղինակին օրինակեցաւ յամի 1828, օգոստոսի 28, ի նախիջևան քաղաքի որոյ իսկն եղեալ ընդ իս մնաց գարձեալ առ իս, որ վասն յաղագս հարազատութեան այսմ օրինակի ստորագրեմ, Արք եպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս։

Ի ՍՈՒՐԲ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԻԶԻ ԳԱՀՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՄԲ ԵՓՐԵՄ ՀԱՑՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ԱՍՏՈՒԱԾԱՊՈՒԹ ՀԱՑՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։

Սրբացուցիչ նամակ օրհնութեան բարձրութեանդ արժանի արար ընթեռնուլ լի խնդութեամբ և պանծ հոգւով և մարմնով յաղագս առողջ գոլոյ Սրբազնասուրբ և պատուական գլխոյդ մերոյ, որոյ Տէր Աստուած արասցէ արժանի միշտ ամենայն բանիւ ըստ իմ նուաստ կարծեացն արժան համարեսցի գրել, եթէ պատուական գլուխդ մեր հաձնեսցի, այս ինքն Սարգիս Ծատուրն կտակաւ թողեալ է մերձ ութսուն հազար հունս այսու մտօք, որ, յետ քանի ժառանգաւորաց պահասելոց, բոլոր դրամն հասանի Աղովու դպրատանն և տպարանին. և ժառանգքն, որ կան, այսոքիկ են որպէս գրեմ և ոչ այլ մին։

Ա՛ինն է իւր կերակուր եփողն 80 ամեայ.

Ա՛ինն է երծաթագին եթովպացի.

Ա՛ինն է իւր դուստր կատարինէն.

Ա՛ինն է իւր եղբօր դուստր Մանաջան Խուրքեշն, և ի սոյանէ սերեալքն զուրկ են ի ժառանգութենէ։

Ձեզ սոցա ժառանգ է մնալոց Աղոիշ, և գրելոյս դիտումն այս է, եթէ բարի և արժան համարես, կարող ես հոգալ ողորմութեամբ Աստուծոյ, այսօր բոլոր Ռուսաստանաց եղեալ Հայկազնէից տէր և իշխող և հրամայող Սրբազնասուրբ քահանայապետ ես, և ոչ այլ ոք, եթէ ցանկաս շատ դիւրին կարող ես հոգ տանել, այս դրամն մնալու է անկորուստ։ Այսպէս ներկայ բարւոք ձեռի է այդ, այս ինքն մնալով նա ի ձեռն կտակակատարի, այս ինքն Կիրակոս Ցարուեթեանի և ի կողմանէ Ձեր երկու կամ երեք հոգի կարգեք որ միշտ մինչ դեռ ժառանգքն կենդանի են, դրամն մնայ Թրէժերուամն, (գանձատանուամն) տարէց տարի հաշիւն տեսանեն, եկամտէն վեր ժառանգաց ծախսն հանելով, մնացեալն գնելով ի վերայ մայր դրամին, և տարեկան հաշիւն փակեալ ուղարկեն Սրբազնութեանդ, այսպէս մինչև զքաւումն ժառանգաց ըստ գրութեան կտակին, յայնժամ բոլոր դրամն գուցէ մեծ օգնութիւն հասանի ամենայն աղգաօգուտ բանից և գործոց։

Մնամ միշտ հաւատարիմ պատուական գլխոյդ
Շողէն։

խոնարհ ծառայիցդ ծառայ
Տէր Ցարութիւն Շմաւոնեան։

1819 *Թիւն Հոկտեմբերի 9.*
ի Մադրաս։

ՀԸՐՅՏՍԻՐԱՏՆԵՐ.

—

ՀԻՆԳ ՐՈՊԷ ՇԱՏ ԱՆԱԳԱՆ.

(Մարկօ դը Սէնտ-Հիլէր ֆրանսիացու գործէց. Napoléon I. et son temps.)

1803 Թուականի վերջն էր. Անգլիան մի փոքր յառաջ կրկին պատերազմ էր յայտնել Ֆրանսիային և արդէն արձակ ծովի վերայ տիրապետել էր այնպիսի օտարական նաւերի որ դեռ ևս ոչինչ չգիտէին պատերազմի յայտնութեան մասին. Դորա փոխարէն առաջին Հիւպատոսը (Նապոլէոնը) հրամայեց բանտարկել բոլոր Անգլիացիք որ գըտանվուէին ֆրանսիական հողի վերայ. Ասնուհետև դարանագործութիւնքը ընդդէմ Նապոլէոնի զարթնեցան մի նոր զօրութեամբ.

Մինչև այն ժամանակ, բոլոր ռոյալիստեան (հին արքայական տան պաշտպանողների) դարանագործութիւնքը ընդդէմ նորա, անյաջող էին գտանված. այդ պատճառով մտածեցին գտանել մի միջակային հնար, այսինքն զուգահառնել երկու չափազանցութիւնքը, միաւորել հասարակապետութեան կատաղի պաշտպանողքը հին թագաւորութեան կատաղի պաշտպանողների հետ, և Անգլիան դարձաւ այս դարանագործութեննների քուրան.

Այս դիտաւորութեանը փոքր ի շատէ յաջողութեան հաւանականութիւն տալու և իսկոյն տարածանելու նորա վերայ մի ազգային հարազատ լուսակամար, պիտոյ էր, որ մի անուանի մարդ հանդիսակից լինէր, որի հետ և միաւորվելու էին տհաճ և պատուասէր հասարակապետականքը. Ընտրութիւնը հասաւ Մօրօյին, որ եղած էր յաղթող Հօհընլինդեան ճակատամարտի մէջ, բայց այս յաղթութեան պարծանքը գունաթափվելով Մարենգոյի [1]) ճակատամարտի յաղթութեան պարծանքից, յարուցել էր Մօրօյի նախանձը որ և ընդհանրապէս յայտնի

[1]) Այս տեղ, որ մեծ գիւղաքաղաք է Նախնի Պիեմոնտի մէջ, 1800 Թուականին (յունիսի 14-ին) զօրապետ Նապոլէոնը կռիւ տուեց աւստրիական զօրապետ Մէլասի հետ, և յաղթութիւն տանելով, տիրապետեց բոլոր Լոմբարդիային.

էր։ Նոյն իսկ չարագործութիւնը լցուցանել յանձն առաւ Գէորգէս կադուգալը մի քանի ընկերներով։

Ընդարձակութիւնը յայղպագէս յառաջ տանելու գործով, գնացին Անգլիայից դէպ ի Ֆրանսիա մի քանի այդպիսի պատգամաւոր ընկերութիւնք, և վերջին խորհրդաւոր պատգամաբերներին պիտոյ է յարգ և ազդեցութիւն տար ֆրանսիական թագաւորաղներից մինը։ Երկու այդպիսի պատգամաւորք ընկերութիւնք գտանվումէին արդէն ֆրանսիական հողի վերայ, և երրորդը, որի առաջնորդն էր Գէորգէս կադուգալ, դէպ ի ցամաք դուրս եկաւ Բիվիլեան լուսատու աշտարակի մօտ, Դիեպպէ և Տրէպօր սահմանների մէջ, Նորմանդիայի ծովերի մօտ։ Բայց Փարիզի պօլիցիան, Բէնիեի վերակացութեան տակ, արդէն առել էր այդ ձեռնարկութեան հոտը, և անժամանակ շատախօսութիւնք շուտով աւելի ճիշդ տեղեկութիւնք հասուցին նորան այդ մասին և պատճառ տուեցին նորան գործ դնել ամենածանր պատժողական հնարներ։

Մօրօն և Պիշեգրիւն բանտարկված էին արդէն. Կադուդալը, երկու եղբարք Պօլինիաքները, Բիվիերեան Մարկիզը և միւս շատ դարանագործներ վիճակվեցան նոյն բաղդին. միւսերը պիտոյ է ապրեցնէին իւրեանց անձը փախստական կամ թաքստեայ լինելով։ Վերջինների կարգումը գտանվումէր և պատանի, շատ հարուստ և կրակոտ աքսորականը Վիքտօր դը Դևվիլլ անունով, մի հին նորմանդեան ազգատոհմից, որին մի կատաղի ազատասիրութիւն միայն դրդել էր կցորդ լինել այդ ձեռնարկութեանը։

Այդ Վեկտոր դը Դևվիլլ ֆրանսիացին կարողացել էր ազատ կացուցանել իւր անձը պօլիցիայի ընդհրողական հետաքննութեններից, մի օր այս բարեկամի և մի օր այն բարեկամի մօտ մնալով և այնու ամենայնիւ չմոռանալով իւր անսահման սէրը դէպ ի մի այրի կին, որի տղամարդը որպէս թնդանօթաձիգ ջոկքի աստիճանաւոր մեռած էր Մարենգոյի ճակատամարտումը։ Բայց երբ որ փակվեցան նորա համար բոլոր պատսպարանքը, ապա մտաբերվեցաւ նա տեղի ապաւինի որոնել այն կորած կանացի մարդերի մօտ, որոնց վերայ այն միջոցին չունէր պօլիցիան այնպիսի խիստ հսկողութիւն, և որոնց կողմից կարող էր յուսալ անձնանուիրութիւն, գործ դնելով իւր ոսկին։ Այս խորհրդով դարձուց նա երեսը դէպ ի շատ գեղեցիկ ակտրիսներից մինը, որի տարփածու վարքը շատ հռչակաւոր էր, և ընդունելութիւն գտաւ նորա մօտ, մի փառաւոր քաշեմիրեան շալ ընծայելով նորան։

Դիշերի 11 ժամն էր, երբ որ նա իւր առաջին այցելութիւնը արեց այն տեղ։ Գեղեցկուհին բնակուէր մի փոքրիկ ապարանքի մէջ Շոսե

դ՝ Անտէն անուն փողոցում։ Մի խորամանկ աղախին ընդունեց երիտասարդին որպէս Լօրդ, ներս տարաւ նորան և թողեց նորան մի փառաւոր դահլճի մէջ սպասելու իւր սիրական տիկնոջը։

Այս երեւումէ վերջապէս՝ մի մանկամարդ կին հրաշալի գեղեցկութեամբ։ Վիկտորը քննելով նայումէ նորա վերայ։ Նա առաւել նմանումէ մի գատապարտվածի որի առաջև կարդումէին նորա մահու դատակնիքը, քան թէ մի երիտասարդի այն քաղցր յոյսի մէջ թէ ունենալու էր մի թագուն մերձաւորութիւն իւր սիրականի հետ։ Գեղեցիկ տիկինը չկամենալով նկատել երիտասարդի խռովութիւնը, շուտով սկսաւ խօսել՝

«Մ՛իլօրդ, ամենայն բանի մէջ հարկաւոր է արդարութիւն, օրինապատշաճութիւն։ Շնորհը այն մերձաւորութեան որ դուք ցանկացած էք ունել իմ հետ, շատ քաղաքավարի կերպով խոստովանած էք դուք, քան թէ կարող էիք տարակուսել թէ ձեր մերձաւորութիւնը իմ հետ կը շփոթվէր։ բայց ես շատ խղճամիտ եմ, քան թէ կարող էի խոստանալ ձեզ մի այդպիսի անշփոթ մերձաւորութիւն։

— «Խնդրեմ՝ աւելի բացայայտ խօսել, եթէ հաճոյ էր ձեզ։»

— «Լ՛աւ, Միլօրդ։ Հնար կարող էր պատահել, որ դուք մէջ գիշերին ստիպուած լինէիք գնալ մի այլ սենեակ։ . . . Թէպէտ չկարծեմ թէ այդ անախորժութիւնը պատահելու էր այսօր, ըստ որում չունիմ տեղիք մտածելու, թէ նա գալու է այսօր,—բայց այնու ամենայնիւ մնում դա կարելի—»

— «Դեռ ևս չեմ հասկանում ձեր խօսքը բոլորովին։»

— «Լ՛աւելի պարզ ասեմ՝ ձեզ ահա, պարոն, որ առաջին հիւպատոսը երբեմն ցուցանումէ ինձ իւր այցելութեան ընծորը, և ի՛նչպէս կարելի էր այդպիսի կարող մարդու մեծարանքից փախչել։»

Լ՛այս խօսքերը լսած, Վիկտորի բոլոր արիւնը գետօրէն յետ վազեց դէպ ի սիրտը։ Նա դունաթաթխվեցաւ, նորա ձեռները կծկվեցան և դողացին կաշկանդվելով։ Ճշմարիտ խորհուրդը այս փոփոխութեան այն երիտասարդի մէջ չհասկանալով տիկինը, և ընծայելով դորան մի այլ պատճառ, ասաց՝

«Հանգստացէք, Միլօրդ, ես այս երեկոյ ոչինչ տեղեկութիւն չեմ ստացել նորա սենեկային սպասաւորի ձեռքով, որ սովորաբար լինումէ միշտ. . . .»

Վ՛ործը յետ դարձուցանել ժամանակ չկար աւելի։ Եւ խնդի մեծ բան էր, որ Նապոլէոնը այն միջոցին այնքան գործ ունէր, որ կարող չէր իւր ժամանակը որի մասին այնքան ժլատ էր նա, խաղով ու զբօսանքով վատնել մի լկտի տիկնոջ (courtisane) հետ։ Այս տիկինը մի

քանի հանգստացուցիչ խօսք ասած, Վիկտորը խնդրեց նորանից հասուցանել իւրեան ամեն բան որ հարկաւոր էր մի նամակ գրելու, և աղաչեց որ նա իւր քունը չկտրէ։

Ընդ ինչ քաղաքավարութեամբ գեղեցիկ տիկինը ցոյց տուեց երիտասարդին մի փոքրիկ սենեակ, ասելով» Ահա, իմ պարոն, այս տեղ գըտանելու էք բոլոր ձեզ հարկաւոր բաները և կարող էք միամիտ լինել որ ոչ ոք չխոթելու չէ ձեզ այս տեղ։» Եւ—նա հեռացաւ։

Վիկտորը ամենևին չուներ հիանալու այս սենեկուհի այնպիսի նըկարներէ վերայ, ուր ճարտարապետը սպառել էր բոլոր հմտութիւնը յունական թեթև, դալար, և միանգամայն պարզ զգեստանկարութեան։ Առանց փառահեղութեան և ոսկեզօծ զարդարանքի, էր այս սենեակը մի ճշմարիտ խնկատուփ, բալասանի անուշահոտութեամբ լցուած որ բուրումեր այս տեղ ու այն տեղ դրած ծաղիկներով։

Իւր նամակը, տիկին Նօզելետի, իւր պաշտելի սիրականի վերայ, որ չկամեր նա տեսանել աւելի, գրումեր Վիկտորը առանց մտաբերելու անգամ, թէ Եւրոպայի ամենաչքնաղ կնամարդը մի քանի քայլափոխ նորանից հեռի ննջումեր մի փառահեղ որմախորշի մէջ, ուր հազարաւոր հայելիներ գեղեցկացնումէին նորա ննջումը անգամ....

Վիշերի կէսը անցած էր արդէն, և ահա յանկարծ դողաց դրսի դուռը և ոլորվեցաւ իւր թևերի վերայ։ Մուրճը ղարկել էր դրանը երկու անգամ։ Երկրորդ հարուածին վեր թռաւ թէատրոնական խաղարկուհին և ձայն տուեց։» Նա է։» մի մուշտակ թեթևապէս վերան ձգած, շտապեց նա դէպ ի փոքրիկ սենեակը, ուր Վիկտորը այն րոպէին աւարտած էր նամակը և նստած էր, մտածութեններէ մէջ խորասոյզ եղած։

— «Ո՛վ է այդ նա ասածը։ գուցէ թէ Բօնապարտէն։

— «Նա ինքն է, Միլօրդ, թէ Աստուած կը սիրէք, հեռացէք նէրս մտանելով այն տեղ։

Տիկինը բացումէ մի փոքրիկ դուռն, որ երևումէ թէ կապակցութիւն ունի մի կանացի պճնասենեակի հետ, բայց թագուն սանդուղներով տանումէր դէպ ի մի ստորնայարկ։ Այս տեղ ձգեց նա շտապով Վիկտորին, և թողեց նորան մի փոքրիկ, գիշերային լապտերով լուսաւորած սենեկի մէջ....

Այս տեղ Վիկտորը կարողացած կը լինէր հանգիստ քնել, եթէ մի ամենայանդուգն մտածութիւն յանկարծ զարթեցած չլինէր նորա երևակայութեան մէջ։ Նա երբէք տեսած չէր Բօնապարտին։ Մի անյաղթելի հարցասիրութիւն տիրումէ նորան. նա ցած է իջանում փոփուկ կապերտով պատած սանդուղների վերայից, հասանումէ կանացի առանձնարանին, որ տեղից մի փոքր յառաջ դուրս էր գնացել, զգու-

շուրթեամբ յետ է քարշում պատուհանի բալմածալ վարագուրի մի կողմը և ագահ աչքերով նայումէ իւր մահուշափ ատելի թշնամու վերայ։

Կ՚ա տեսանումէ մի տղամարդ որ ձեռքերը քամակի վերայ խաչանիշ դրած անց ու դարձ է առնումէ սենեկի մէջ։

Վիկտորը դժուարութեամբ կարողանումէ նորա մէջ նմանութիւն գտանել այն պատկերների հետ, որ կախ էին տուած պարիսպների և ղբօսանոցների վերայ։ Նապոլէոնը կրումէր իւր վերայ մի կոճակած կապոյտ վերնազգեստ, մի բոլորշի գդակ գլխին, որ տալիս էր նորան մի ամենևին այլ կերպարանք քան թէ նա սովորաբար ցուցանումէր ընկերութեան մէջ։ Վերջապէս նստաւ նա, և եթէ չշարժէր նա իւր շրթունքը որ ժամանակ առ ժամանակ փակվումէին, ապա կարելի էր նորան համարել մի մտածող մարդու արձան։

Վիկտորը քննելով նայեց նորա վերայ երկար ժամանակ։ Գեղեցիկ, թէատրոնախաղաց կինը նստած էր նորա մօտ, գլուխը տուած նորա ուսին, որպէս մի հնալանդ սուլթանուհի սպասելով մի հայեացքի, ականջը սրած ուշադիր լինելով մի խօսքի որ դուրս էր գալու այն տղամարդի բերանից, որին ասես թէ պաշտումէր նա որպէս Աստուած։ Որպէս թէ մի մեքենական շարժողութեամբ մօտենումէ նա վերջապէս տիկնոջը.... Վիկտորը յետ է շտապում դէպ ի իւր պատսպարանը։

Հազիւ թէ մօտ քառորդաչափ ժամ կացած էր այն տեղ, և ահա յանկարծ լսվեցաւ նորա գլխի վերայ մի դղրդեցուցիչ աղաղակ. ոտերի ձայն եկաւ, մի մարդ շտապով ցած վազեց — դուռը բացվումէ, կիսամերկ և անպատմելի խռովութեան մէջ ներս է յարձակվում գեղեցկուհին և կիսաշունչ ձայնով ասումէ.

«Ա՛հ Աստուած կը սիրէք, հկեցէք օգնելու նորան. նա մեռանումէ.»

— «Ո՛վ է մեռանում։»

— Ննջասպարտը. գթացէք, եկեցէք շուտով։ Այս մի անցողական թուլութիւն է միայն, բայց եթէ պատահումէր դա, շատ խիստ պատուէր է տուել ինձ, որ ոչ ոք, ոչ իմ և ոչ նորա սպասաւորներից չըկանչեմ, — ես միայն եմ, օգնեցէք ինձ։»

— «Ու ինձ, ի՞նձ էք դանչում օգնելու։»

— Դուք օտար մարդ էք, նա ձեզ ճանաչում չէ։»

Վիկտորը նորա հետ գնումէ դէպ ի վեր, մտենումէ սոֆային, որի վերայ Նապոլէոնը ուշաթափ տարածված է, ջուր է սրսկում նորա երեսին, բռնումէ քթի տակ ղօրացուցիչ ցքեշունչ (սպիրիտուս), ցուցանումէ նորան ամենայն հոգատարձութիւն որպէս մի վերաւորված եղբօր։ Եւ այն միջոցին, երբ մի ձեռքը շօշափելով սիրտը նուաղածի

զարկողական երակը, քննումէր նորա վերադարձը դէպ ի կենդանութիւն, միւս ձեռքը ըմբռնումէ ծոցի մէջ թաքուցած սուրը...

Այլ այն խորհուրդը թէ պիտոյ էր սպանել իւր անղէն թշնամին, յանկարծ երևումէ նորան անարգ և վատթար։ Ասպիսի կերպով չըկամէր նա յաղթահարել մի տղամարդ, որին ուխտել էր մահ. ոչ, պիտոյ է առաջին հիւպատոսը ցերեկով, իւր պահապանների մէջ դէպ ի մահ խոցվելով կործանվի։ Եւ երբ որ Նապոլէոնի աչքերը շարժելով ցուցանումեն, թէ նորա մէջ վերադարձել է կեանքը, Վիկտօրը հեռանումէ ձայն տալով. «Նա փրկված է։»

Մի րոպէից յետոյ բաց գնաց նա այն տանից....

Յաջորեհետև եկան ու գնացին օրերը։ Լրտեսքը օրէ օր շատացան. դուցանից մինը ասել էր իւր ստորադրած մարդերին.

— «Պարոն Դէվիլը ունի մի սիրական համալսարանի փողոցումը. աւրեմն նա գալու է այն տեղ, որ մանուկ այն տան չորս կողմով, ուր քնակումէ նօղէլէտ տիկինը, կամ թէ գոնեայ ներս նայէ պատուհաններից։ Գնացէք, լաւ հսկեցէք, և նա մեր ձեռքումն էր։

Այս կշռադատութիւնը շատ հիմնաւոր էր։ Մօտ մի ժամն էր կէս գիշերի։ Վիկտօրը մի վարձած կառքի մէջ անշարժ նստած սպասումէր հայցմուխների փողոցի անկիւնումը.... կառքի երկու փակարանքը բռնութեամբ բացվումեն, և երկու մարդ յարձակվումեն նորա վերայ, ստիպումեն նորան դուրս գալ և աշխատումեն տանել նորան։ Վիկտօրը խելամուտ է լինում, որ նորան ճանաչել են, բայց կամենումէ միայն շատ նեղի մէջ ընկած րոպէին գործ դնել իւր զէնքը, աղատումէ իւր անձը այն երկու ըմբռնողների ձեռքից և փախչումէ այնպիսի արագութեամբ, ինչպէս մի եղջերու որ հալածական էր եղած որսորդ շների բազմութենից. նա վազումէ, մինչև որ վաստակած ու շնչասպառ լինելով ստիպած էր դադարել, որ շունչ քարշէ և տեսանէ թէ ուր էր եկել։ Նա գտանվումէր այն անապատ կողմումը Բարիեռ դը Մօնսօ տեղի և Բօշերեան փողոցի մէջ։

Օրը սկսումէր բացվիլ. անհնար էր նորան աւելի երկար մնալ քաղաքի մէջ։ Երբ որ նա մտածումէ հնարք գտանել անցանելու քաղաքադռնից, որոշումէ նա արուեստաշէն ճանապարհի վերայ մի սայլ կթոցներով բեռնաւորած, որ գալիս էր այն կողմից։ Մի բանջարաբուսոյց այգեպան սանձը բռնած առաջնորդումէ ձիուն։ Անյապաղ ողջունումէ նա այս մարդուն, և առաջարկումէ նորան երկու լուի դ'օր, որ թոյլ տայ նորան նստել այգեպանի սայլի մէջ։ Բանջարավաճառ մարդը ընդունումէ ոսկի դահեկանները, ամենևին անհոգութ լինելով իմանալու թէ որպիսի օր էր այդ արծաթի առաջարկողը, մի պատուաւոր

մարդ, թէ անզգամ. նա շատ ծանօթ չէ քաղաքական բաների ընթացքին։ Վիկտորը շուտով թաքուցանում իւր անձը այն յարդի մէջ որ դրած էր կթոցների տակ։

Աքսի պահապանը քաղաքագրան մօտ սովոր լինելով տեսանել այս բանձարաւաճառ այգեպանը իւր բանջարը ամենայն օր բերելով դէպ ի վաճառանոց, շատ ուշադրութիւն չէն դարձուցանում նորա վերայ և նորա սայլի վերայ։ Երբ որ այդ բանջարակիր սայլը հեռանում պահապանների աչքից, իսկոյն ծաց է գալիս երիտասարդը, ուղղում իւր ճանապարհը դէպ ի Մօնմորանսի, ուր բնակում էր իւր հօր հին սպասաւորը Լըբլան անունով։ Բայց այս մարդը չէ բնակում այն տեղ աւելի, այլ ունի իւր օթեվանը Անդիլլի տեղում։ Վիկտորը գլորվելով շարժվում դէպ ի այն կողմ և սկսանում թակել մի փոքրիկ տան դուռը... Լըբլանը և նորա կինը մի օր յառաջ գնացած են դէպ ի փարիզ և, ասացին, թէ վերադառնալու են ոչ յառաջ քան թէ երեկոյին։ Վաստակածութենից և սովից ամենևին սպառված, շտապում իմաստականը դէպ ի անտառի թաւուտքը և հանգստանում գէմ մամուռի վերայ, որ գոնեայ մի քանի ժամ քնէ։ Պետ ևս գարնանային ժամանակ էր. վասն որոյ գետինը ցուրտ էր, հողմը փչում անտերև ծառերի միջով, բոլոր բնութիւնը քարողում մի տրտում օր։

Չրտից և թացութենից դողդողալով զգաց Վիկտորը և շուտով մի տանջող քաղց իորի մէջ։ Եթէ գոնեայ կարողացած լինէր նա մի փոքր քնել. բայց չկաւ քունը, և այսպէս մնում նա մինչև երեկոն անտանելի տանջանքի մէջ։ Գիշերը սկսանում վերայ հասանել, նա գնում դէպ ի Լըբլանը. սա վերադարձել էր քաղաքից։

Վիկտորը յայտնում նորան իւր դրութիւնը և չէ թաքուցանում նորանից թէ իւր կեանքը վտանգի մէջ էր։ Լըբլանը մարդասիրութեամբ շարժվելով, ըմբռնում նորան և իսկոյն յուցանում նորան բոլոր հարկաւոր օգնութիւնը և ապա տանում նորան մի փոքրիկ սենեակ, հաւատացնելով նորան թէ նա ամենևին ապահով կարող էր այն տեղ հանգստանալ։ Բայց երեկոյի 10 ժամին տանուտերը թոյլ է տալիս իւր կնոջ երկմտութիւններին յաղթել նորա այրական հիւրընկալութեանը, և շտապում դէպ ի մեծաւորքը այսպիսի յայտարարութեամբ։

— «Այսօր երեկոյին ականայ պատսպարան եմ տուած իմ տան մէջ մի աքսորականի որդու, որի աղգատհմը վաղուց ծանօթ է եղած ինձ։ Նորա տգեղայուցած կերպարանքից մանաւանդ, քան թէ նորա հագուստի անկարգութենից կարծեմ որ պիտոյ է եղրափակել թէ այդ երիտասարդը մի յանցանք է գործել։ Այս հանգամանքի մէջ կար-

ծումեմ արդիւնաբեր լինել գատարանին, հնարք տալով նորան առանց դժուարութեան ձեռք բերել այս իմ տան մէջ քնածին։»

Ընաւօտու 4 ժամին երեսուն մեծաւորի պաշտօնեան հինգ սինուորներով Լըլլանի տան մէջ։ Տանուտիրոջ կինը ինքը տանումէ նորանց մի փոքրիկ դռնի միջով, որ դուրս էր հանում դէպ ի անտառը, և բերումէ ուղղակի այն սենեկի մէջ ուր պտանվումեր Վիկտորը։ Զինուորները յարձակվումեն նորա վերայ, յառաջ քան թէ կարող էր նա ձեռք ձգել իւր սէնքը որ դրած էր իւր առաջև. այնու ամենայնիւ պահպանումէ իւր անձը կատաղութեամբ, բռնցի (մուշտիով) ջաղջախումէ մի զինուորի ծնօտը և խածանումէ միւսի բարձքը։ Այս անհաւասար պատերազմի մէջ ստանումէ նա սրի բնրանով երեք զարկուած գլխի վերայ և արիւնը թափվելով երեսից, թուլացած և կուրացած ձայն է տալիս. «մի՛ սպանէք ինձ, ես կամիմ անձնատուր լինել։»

Կալանաւորվածը թակվումէ, մի ծածկոցի մէջ փաթաթվումէ, մի անպիտան սայլի մէջ ձգվումէ և բերվումէ ուղղակի դէպ ի պօլեցիայի դատարանը։

Վիկտորը ամենևին առանց վկայական թղթերի և ճանապարհագրերի, սկզբումը ինչ հարցուածք որ ճանապարհին արած էին նորան, թողել էր անպատասխանի. Լըլլանի բերանից լսած էին միայն, որ նա ասվումեր Դեվիլլ։ Վիկտորի հանդերձները շատ զգուշութեամբ վեր ի վայր էին արել, բայց չէին գտած նորա մէջ մի այլ բան, բաց ի մի քսակ ոսկուց։ Վերջապէս խոստովանեց նա, թէ նա անցեալ երեկոյին պօլեցիական գործակատարների ձեռքով ըմբռնվածլինելով, փախել է սոցանից, օրաթացից յառաջ թողել է Փարիզը. այնուհետև ասաց նա իւր անունը և իւր պաշտօնի վիճակը։

Երբ որ Բէյնիէն իմացաւ, որ այս ընկերակիցը Գէորգէսի ըմբռնված էր, հրամայեց բերել նորան առանց, որ մի նախադուռն հարցուփորձ առնէ։ Իոլոր հարցուածների ընդդէմ պատասխանեց Վիկտորը կարճառօտ և վճռաբար։ Բայց երբ որ հարցուփորձ արեցին մանաւանդ, թէ ինչ օրում եկած էր նա Փարանսիա, պատասխանեց, թէ մտաբերել կարող չէր պդ օրը աւելի։

— «Ո՛նչպէս է ձեր անունը.»

— «Ձեզ յայտնի է դա այնքան, ինչքան ինձ։»

— «Ունի՞ք դուք մկրտութեան անուն։»

— «Ունէ։«

— «Ո՛նչպէս. մի՛ թէ ձեզ ասում չեն Վիկտոր։»

— «Երբեմն։»

— «Մի՛ թէ դուք այդ անունով յատկացուցած չէք այն նաւա-

կագրութեան մէջ որ Գէորգէսի վերջին անգամ ունեցած օմնեանութիւնը ձեռք են բերած։»

— «Այո՛, այն նամակագրութեան մէջ, որ դուք ինքներդ հնարագործել էք։»

— «Անօրէն են ձեզ Գէորգէսը և նորա ընկերակից աւազակները։»

— «Մի՞ թէ յանդիմանութիւնք դուք ինձ ընդունակ ընկերակից լինելու վատթար մարդերի։»

— «Մի՞ թէ դուք եկած չէք Լոնդոնից դէպ ի Փարիզ։»

— «Այո՛։»

— «Որի՛ հետ եկած էք։»

— «Ես եկած եմ միայն։»

— «Ի՛նչ դիտաւորութիւն ունէիք, գալով Ֆրանսիա։»

— «Որ իմ հայրենիքը ազատեմ մի բռնակալից և աղատութիւնը վերստին ձեռք բերեմ։»

— «Ո՛ւր էիք քնակուած սկսեալ այն ժամանակից, որ եկած էք այս տեղ։»

— «Ոչ մի տեղ։

— «Ի՛նչ մարդերի այցելութիւն էք արած Փարիզի մէջ։»

— «Կոգա անուններըը չկամիմ ասել ձեզ. ես չկամիմ ձեր ղօհերի թիւը բազմացնել։»

— «Այժմ կը փաթաթեն ձեր վերքը։»

— «Ընարկաւոր չէ այդ։ Հրամայեցէք ձգել ինձ մի բանտի մէջ. այն տեղ գոնեայ վայելելու էի մի փոքր հանգիստ, առանց երկիւղ կրելու մատնողութենից կամ տաղտկալի հարցուփորձից։»

Ընդհանուր սրտի հաստատութիւնը ոչ մի րոպէ չհրաժարվեցաւ այդ անբաղդ երիտասարդից։ Նորա դատաստանը սկսաւ նոյն միջոցին ինչպէս բոլոր միւսերինը, և քանի որ դատավճիռը կապած չէր, վիկտորը անդադար մխիթարում էր իւր մայրը, որ եկած էր նորան այցելութիւն գործելու։ Նա ասում էր նորան դարձեալ և դարձեալ, թէ ունի մի ապահով հնարք փրկելու իւր կեանքը, բայց դա մի գաղտնիք էր, որ պիտոյ էր պահպանել մինչև ինքը շատ մեծ նեղի մէջ կ՚ընկնէր։ Բայց երբ որ մերժվեցաւ նորա ինդրագործութիւնը վերացնելու դատակնիքը, այնուհետև ասաց մայրը.

— «Այսուհետև, իմ սիրելի զաւակ, ի՛նչ պիտի լինի այն յուսա գրութենից, որով դու մինչև այժմ մխիթարել ես ինձ։»

— «Վատ անունը չէ անարդվելու. ես չեմ մեռանելու։ Ահա քեզ, մայր իմ, մի նամակ, որ գրել եմ ես առաջին հիւպատոսի վերայ. Հոգ

տար, որ նա այսօր երեկոյեան իսկ ստանայ նորան։ Գործ դիր բոլոր հնարները, բայց ի մի ամենաղնիւ և ամենահեղ անձնի ազդեցութենից, որ կարող էր մօտենալ նորան. մի խօսքով — գործ մի՛ դնիր որպէս բարեխօս այս բաների մէջ տիկին Բօնապարտէն։ Ես երաշխաւոր եմ, որ յաջող կ՚երթայ գործը։

Ընբաղդ մայրը հնազանդեցաւ։

Առաջին հիւպատոսը Մալմէզընուն էր։ Տիկին Դեվիլը հասաւ այն տեղ, երբ որ Նապոլէոնը բիլլիարդեան դահլճի մէջ, և շրջապատած լինելով մի քանի ադիւտանտներից, աշխատում էր ցրուել այն մտատանջութիւնը որ պատճառում էր նորան Մօրօն և սորան համաշունչ եղած կարծիքը հասարակաց։ Ոչ առանց դժուարութեան կարողացաւ կինը հասուցանել իւր նամակը մինչև Նապոլէոնի ձեռք։

Դէպ ի մի աստիճանաւոր, որ չէր մասնակից խաղին, ասաց առաջին հիւպատոսը.

— «Լ՚էմարրէ, գնա, խնայի՛ր, մէ ի՛նչ կամին ինձանից։»

Նա յառաջ տարաւ իւր բիլլիարդեան խաղը։ Լէմարրէն բացեց նամակի կնիքը, բայց առաջին տողերի վերայ վազելով, և ահա իսկոյն փակում նորան դարձեալ և դժուարութեան մէջ ասում դէպ ի առաջին հիւպատոսը.

— «Օ՚օրապետ, այս բանը վերաբերվում ձեզ միայն։»

Նապոլէոնը ձեռք է առնում նամակը, ներս է նայում նորա մէջ, դունաթափվում, պարզվում մի պատուհանի սեամի վերայ և կարդում նամակը. ապա ժպտելով ակամայ, ասում.

— «Լ՚էմարրէ, ասացէք այն տիկնոջը, որ կանգնած է նախասենեկումը, որ նա էգուց առաւօտ 10 ժամին գայ։»

— «Լ՚հա» — ձայն արձակեց Վիկտորը դէպ ի իւր մայրը, երբ որ սա միւսանգամ ներս էր մտանում նորա մօտ — «ես վրկված եմ, որովհետև հիւպատոսը էգուց կամի տեսանել ձեզ, դորա խորհուրդը այն է, որ նա ինքը յայտնէ ձեզ որ ողորմել էր ինձ։»

— «Հի, իմ որդի — թող մեր յոյսը դնենք Աստուծոյ վերայ։»

Բայնու ամենայնիւ այս բարի մօր սիրտը երբէք հանգստացած չէր. նա գիտէր որ դատապարտվածքը էգուց առաւօտուն պիտոյ է մահով պատուհասվէին։ Օրը լուսացած, Դեվիլ Տիկինը որ այն վերջի օրերի տրտում պատահարներից շատ մաշված էր, յղանում իւր մէջ մի օտարոտի խորհուրդ. նա գիմում դահճի մօտ և ստիպագին խնդրում նորանից այն շնորհը, որ պատուհասի րոպէն ինչքան կարելի էր յետ ձգէ, որովհետև նա 10 ժամուն յոյս ունէր արժանանալու իւր որ դու վրկու թեանը հիւպատոսի ողորմութեամբ։

Դահիճը ականջ է դնում անբաղդ մօր ասածին, մի կերպ յաւակ-
ցութեամբ, և ասում նորան.

— «Ես հաւատում եմ ձեղ, տիկին, բայց Աստուած տայ, որ ձեր որդին ողորմութիւն գտանէ իմ տրտում պաշտօնակատարութեան ժամից յառաջ. պատճառ, ես ոչինչ կարող չեմ յետ ձգել այդ գործի մէջ։»

Այնու ամենայնիւ այս կինը հեռանում է դահճի մօտից ոչ յառաջ, քան թէ դա խոստացած էր, թէ իւր կողմից կամեր ամենայն հնար գործ դնել, երկարացնելու ժամանակը։

Ուղիղ, 10 ժամին երևում է կինը Մալմեզօնում. բայց առաջին հիւպատոսը գնացած է որս առնելու։

Այս ահացուցիչ լուրը հասանում է այն թշուառական մօրը որպէս կայծակն. նա գետին է կործանվում, որ միւսանգամ վեր չկենայ....

Լուսարացին դահիճը հրամայել է արդէն իւր գարշելի մեքենայքը նոցա բոլոր սարք ու կարգով տանել դէպ ի պատժողութեան հրապարակը. նորա սպասաւորքը պատրաստել են նորանց և դանակագործի սրոցը սատակիչ կացնի արիւնային ժանգը սրբել ու յստակել է, մի շեղջ աւազ ցանած է պատժարանի չորս կողմը։ Թէատրոնը պատրաստ էր. նայեցողքը եկած էին այն տեղ. սպասում էին միայն գլխաւոր հանդիսակիցներին այն գարշելի դրամայի մէջ։

11 ժամին հասան այն տեղ Գէորգեսը և նորա տասներկու ընկերակիցքը միասին. նոցա մէջ էր և Վիկտոր Ռևվելը։

Ներ որ ոչ ոք բաց ի նորանից չկար գանկնած պատժարանի մէջ, դահիճը ընդհատեց իւր գործակատարութիւնը, պատճառ տալով որպէս թէ մի քանի լան պատժողական մեքենայի մէջ աւերվել է։ Եւ բաւական երկար ժամանակ նորա աչքը պշուցած նայում էր դէպ ի պեղլետեան գետեղերեայքը, ուստի ժողոցի վերայով պիտոյ էր գնալ դէպ ի նանտերր։

Այց, երբ որ ժողովրդի ցաւակցութիւնը դէպ ի մահապարտվածը զարթնեցաւ և փոխվեցաւ տրտունջ այն լանի վերայ, որ նորան որպէս թէ կրկին անգամ կամէին մեռուցանել. երբ որ մեռուցող բաղմութիւնը սկսաւ արդէն պատառել քարերը սալայատակից, այնուհետև դահլիճը նշանացի արեց քահանային, որ հեռանայ և օգնեց ինքը մահապարտին դէպ ի վեր գնալու նորս հետ միասին։

Ընդարձակ վիկտորը ամրացրվեցաւ օրհասական տախտակի վերայ. մեռնանքից յետոյ ամենախոր լռութիւն եկաւ ուշադիր բազմութեան

վերայ, և աղօտ հնչղղութիւնը ցած թողած կացնի շուտով իմաց տուեց, որ և վերջին ղոնը մորթած էր արդէն։

Յանկարծ հեռուից բարձրացաւ մի խառն ի խուռն աղմուկ և պնչ-լետեան գետեղերքից շշնջեցին և աղաղակեցին ղանապան տեսակ ձայներ։ Հիւպատոսական պահապաններից մի սուրհանդակ, նորա տակին հեալով մի ձի, փոշու մէջ կորած, խռովայոյզ բազմութեան միջից վազելով ու շտապելով վերայ հասաւ և փողփողեցնումէր գլխի վերայ մի թուղթ։

Սա էր Վիկտոր Դեվիլլի փրկութեան հրամանը։ Բայց հինգ րոպէ շա-տ ուշացան։

Ս. Նալչեանց։

ՇԻԼԼԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔԸ։

1. Դուք կամենումէք յետ տանել մեզ, և
Զգել երեխայական անմիտ օրերի մէջ։
Ձեր է ձեր կամակորութիւնը անյագի վերայ,
Դուք կարող չէք ապագայի ոտքերը կոտրել։

2 Ոունայն և անօգուտ վաստակ է
Դադարեցնել ժամանակի շարժուն անիւը։
Առաւօտը լուսանումէ, հալածումէ խաւարը,
Եւ լուսապայծառ դուրս է գալիս արևի կառքը։

3. Դուք թէև ունէք աչք և ականջ, բայց կոյր և խուլ,
Չկամիք լսել ձայներ, և ոչ տեսանել նշաններ։
Ես երկիւղի մէջ եմ ձեր համար, թուլամիտ տխմարներ։

4. Ընդհանուր ամենայնիւ հաստատ կը մնայ Աստուծոյ խորհուրդը։
Ժամանակի պտուղը կը ծնանի իւր ժամանակին,
Եւ ինչ որ հարկաւոր է ժամանակին, յառաջ կ'երթայ։

Թ. Լալայեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւանդ Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրինքների և նոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիկական յայտնագործութիւնների, հասարակաբոս Աստեղաբաշխութեան, ֆիզիկայի, Հանքաբանութեան և Փիլիսոփայի վերայ· այլև բանախօսութիւն տուներկրի, դիտութեան արժանի բոյսերի, նոցա տեկարիութեան և օգտի վերայ, վերջապէս կենդանագործութիւնների մասին:

3. Նարդական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ղգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւններից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ձանկացողքը սոանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», въ Москвѣ, на Черногразкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ. բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Маія 18-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.